Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения молодых учёных и специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ՎԱՀՐԱՄ ԲԱԼԱՅԱՆ

ԱՐՑԱԽԱՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ 17-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՑ ՄԻՆՉԵՎ 1813թ.

Ստեփանակերտ-2013

Վահրամ Բալայան

ԱՐՑԱԽԱՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ 17-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՑ ՄԻՆՉԵՎ 1813Թ.

Ստեփանակերտ-2013

ՀՏԴ 941(479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)
Բ 208

Գիրքը հրատարակության է երաշխավորել
ԱրՊՀ գիտական խորհուրդը

Խմբագիր՝ պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Գեւորգ Ստեփանյան

Գիրքը նվիրվում է Գյուլիստանի
պայմանագրի 200-ամյակին

Բալայան Վահրամ
Բ 208 Արցախահայ ազատագրական պայքարի բովանդակությունը 17-րդ դարի երկրորդ կեսից մինչեւ 1813թ./ Վ.Բալայան. Խմբ.՝ Գ. Ստեփանյան-Ստեփանակերտ, ԱրՊՀ հրատարակչություն, 2013,- 124 էջ:

Գրքում աղբյուրագիտական հարուստ նյութի հիման վրա ներկայացված է արցախահայության ազատագրական շարժման վերընթացը 17-րդ դարի կեսից մինչև 1813 թվականը՝ Գյուլիստանի հաշտության պայմանագիրը: Մենագրության մեջ քննարկված է նաև արցախահայության պետականության հետ կապված հիմնահարցերը

ՀՏԴ 941(479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)

ISBN 978-99941-2-898-3

© Վ. Բալայան, 2013

Բովանդակություն

Ներածություն 4

ա) Ազգային ազատագրական շարժման գաղափարաբանության ծնունդը և առաջին քայլերն Արցախում 20

բ) Եսայի Հասան-Ջալալյանի «Նոր նորոգման» տեսլականի իրագործումը Արցախում 49

գ) Պետականության վերականգնման փորձերն Արցախում 18-րդ դարի երկրորդ կեսին և 19-րդ դարի սկզբներին 84

Վերջաբան 118

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ազատությունը, անկախությունը ու, առավել ևս, պետականությունը ոչ մի ժողովուրդ, որպես պարգև, չի ստանում: Այն ձեռք է բերվում ազգային համախմբվածության, ազատագրական պայքարի, քաղաքական հեռատես հաշվարկների և ճկուն դիվանագիտության շնորհիվ: Ցավալի է, որ Մեծ Հայքի մի շարք նահանգներում հարյուրամյակների ընթացքում բացառիկ այս ճշմարտությունը շատ դեպքերում անտեսվել է: Արդյունքում մենք կորցրել ենք ոչ միայն պետականությունը, այլ նաև վտանգի տակ դրել ազգային ինքնությունը:

Միջնադարյան հայկական պետական կազմավորումների մասնատվածությունը մեծ վնաս է հասցրել երկրի պաշտպանունակությանը, զրկել կարողություններն ու ուժերը համախմբելու, Հայաստան ներխուժող զավթիչներին միասնաբար դիմադրելու հնարավորությունից:

Բայց արժե ընդգծել, որ ազգային համատարած աղետի պայմաններում՝ 14-18-րդ դարերում հայոց ինքնության մշտավառ հույսի կղզյակների էին վերածվել Հայաստանի լեռնային գոտիներում՝ Սասունում, Սյունիքում, Արցախում առկա հայկական ինքնավար իշխանությունները: Նրանք էլ դարձան ազգային ազատագրական պայքարի օջախներ, հատկապես՝ 18-րդ դարի վերջերին և 19-րդ դարի սկզբներին, երբ ցարական Ռուսաստանը ձգտում էր վերջնականապես հիմնավորվել Այսրկովկասում: Այդ ծրագրի իրագործմանն իրենց ողջ կարողություններով լծվեցին նաև Արցախի մելիքական տների ներկայացուցիչները: Նրանք նպատակ ունեին քրիստոնեական Ռուսաստանի ռազմաքաղաքական հաղթանակների խորապատկերի վրա իրագործել արցախահայ պետականության վերակերտման իրենց վաղեմի ծրագիրը:

Հայ ժողովրդի ջանադիր մասնակցությամբ ռուսական զենքի հաղթանակներն ամբողջականացվեցին 1813թ. հոկտեմբերի 12-ին՝ Գյուլիստանի հաշտության պայմանագրով: Մի շարք տարածքների հետ միասին Արցախը նույնպես միացվեց Ռուսաստանին: Սակայն որոշ ժամանակ անց Արցախի հոգևոր և աշխարհիկ տերերը հասկացան, որ պետականություն ունենալու իրենց ձգտումը լիովին հակասում է ցարական արքունիքի ազգային փոքրամասնությունների նկատմամբ վարած քաղաքականությանը:

Մենագրության պատմաքննական վերլուծության համար աղբյուրագիտական հենք են հանդիսացել Մ.Մաշտոցի անվան Մատենադարանի տարբեր ֆոնդերում պահվող նյութերը, ՀՀ ազգային արխիվում (այսուհետև՝ ՀԱԱ) պահվող վավերագրերը:

Անտիպ հավաքածուներից խնդրո առարկա հարցերի լուսաբանման համար մեծ արժեք ունեն ԼՂՀ պետական արխիվում (այսուհետև՝ ԼՂՀ պետարխիվ), Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարանում, ԱրՊՀ հայագիտական կենտրոնում կուտակված փաստաթղթերը: Ուշագրավ տեղեկություններ են պարունակում երկրամասով մեկ ցրված վիմական արձանագրությունները: Պակաս կարևոր չեն Ռուսաստանի արտաքին քաղաքականության (այսուհետև՝ АВПР), Ռուսաստանի պետական ռազմապատմական (այսուհետև՝ РГВИА), սոցիալ-քաղաքական պատմության Ռուսաստանի պետական (այսուհետև՝ РГАСПИ) և Ռուսաստանի պատմության պետական (այսուհետև՝ РГИА) արխիվներում պահպանվող վավերագրերը:

Ուսումնասիրությունն ամբողջական տեսքի բերելու համար լայնորեն օգտագործվել են մի շարք երկրներում տարբեր ժամանակներում հրատարակված պարբերական մամուլում տեղ գտած նյութերը:

17-18-րդ դարերի արցախահայ ազգային ազատագրական պայքարի և պետականակերտման պատմության ուսումնասիրման համար կարևոր սկզբնաղբյուրներ են համարվում տվյալ ժամանակաշրջանում և դրանից մի քանի տասնամյակ անց ապրած ինչպես հայ, այնպես էլ օտարազգի հեղինակների աշխատությունները: Այդ շարքում առանձնահատուկ տեղ ունի Գանձասարի Եսայի Հասան-Զալալյան կաթողիկոսի երկասիրությունը[1]:

Պատմական իրադարձություններին ականատես և մասնակից կաթողիկոսն իր աշխատության մեջ համառոտ ներկայացրել է 1699-ից մինչև 1723թ. դեպքերի զարգացման ընթացքը, ինչի արդյունքում վերակերտվեց արցախահայ պետականությունը: Նույն ժամանակաշրջանին առնչվող՝ մեզ համար հետաքրքրություն ներկայացնող որոշ փաստեր ներկայացված են Ղուկաս Սեբաստացու աշխատության մեջ[2]:

1730-40-ական թվականների անցուդարձերի, Արցախի մելիքական տների, հատկապես՝ Պարսից Նադիր շահի հետ ունեցած հարաբերությունների մասին մենք տեղեկություններ ենք ստանում Աբրահամ Կրետացու և Հակոբ Շամախեցու երկերից[3] և 2010թ. Արտակ Մաղալյանի աշխատասիրությամբ հրատարակված «Նադիր շահի դարաշրջանի պատմագրական հուշարձանները» գրքից[4]:

Հայ Աղվանից եկեղեցու 18-րդ դարի պատմության ամբողջական ընթացքը, առանձնապես՝ Մայր աթոռի՝ էջ-

[1] Եսայի կաթ. Հասան-Զալալյան, Պատմութիւն կամ յիշատակ ինչ-ինչ անցից՝ դեպելոց յաշխարհին Աղուանից, Շուշի, 1839:
[2] Ընտիր պատմութիւն Դավիթ Բեգին, Վաղարշապատ, 1871:
[3] Աբրահամ Կրետացի, Պատմագրութիւն անցիցն իւրոյ և Նատր-շահին պարսից, Վաղարշապատ, 1870; Ս.Տեր-Ավետիսյան, Նադիր Շահի արշավանքները (ըստ Հակոբ Շամախեցու), Երևան, 1940:
[4] Նադիր շահի դարաշրջանի պատմագրական հուշարձանները, աշխատասիրությամբ Արտակ Մաղալյանի, Երևան, 2010:

միածնի և Գանձասարի կաթողիկոսների հարաբերությունները և այդ համապատկերի վրա Արցախում ստեղծված քաղաքական կացությունը ճշգրիտ ու հիմնավոր ներկայացնելու տեսանկյունից կարևոր փաստեր է պարունակում Ամենայն Հայոց կաթողիկոս Սիմեոն Երևանցու «Ջամբռ» աշխատությունը[1]:

18-րդ դարի Արցախի մելիքությունների, Ղարաբաղի և հարակից գավառներում ձևավորված խանությունների վրա պարսկական արշավանքների, նույն ժամանակահատվածում Ռուսաստանի Այսրկովկասում վարվող քաղաքականության, 19-րդ դարի ռուս-պարսկական պատերազմների, դրանց՝ արցախահայության մասնակցության մասին են պատմում Հակոբ սարկավագ Զաքարյան Շուշեցու երկը[2], Միրզա Յուսուֆ Ներսեսովի «Ճշմարտացի պատմություն» աշխատությունը[3]: Վերջինիս հաղորդած տեղեկությունների մի մասը եզակի է և բացակայում է այլ աղբյուրներում: Նա փորձել է դեպքերն ու փաստերը շարադրել անկողմնակալ ձևով և այդ կապակցությամբ գրել է. «... որոշեցի մի իրական, ճշգրիտ ու ճշմարտացի պատմություն գրել, որ զերծ կլիներ ստից ու ավելորդ նկարագրությունից: ...Այդ դեպքերի մեծ մասին ինքս ականատես եմ եղել, մի քանիսի մասին լսել եմ վկաներից, մի մասի վերաբերյալ էլ նյութեր եմ քաղել հայերեն և այլ հայտնի գրքերից»[4]:

18-րդ դարի վերջերի սկզբնաղբյուրներից ուշադրության արժանի է Վարդան Օձնեցու «Պատմութիւն հայոց» պատ-

[1] Սիմեոն Երևանցի, Ջամբռ, Վաղարշապատ, 1873:
[2] Մաղալյան Ա., Յակոբ Զաքարեանի «Պատմութիւն գաւառին Արցախու» աշխատութիւնը, «Հանդէս ամսօրեայ», թիւ 1-12, Վիեննա, 2006, էջ 317-394:
[3] Միրզա Յուսուֆ Ներսեսով, Ճշմարտացի պատմություն, թարգմանությունը՝ բնագրից, ներածությունը և ծանոթագրությունները Բ.Կոստիկյանի, Երևան, 2000:
[4] Նույն տեղում, էջ 34:

մագրական երկը[1]: Վ.Օձնեցին հավաստի ներկայացրել է Իրանի տիրակալ Աղա Մուհամմադ խանի ղարաբաղյան արշավանքը և պարսկական զորքերին արցախահայության ցույց տված համառ դիմադրությունը:

1721-1838թթ. պատմական իրադարձությունները ներկայացված են Առաքել վրդ. Կոստանյանցի երկհատոր «Պատմութիւն Արցախի» աշխատության մեջ[2]: Մատենադարանում պահվող այս ձեռագիրը հետաքրքիր տեղեկություններ է պարունակում մելիքների, հատկապես Դիզակ գավառի մասին, որի ծնունդն է նաև ինքը՝ աշխատանքի հեղինակը:

Իրենց աղբյուրագիտական արժեքով կարևորվում են Մադրասի հայրենասիրական խմբակի անդամներ Մովսես Բաղրամյանի «Նոր տետրակ որ կոչի յորդորակ» և Շահամիր Շահամիրյանի «Որոգայթ փառաց» աշխատությունները[3]: Իրենց ծրագրերի իրագործման ճանապարհին Մադրասի խմբակի անդամները, կարևոր տեղ տալով Արցախի մելիքներին, նրանց մասին տեղեկություններ են հավաքել և ներկայացրել վերոհիշյալ աշխատությունների մեջ:

Չնայած մելիքների ուժերը մեկտեղելու նպատակով Մովսես Բաղրամյանը ամենայն հավանականությամբ փորձել է մելիքական հինգ տների ներկայացուցիչներին, այդ թվում՝ մելիք Շահնազարին և մելիք Միրզախանին բնութագրել միայն դրական կողմերով[4], ինչը վերջիններիս պահով չէր համապատասխանում իրականությանը, այնուամենայնիվ, դա նրա աշխատանքը, որպես սկզբնաղբյուրի, չի նսեմացնում:

18-րդ դարի և 19-րդ դարի սկզբների Արցախի քաղաքական պատմության վերաբերյալ կարևոր սկզբնաղբյուր-

[1] *Մատենադարան, ձեռ. 4331:*
[2] *Մատենադարան, ձեռ. 7822, 7823:*
[3] *Նոր տետրակ որ կոչի յորդորակ, Մադրաս, 1772; Շահամիր Շահամիրյան, Որոգայթ փառաց, Թիֆլիս, 1913:*
[4] *«Նոր տետրակ», էջ 118-119:*

ներ են համարվում մանր ժամանակագրական ակնարկները[1], ուղեգրական նոթերը[2], Մատենադարանում պահվող պարսկերեն վավերագրերն ու հրովարտակները[3]:

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի վերաբերյալ կարևոր նյութեր է պարունակում «Դիւան հայոց պատմութեան» շարքը[4] և Հ.Աճառյանի, Ա.Սաֆրաստյանի ու Ռ.Տիտանյանի աշխատասիրությամբ հրատարակված ժողովածուները[5]:

Քննության ենթակա հիմնահարցերի լուսաբանման տեսանկյունից հրատապ նշանակություն ունի 1833-1838թթ. Մոսկվայի Լազարյան ճեմարանի հրատարակած «Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа» եռահատոր ժողովածուն[6]: Որոշ սկզբնաղբյուրներում պակասող նյութը լրացնելու են գալիս ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի հրատարակած «Հայ-ռուսական հարաբերությունները XVIII դարում» քառահատորյակում տեղ գտած փաստաթղթերը[7]:

[1] *Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ., կազմեց Վ.Հակոբյանը, հ. 2, Երևան, 1956:*
[2] *Հակոբյան Հ., Ուղեգրություններ, հ. 2, (1800-1820թթ.), Երևան, 1934:*
[3] *Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. հրովարտակները, պրակ III, կազմեց Ք.Կոստիկյանը, Երևան, 2005:*
[4] *Դիւան հայոց պատմութեան, գիրք Գ, Թիֆլիս, 1894, գիրք Դ, Թիֆլիս, 1899, գիրք Ը, Թիֆլիս, 1908, գիրք Թ., Թիֆլիս, 1911, Դիվան հայոց պատմութեան, Նոր շարք, գիրք առաջին, Ղուկաս Կարնեցի, հ. Ա, աշխատասիրությամբ Կարդան Գրիգորյանի, Երևան, 1984, հ. Բ, Երևան, 2003:*
[5] *Վաւերագրեր հայ-պարսկական յարաբերութեանց մասին, ընդօրինակեց, տառադարձեց և թարգմանեց Հ.Աճառեան, Երևան, 1961; Հայկական աղբյուրները Աղա Մուհամմադ խանի Անդրկովկասյան արշավանքների մասին (1795-1797թթ.), աշխատասիրությամբ Ռ.Տիտանյանի, Երևան, 1981:*
[6] *Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа, ч.I-III, Москва, 1833-1838.*
[7] *Армяно-русские отношения в XVII в., Сборник документов, ч. 1, Ереван, 1953; Армяно-русские отношения в первой трети XVIII века, Сборник документов, т. II, ч. I, Ереван, 1964, т. II, ч. II, Ереван, 1967; Армяно-русские отношения во втором тридцатилетии XVIII века, Сборник документов, т. III, Ереван, 1978; Армяно-русские отношения во второй половине XVIII века, Сборник документов, т. IV, Ереван, 1990.*

Մենագրության առանցքային շրջանի՝ 18-րդ դարի վերջերի և 19-րդ դարի սկզբների Արցախի քաղաքական կացության ուսումնասիրման տեսանկյունից կարևոր սկզբնաղբյուր է համարվում նաև Ռուսաստանի և Պարսկաստանի դիվանագիտական հարաբերությունների մասին պատմող Ռահիմ Կուբաթյանիի և Բեհրոզ Կուբաթյանիի կազմած ու Թեհրանում հրատարակված փաստաթղթերի ժողովածուն[1]:

Մելիքական շրջանի վերաբերյալ փաստագրական հարուստ նյութեր կան Ապրես Բեկնազարյանի աշխատության մեջ[2]: Մեզ հետաքրքրող որոշ հարցեր իրենց արտացոլումն են գտել վրացական սկզբնաղբյուրներում[3]:

18-րդ դարի երկրորդ կեսի և 19-րդ դարի սկզբների Ղարաբաղի պատմության առանձին հարցերին անդրադարձել են նաև մահմեդական հեղինակները՝ Միրզա Ադիգյոզալբեկը[4], Միրզա Ջամալ Ջևանշիրը[5], Ահմեդ բեկ Ջևանշիրը[6]: շիրը[6]:

Վերոնշյալ հեղինակները հանգամանալից քննարկել են Փանահ և Իբրահիմ խաների՝ Ղարաբաղում հաստատվելու շարժառիթները և այդ խորապատկերի վրա ներկայացրել Արցախի տեր մելիքների նկատմամբ նրանց սանձազերծած պատերազմները: Նրանք, անտեսելով որոշ փաստեր և պատմական հանգամանքներ, փորձել են խաներին և նրանց ընտանիքի անդամներին ներկայացնել որպես Ղարաբաղի օրինական տերեր, ինչն էլ այսօր, փաստորեն, ի

[1] *Rahim M. Qubadiyani, Behroz M. Qubadiyani, Documents of Iran and Russia, Relations from Safavid till Qajar. Tehran, 2010.*

[2] *Բեկնազարեանց Ա., Գաղտնիք Ղարաբաղի, Ս.Պետերբուրգ, 1888:*

[3] *Цагарели А., Грамоты и другие исторические документы XVIII столетия относящихся к Грузии, т. I, СПб., 1891, т. II, вып. II, СПб., 1902.*

[4] *Мирза Адигезаль-бек, Карабаг-наме, Баку, 1950.*

[5] *Мирза Джамаль Джеваншир Карабаги, История Карабага, Баку, 1959.*

[6] *Ахмедъ-бекъ Джеванширъ, О политическомъ существовании Карабагского ханства съ-1747 по 1805 годъ, Шуша, 1901.*

վնաս հայության՝ փորձում են օգտագործել Ադրբեջանի պատմաշինարարները:

18-րդ դարի երկրորդ կեսի և 19-րդ դարի սկզբների Ղարաբաղում և հարակից գավառներում տեղի ունեցած պատմական անցուդարձերը մանրամասն լուսաբանվել են ռուսական և ռուսալեզու աղբյուրներում: Հիշատակության արժանի աղբյուրագիտական և պատմագիտական ուսումնասիրություններ են համարվում Օ.Եվեցկու, Ի.Շոպենի, Պ.Բուտկովի և Կ.Եզովի հրապարակումները[1]:

Առանձնապես կարևոր են ռուս զինվորական տարեգիրներ Վ.Պոտտոյի և Ն.Դուբրովինի աշխատությունները[2], որոնցում եզակի տվյալներ կան ռուս-պարսկական պատերազմների ժամանակ Արցախում հայության սխրագործությունների մասին:

19-րդ դարի երկրորդ կեսին, հայ ազգային ազատագրական պայքարի աշխուժացման պայմաններում, մեծանում է նաև հետաքրքրությունը անցյալ ժամանակների պատմության նկատմամբ: Արցախը համարելով ազատագրական շարժումների օջախներից մեկը՝ հայ հեղինակները փորձել են մելիքական տների ներկայացուցիչների հերոսական պայքարի դրվագների լուսաբանմամբ տվյալ ժամանա-

[1] *Статистическое описание Закавказского края с присовокуплением статьи. Политическое состояние Закавказского края в исходе XVIII века и сравнение онаго с нынешним, сост. О.Евецкий, СПб., 1835; Шопен И., Исторические памятники Артмянской области в эпоху ея присоединения к Российской империи, СПб., 1852; Бутков П., Материалы для новой истории Кавказа с 1722 по 1803 года, ч. I, СПб., 1869; Эзов Г., Сношения Петра Великого с армянским народом. Документы, СПб., 1898.*

[2] *Потто В., Кавказская война, т. III, Персидская война 1826-1828, СПб., 1888; Утверждение русского владычества на Кавказе, т. I, Тифлис, 1901; Первые добровольцы Карабага в эпоху водворения русского владычества, Тифлис, 1902; Н.Дубровин, Закавказье с 1803-1806гг., СПб., 1866; История войны и владычества русских на Кавказе, т. I, СПб., 1871.*

կաշրջանի սերնդի մեջ հայրենասիրական մղումներ դաստիարակել: Նման գործ առաջինը ձեռնարկեցին Ալեքսանդր Երիցյանը[1], Ռաֆֆին[2], Ե.Լալայանը[3]:

Խնդրո առարկա հարցերի քննարկման տեսանկյունից մեզ համար առանցքային նշանակություն ունեն Լեոյի ուսումնասիրությունները[4]: Բազմավաստակ պատմաբանին հաջողվել է սկզբնաղբյուրների հիման վրա ներկայացնել մեզ հետաքրքրող ժամանակահատվածի՝ 17-րդ դարի կեսերից մինչև 20-րդ դարի սկզբների՝ իր հայրենի երկրամասի առավել բախտորոշ իրադարձությունները: Արժևորելով մեծավաստակ պատմաբանի դերը քննարկվող ժամանակաշրջանի Արցախի պատմության ստվերոտ կողմերի լուսաբանման գործում՝ նկատենք նաև, որ, որոշ հարցերի պատասխաններ փնտրելիս, համապատասխան նյութերի հավանական բացակայության պայմաններում, ոչ ճիշտ եզրակացությունների է հանգել: Այսպես, Լեոն գտնում է, որ Ղարաբաղի խաների դեմ պայքարում հայ մելիքների հերոսական ջանքերը դատապարտվեցին անհաջողության[5]: Մինչդեռ իրականում Ղարաբաղի խաները ոչ թե պատերազմը շահեցին, այլ պարզապես ճակատամարտում հաղթեցին: Խամսան երկատվեց ու թուլացավ, բայց պայքարը դադար չունեցավ: Արցախի մելիքներին, հատկապես Ձրաբերդի և

---

[1] *Ерицов А., Карабахские мелики в Грузии с 1800 по 1808г., "Кавказская старина", 1872, N2, с. 34-45.*

[2] *Ռաֆֆի, Խամսայի մելիքությունները, Երկերի ժողովածու, , հ.10, Երևան, 1964, էջ 161-383, նույնի, «Գաղտնիք Ղարաբաղի», հ.10, էջ 383-497:*

[3] *«Ազգագրական հանդես», գիրք Բ, 1897, էջ 5-244, գիրք Ե., 1899, էջ 213-269:*

[4] *Լեո, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի (1838-1913), Թիֆլիզ, 1914; Սահմանավէճեր, Աթէնք, 1990; Երեսնամեակ հայոց բարեգործական ընկերութեան Կովկասում (1881-1911), Թիֆլիս, 1911; Անցյալից: Հուշեր, թղթեր, դատումներ, Թիֆլիս, 1925; Երկերի ժողովածու, հ. 3, գիրք 2-րդ, Երևան, 1973; հ.5, Երևան, 1986:*

[5] *Լեո, հ.3, գիրք 2-րդ, էջ 268:*

Գյուլիստանի տերերին, հաջողվեց պահպանել զինական ուժն ու ժողովրդի վստահությունը և սկսած պայքարը տրամաբանական հանգրվանին հասցնել՝ ինչի արդյունքում երկրամասը միացվեց Ռուսաստանին: Հաջորդ տարիների՝ մեզ հետաքրքրող որոշ հարցեր քննության առարկա են դարձել «Նիւթեր հայ մելիքութեան մասին» մատենաշարում[1]:

Մելիքների իրավունքների, պարտականությունների, տնախական շարժման և դրան հաջորդած ազատագրական պայքարի հարցերը մեկնաբանվել են Ֆ.Պողոսյանի[2], Զ.Արզումանյանի[3], Ա.Փափազյանի[4], Բ.Բալայանի[5], Վ.Հակոբյանի[6] հոդվածներում: Նշված հեղինակները հարևանցիորեն են անդրադարձել միասնական հայկական պետականության վերականգնման գործում Արցախի մելիքների և Գանձասարի կաթողիկոսների դերակատարության հարցերին:

Արցախի մելիքությունների և Գանձասարի կաթողիկոսական աթոռի պատմության ու 18-րդ դարի ազատագրական պայքարի հոլովույթում նրանց դերակատարության վերաբերյալ փաստագրական հարուստ նյութեր են կուտակված

---

[1] *Նիւթեր հայ մելիքութեան մասին, պրակ Ա., Վաղարշապատ, 1913, պրակ Բ, էջմիածին, 1914:*

[2] *Պողոսյան Ֆ., Խամսայի մելիքների իրավունքներն ու պարտականությունները, «Բանբեր Հայաստանի արխիվների», թիվ 1, Երևան, 1966, էջ 197-208:*

[3] *Արզումանյան Զ., Սղնախների առաջացումը և ռազմաքաղաքական նշանակությունը, «Լրաբեր հաս.գիտ.», թիվ 9, 1982, էջ 77-86:*

[4] *Փափազյան Հ., Մելիք Եգանի ընդունարանի մուտքի վիմագիր արձանագրությունը, «Լրաբեր հաս.գիտ.», թիվ 5, 1985, էջ 75-78:*

[5] *Բալայան Բ., Ռազմաքաղաքական իրադրությունը Անդրկովկասում 18-րդ դարի վերջում, Երևանի և Ղարաբաղի ազատագրման զուբովյան նախագիծը «Հայկական բանակ», թիվ 4, 1995:*

[6] *Հակոբյան Վ., Քուրակչայի դաշնադրության հարցի շուրջ, «Լրաբեր հաս. գիտ» թիվ 2, 1996, էջ 98-106:*

Ա.Աբրահամյանի[1], Ա.Ռ.Հովհաննիսյանի[2], Մ.Ներսիսյանի[3], Ա.Խաչատրյանի[4], Պ.Սեյրանյանի[5] աշխատություններում: Նկատենք, որ վերոբերյալ ուսումնասիրություններում ըստ էության չեն մեկնաբանվել ցարական կառավարության տարածաշրջանային քաղաքականության հիմնական դրդապատճառներն ու նպատակները և, ըստ այդմ էլ, Արցախի ազատագրման գործում ուռճացվել է Ռուսաստանի դերակատարությունը: Այդ հարցերին իր ուսումնասիրությունների մեջ անդրադարձել է Մ.Մուրադյանը[6]:

Հայ ազգային ազատագրական պայքարի գաղափարախոսության և Արցախի մելիքների դիվանագիտական փնտրտուքների հարցերին է անդրադարձել Ա.Գ.Հովհաննիսյանը[7]: Անվանի գիտնականի որոշ ընդհանրացումներ մեզ համար անընդունելի են: Այսպես, անդրադառնալով 1672թ. ցար Ալեքսեյ Միխայլովիչին հղած Գանձասարի Պետրոս կաթողիկոսի ուղերձին՝ Ա.Հովհաննիսյանը գրել է. «... կաթողիկոսի գրությունը ավելին չէր, քան Սպահանի հայ խոջաների օգտին արված բարեխոսություն»[8]: Մինչդեռ ցարին հասցեագրված թուղթն իր խորքում քաղաքական նկատառումներ էր պարունակում: Հայ-ռուսական հարաբերությունների համատեքստում դա առաջին քաղաքական ձեռնարկն էր:

Հայ-ռուս-վրացական փոխհարաբերությունների հիմնապաստառի վրա 18-րդ դարի երկրորդ կեսի արցախահայության ազատագրական պայքարի պատմության ընդգրկուն ուսումնասիրություն է կատարել Պ.Չոբանյանը[1]: Մեր տեսադաշտից չի վրիպել նաև Ա.Մաղալյանի մենագրությունը[2]: Այն Այն կարևոր ներդրում է Արցախի մելիքական շրջանի պատմության ստվերոտ կողմերի լուսաբանման գործում: Քննարկվող ժամանակաշրջանի քաղաքական զարգացումների մասին ճիշտ պատկերացում կազմելուն նպաստել են Հ.Կարապետյանի և Մ.Թելունցի ուսումնասիրությունները[3]:

Ադրբեջանական պատմագրությունը նույնպես անդրադարձել է Հայոց արևելից նահանգների միջին, նոր և նորագույն շրջանի պատմությանն առնչվող՝ խնդրո առարկա հիմնահարցերին: Ներկայիս Ադրբեջանի հանրապետության մաս կազմող տարածքներում, 1920թ. ապրիլին խորհրդային կարգեր հաստատվելուց հետո, ադրբեջանական ազգի կազմավորմանը զուգընթաց, նոր իշխանությունների ներկայացուցիչներն ակադեմիական շրջանակներին պատվիրեցին հայ ժողովրդի էթնոպատմամշակութային ատաղձի վրա, նախանցյալ ժամանակաշրջանների իրողությունները շուռ ու մուռ տալով, «գտնել» իրենց երկրի հնագույն արմատները և ստեղծել պատմություն: Պահը շատ հարմար էր:

---

[1] *Աբրահամյան Ա., Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ ռուսական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1953:*

[2] *Иоанисян А., Россия и Армянское освободительное движение 80-х годах XVIII столетия, Ереван, 1947, его же, Иосиф Эмин, Ереван, 1989.*

[3] *Нерсисян М., Из истории русско-армянских отношений, кн. I, Ереван, 1958, его же, А.В.Суворов и русско-армянские отношения в 1770-1780-х годах, Ереван, 1981.*

[4] *Армянское войска в XVIII веке, сост. А.Н.Хачатрян, Ереван, 1968.*

[5] *Сейранян П., Карабах и Россия, страницы истории, Москва, 1997.*

[6] *Մուրադյան Մ., Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին 19-րդ դարի ռուսական պատմագիտական և հասարակական մտքի գնահատմամբ, Երևան, 1985:*

[7] *Հովհաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք երկրորդ, Երևան, 1959:*

[8] *Նույն տեղում, էջ 48:*

---

[1] *Չոբանյան Պ., Հայ-ռուս-վրացական փոխհարաբերությունները ԺԸդարի երկրորդ կեսին, Մայր Աթոռ Ս.Էջմիածին, 2006:*

[2] *Մաղալյան Ա., Արցախի մելիքությունները և մելիքական տները XVII-XIX դդ., Երևան, 2007:*

[3] *Կարապետյան Հ., Արցախահայության ազգային-ազատագրական պայքարը XVIII դարի առաջին տասնամյակներին, պ.գ.թ. գիտական աստիճանի հայցման ատենագիր, Երևան, 2012; Թելունց Մ., Հայ ազգային-ազատագրական շարժումը XVIII դարի երկրորդ կեսին և իրավաքաղաքական միտքը, Երևան, 1995:*

Ինչպես Արցախը, այնպես էլ խորհրդային Հայաստանից դուրս պատմական Հայաստանի որևէ տարածքի անցյալի ու ներկայի քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքի ուսումնասիրությունը հայ գիտնականների համար արգելված գոտի էր: Եվ այդպես Խորհրդային Ադրբեջանի «պատմաբանները», օգտվելով կուսակցական ու պետական ամենաբարձր ղեկավարության հովանավորությունից, սկսեցին կեղծել հայոց պատմությունը՝ այն հարմարեցնելով իրենց պետական շահերին: Դեռևս 1960-ական թվականներին Զիա Բունիաթովի[1] կողմից շրջանառության մեջ դրվեց այսպես կոչված, աղվանական տեսությունը, որն էլ հետագայում առավել «զարգացվեց» նրա աշակերտների[2] կողմից: Այդ շինծու տեսությունը Ադրբեջանի կուսակցական և պետական մարմինները սկսեցին հրամցնել արցախահայությանը: 1966թ. մարտի 20-ին Ստեփանակերտում՝ կուսակցական ակտիվի ժողովում, Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Վելի Ախունդովը հայտարարել է, որ հանրապետության պատմաբանները հավաստի տվյալներով հաստատել են, որ Ղարաբաղում ապրող հայերի և ադրբեջանցիների նախնիները միևնույն արմատից են սերվել[3]: «Աղվանական տեսությունը» ավելի հիմնավոր դարձնելու նպատակով Ադրբեջանի պատմաբանները սկսեցին հավատաքննության ենթարկել ինչպես հայ, այնպես էլ այլ ազգի, մասնավորապես՝ պարսիկ մատենագիրների տեղեկությունները՝ սկզբնաղբյուրներից ջնջելով հայ էթնանվանումը:

---

[1] *Буниятов З., Азербайджан в VII – IX вв., Баку, 1965.*

[2] *Геюшев Р., Христянство в Кавказской Албании, Баку, 1984, Мамедова Ф., Политическая история и историческая география Кавказской Албании (IIIв. до н.э. – VIII в. н.э.), Баку 1986, Сумбатзаде А., Азербайджанцы - этногенез и формирование народа, Баку, 1990, Ахундов Д., Архитектура древнего и средневекового Азербайджана, Баку, 1986.*

[3] *ԱրՊՀ հայագիտական կենտրոն, Ս.Խանյան, ԱրՊՀ պատմություն, էջ 21:*

Այդ գործում էական հաջողություններ չունենալով, 1988 թվականից սկսած, Ադրբեջանի պատմաբանները նոր տեսակետ մոգոնեցին, ըստ որի հայերը Արցախ-Ղարաբաղում հայտնվել են միայն Թուրքմենչայի պայմանագրից հետո[1]: Ավելին, նրանք աշխարհին փորձում էին ներկայացնել իրենց «մեծահոգությունը», որ հայերին իրենց հողում հյուրընկալել են, իսկ վերջիններս երախտամոռ են գտնվել: Սակայն նկատենք, որ նույն Բաքվում, 1965թ. Գ.Աբդուլաևի հրատարակած մենագրության[2] մեջ, իրենց իսկ հայրենակիցը սկզբնաղբյուրների հիման վրա գրել է. «Ղարաբաղի մարզը ընդգրկում էր... հինգ հայկական մելիքություններ, որի տերերը Նադիր շահի ժամանակ իրենց տարածքներում օգտվում էին իշխաններին հատուկ բոլոր արտոնություններից և ունեին սեփական զինված ուժեր...: Փանահ Ալին իրեն խան հռչակելով (1748-1760թթ.), ձգտել է մելիքներին իրեն ենթարկեցնել՝ օգտվելով ստոր մեթոդներից և հնարքներից»[3]: Ավելին, 1823թ. ռուսական հարկացուցակներով Ղարաբաղի հինգ մահալների ազգաբնակչության 96,67 տոկոսը հայեր էին, իսկ 3,33 տոկոսը՝ թաթարներ[4]:

Հետխորհրդային շրջանի Ադրբեջանի ղեկավարությունը, ավելի հեռուն գնալով, իրենց գիտնականներին հորդորում է

---

[1] *Алиев И., Нагорный Карабах: История. Факты. События, Баку, 1989; Исмаилзаде Д., Население городов Закавказского края в XIX начале XXв., Москва, 1991; Мамедов С., Азербайджан по источникам XV- первой половине XVIIIвв., Баку, 1993; "Карабах", Баку, 2004; Мамедиаров И., Мусаев Т., Армяно-азербайджанский конфликт: История, право, посредничество, Тула, 2007; "Карабах вчера, сегодня и завтра", материалы научно-практических конференций, вторая часть, Баку, 2009.*

[2] *Абдуллаев Г., Азербайджан в XVIII веке и взамоотношения его с Россией, Баку, 1965.*

[3] *Абдуллаев Г., նշվ. աշխ., էջ 90-92:*

[4] *The 1823 Russian survey of the Karabagh province: A Primary Source on the Demography and Economy of Karabagh in the Early 19th Century, Annoted translation from the Original 1866 edition with an introduction and Commentary by George A.Bournourtian, MAZDA PUBLISHERS. Ins Costa Mesa, California 2012, p. 439.*

հիմնավորել, որ ոչ միայն ԼՂՀ-ն, այլ նաև ՀՀ-ն կազմավորվել են ադրբեջանական հողերի վրա: Այդ գործում առավել ջանադիր էր Ադրբեջանի նախկին նախագահ Հեյդար Ալիևը[1]: Նույն թափով այդ կեղծարարությունը շարունակում է Իլհամ Ալիևը, որը 2005թ. դեկտեմբերին Ադրբեջանի գիտությունների ակադեմիայում արտասանած ճառում[2], հավաստիացրել է, որ պատրաստ է վճարել ցանկացած գումար, միայն թե իրենց պատմաբաններն ապացուցեն, որ Լեռնային Ղարաբաղի հայերը եկվոր են: Պատմության կեղծարարները, ոգևորվելով իշխանությունների բացահայտ աջակցությունից, մի աննախադեպ արշավ սկսեցին՝ ծուռ հայելու մեջ ներկայացնելով Հայոց արևելից նահանգների հեռավոր անցյալի իրողությունները:

Արցախի 18-19-րդ դարերի պատմական իրադարձությունների վերաբերյալ Բաքվում հրատարակվել են մի շարք աշխատություններ[3]: Եթե մինչև արցախյան շարժումն ադրբեջանական պատմագրության մեջ ակնարկային ձևով էր խոսվում Արցախի մելիքների հայկական ծագման մասին, ապա վերոնշյալ ուսումնասիրություններում դրանք իսպառ բացակայում են:

Արցախի մելիքական շրջանի պատմությունը ստվերի տակ թողնելու, այդ խորապատկերի վրա Ղարաբաղի խանության դերը բարձրացնելու ու Հայոց արևելից նահանգները

[1] *"Бакинский рабочий", 23 декабря, 1997, 23 января, 1998, 31 марта, 1998.*

[2] *Բալայան Վ., Արցախի խորհրդային և ազատագրական պայքարի տարիների պատմության արտացոլումը պատմագրության մեջ: «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 2008, թիվ 2, էջ 64:*

[3] *Описание Карабахской правинции, составленное в 1823 году. Подготовки ко 2-ому переизданию и автор предисловия З.Гаджиева, Баку, 2003; Амирбекова Н., Вопросы военной истории Азербайджана в период ханств. Баку, 2004, Гаджиева С., Азербайджан во внешней политике правительства Екатерины II. Баку 2004; Гаджиева З., Карабахское ханства: Социально экономические отношения и государственные устройства, Баку, 2008. Kuzaril T.., Qarabag: Qarabag tarixinin saxtalasdirlimasi aleyhina. Baki, 2002.*

դեռևս աշխարհի քաղաքական քարտեզի վրա չուրվագծված Ադրբեջանի անտրոհելի մաս ներկայացնելու մարմաջով տարված Քուրակչայի պայմանագրի 200-ամյակի կապակցությամբ, Բաքվում 2005 թվականին կազմակերպվել է գիտաժողով[1], որտեղ հարևան հանրապետության պատմաշինարարներ Ի.Ալիևը, Ք.Մամեդովը, Գ.Մամեդովան, Ֆ.Մամեդովան, Վ.Փիրիևը, հարազատ մնալով փաստերն աղավաղելու և նենգափոխելու իրենց որդեգրած գործելաոճին, Արցախի պատմությունը փորձեցին հարմարեցնել Ադրբեջանի պետական շահերին: Եթե խորհրդային ժամանակահատվածում Ադրբեջանի պաշտոնական շրջանակները և պատմաբանները հիմնականում ձգտում էին «գիտական» տեսանկյունից յուրացնել Հայոց արևելից նահանգների էթնոմշակութային տարածքը, ապա ներկա ժամանակներում դրան գումարվեց ևս երկու գերխնդիր.

ա) սեփական ժողովրդին, մասնավորապես՝ երիտասարդությանը մոլորության մեջ պահելով՝ նրանց մեջ սերմանել հակահայկական տրամադրություններ և, անհրաժեշտության դեպքում, վերջիններիս մղել արկածախնդրության,

բ) զոհի կերպարանքով ներկայանելով համաշխարհային հանրությանը՝ փորձել մեծ տերություններին տրամադրել ՀՀ-ի և ԼՂՀ-ի դեմ, ըստ այդմ՝ ղարաբաղյան թնջուկը լուծել իրենց օգտին:

Այսպիսով, վերոնշյալ ձեռագրերից արխիվային փաստաթղթերից, բազմազան այլ սկզբնաղբյուրներից, մամուլից, մենագրությունը առընչվող հրատարակված գրականությունից քաղված փաստերն ու մեկնաբանությունները նպաստել են մենագրության առանցքային մասերի գիտական ընդհանրացումներին:

[1] *"Гарабаг Кюрекчайский договор -200", Сборник статей, Баку, 2005.*

ա) Ազգային ազատագրական շարժման գաղափարաբանության ծնունդը և առաջին քայլերը Արցախում

16-17-րդ դարերում հայ ժողովրդի վիճակն ավելի էր ծանրանում: Պարբերաբար կրկնվող արշավանքները, կոտորածն ու գերեվարությունը և դրանց հաջորդող սովն ու մահտարաժամն ամայացնում էին Հայաստանի քաղաքներն ու գյուղերը, ոչնչացնում արտադրական ուժերը:

16-րդ դարի թուրք պատմագիր Փեչևին, որպես ականատես, նկարագրում է այն ավերածությունները, որ կատարեց օսմանյան բանակը Երևանի նահանգում, Նախիջևանում, Սյունիքում և Ղարաբաղում: «Նրանք ..., - գրում է Փեչևին, - այնուհետև մտան Ղարաբաղ կոչված երկիրը, որն իր լեռներով և հարուստ այգիներով շատ հայտնի մի գավառ է Աջեմի (Պարսկաստան – Վ.Բ.) երկրում: Անսպասելի կերպով երկիրը մի այնպիսի փոշով ծածկվեց, որ մարդը մարդուց չէր կարելի ջոկել, լուսավոր ցերեկը մութ գիշերվա վերածվեց: Այս գավառի բնակչությունը այնպես էր ցրվել ու ոչնչացվել, որ մարդու հետք անգամ չերևաց: Սակայն գտնվեցին որոշ տեղերում պահված և քարայրներում թաքցված գանձեր ու զանազան ապրանքներ: Բանակն անսահման հարստություն ու ավար ձեռք բերեց, իսկ հարստությունների մի մասը, որ տանելու հնարավորություն չկար, կրակ տվին ու այրեցին»[1]:

Հայ պատմիչն էլ, ականատեսի վկայությամբ, հավելում է, «Մարդիկ սնունդ հայթայթելիս այլևս չէին տարբերվում գազաններից: Մարդիկ ուտում էին ինչ պատահեր, երբեմն էլ հարձակվում էին անպաշտպան անասունների վրա, միսը հում-հում ուտում: Իսկ ուժասպառ եղածները փողոցներից

[1] *Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մասին, Մաս Ա., Երևան, 1961, էջ 33:*

հավաքում էին ոսկորները և բերաններն առնելով մռնչում էին: Հին տրեխները և կաշե փոկերը եփում ուտում էին: Գարնան բացվելուն պես սևացած մաշկով մարդկանց հոտը թափառում էր դաշտերում՝ սնվելով վայրի խոտաբույսերով: Մարդկանց մեծ մասը ուռչելով մահանում էր: Տասնյակ դիակներ անթաղ մնացին: Այս կամ այն գյուղերում քաղցից խելագար մարդիկ իրար միս էին ուտում: Անթաղ դիակները ուտելով՝ վայրենացել էին շները: Գայլերի ոհմակները, մտնելով գյուղերը, խժռում էին անպաշտպան մարդկանց»[1]:

Հայ հանրության առաջադեմ գործիչները, մտահոգ երկրի ճակատագրով, ուղիներ էին փնտրում՝ ազատագրելու հայրենիքը:

Քննարկվող ժամանակաշրջանի տարածաշրջանային զարգացումները նպաստավոր էին հայ գործիչների ազատագրական ծրագրերի իրագործման համար:

15-րդ դարի երկրորդ կեսին և 16-րդ դարի սկզբներին, Մոսկովյան պետության հզորացմանը զուգընթաց, ցարական կառավարությունը սկսեց հետաքրքրություն ցուցաբերել Այսրկովկասի նկատմամբ: Ռուսաստանը, լինելով քրիստոնյա երկիր, շահագրգռվածություն էր հանդես բերում Այսրկովկասի քրիստոնյա ժողովուրդների ազատագրման գործում:

Իհարկե, ցարիզմն իրականում հետամուտ է եղել իր ռազմաքաղաքական նպատակներին: Այս պարագայում էլ հայ ժողովրդի քաղաքական նկրտումները համապատասխանում էին Ռուսաստանի շահերին, և ազատագրման հույսը մարմին էր առնում, դառնում շոշափելի: Սակայն այդ բաղձանքներն ու տրամադրությունները քաղաքական անշեղ ճանապարհի վրա դնելու, երկու ժողովուրդների համագործակցությունը դիվանագիտական կանոնավոր հունի մեջ

[1] *Դավրիժեցի Ա., Պատմություն, Երևան, 1988, էջ 81-82:*

առնելու համար ռուսական արքունիքի հետ քաղաքական լեզվով խոսող լիազոր վարչական մարմին էր պետք:

Բուն մայր երկրում չկար քաղաքական որևէ գործոն կամ սոցիալական ներքին որևէ ուժ, որը զորավիգ լիներ կամ ձգտում ու հնարավորություն ունենար օգնելու, միավորելու հայ ժողովրդի ջանքերը, նպատակ ու ընթացք տալու ազատագրական մղումներին: Նման պայմաններում ռուսական արքունիքի հետ հարաբերությունները վարում էին Արցախի մելիքները, որոնց մոտ վառ էին մնացել հայկական պետության գաղափարները, և «գլխավորապես Գանձասարի կաթողիկոսները, որոնք բավականին անկախ էին պարսկական իշխանություններից»[1]: «Արցախի հայ ֆեոդալները,- կարդում ենք 1532թ. հիշատակարաններից մեկում,- համարվում են մեր ժողովրդի և ամբողջ քրիստոնյաների պարծանքը»[2]:

Ակնհայտ փաստ է, որ 17-րդ դարի վերջերից հայ ժողովրդի ազատագրական շարժումը թևակոխել էր նոր փուլ: Հատկանշական է այն իրողությունը, որ այս անգամ շարժման իսկական կենտրոն դարձավ Գանձասարը: Այդ առթիվ շատ բնորոշ է արտահայտվել Լեոն՝ գրելով, որ «Գանձասարը ղեկավարում էր, ներշնչում էր, բանակցություններ էր վարում ռուսաց կառավարության հետ: ...Գանձասարի մեծ ջանքերով էր, որ կազմակերպուեց հայ զինուորութիւն Ղարաբաղում, Եսայի և Յովհաննէս կաթողիկոսները շարժման հոգին էին ... և ահա մի հոգևորականութիւն, որ ձուլուած էր իր ժողովրդի հետ, որ տանում էր նրան դեպի կռիւ, դեպի տանջանքներ և հերոսութիւններ՝ լեռնային ոգին, լեռնային կեանքի ազատութիւն սիրելու և պահպանելու համար»[3]:

---

[1] *Эзов Г., նշվ.աշխ., էջ 12:*
[2] *Зулалян М., Армения в первой половине XVIв., Москва, 1971, с. 18.*
[3] *Լեո, Պատմութիւն Ղարաբաղի հայոց հոգեւոր թեմական դպրոցի, էջ 56:*

Արցախի մելիքական տների ներկայացուցիչների մեծ մասը, Գանձասարի կաթողիկոսներին թև ու թիկունք դառնալով, 17-րդ դարի վերջերից մի աննախադեպ և աննահանջ պայքար սկսեցին հայկական թագավորության վերականգնման համար:

17-րդ դարի վերջերից մինչև 1813 թվականը՝ Գյուլիստանի հաշտության պայմանագրի կնքումը, այդ բեռը տարբեր ժամանակահատվածներում և այլազան իրավիճակներում իրենց ուսերին կրեցին Գյուլիստանի Մելիք-Բեգլարյանների, Ձրաբերդի Մելիք-Իսրայելյանների, Խաչենի Հասան-Ջալալյանների, Վարանդայի Մելիք-Շահնազարյանների, Դիզակի Մելիք-Եգանյան-Ավանյանների ներկայացուցիչները:

17-րդ դարի 70-ական թվականներին Արցախում մեկնարկած ազատագրական շարժման համար կային որոշակի բարենպաստ պայմաններ: Անդրադառնալով դրանից երեք տասնամյակ առաջ տեղի ունեցած պատմական իրադարձություններին՝ մեզ համար պարզ կդառնան այդ վերընթացին լիցք տվող հանգամանքները:

Չնայած շահ Աբասը և նրա հաջորդները հայության նկատմամբ կատարեցին դաժանություններ, բայց և այնպես Պարսկաստանի խորամանկ տիրակալները, լավ ծանոթ լինելով հայ զինվորականության քաջությանն ու ազատասիրական ոգուն, փորձեցին Արցախի մելիքական ուժն օգտագործել Թուրքիայի ծավալապաշտության դեմ: Այդ նպատակով նրանք խրախուսեցին մելիքական կարգը, օրինականացրեցին նրանց իրավունքներն ու պարտականությունները: Ռազմական գործողությունների ժամանակ աչքի ընկած մելիքներին շահերը գյուղեր էին նվիրում: Նրանց իրավունք էր վերապահվում պահել մշտական զորք, իրականացնել դատական գործառույթներ: Մելիքները պարտա-

վոր էին պաշտպանել երկրի սահմանները, շահին հարկեր վճարել, մասնակցել նրա արշավանքներին[1]:

Արցախի մելիքների մի մասն, իրենց անձնական կապերի շնորհիվ մեծ հեղինակություն ունեին պարսից արքունիքում: Չնայած Արցախի մելիքությունները պարսից տերության կազմում օգտվում էին միայն ներքին ինքնավար կարգավիճակից, բայց և այնպես հայկական այդ մանր իշխանությունների տերերի ճկունության, քաջության և անձնական բազմաթիվ այլ բարեմասնությունների շնորհիվ դարձան հայության ինքնության պահպանման երաշխավորներ, նպաստեցին հայկական ինքնատիպ մշակույթի զարգացմանը և հանդիսացան ազատագրական պայքարի գաղափարախոսներ ու առաջնորդներ:

Օգտվելով պարսից շահերի բարյացակամ վերաբերմունքից՝ Արցախի մելիքները ժամանակի ընթացքում կառուցել են տասնյակ ամրոցներ, որոնք բազմիցս դիմակայել են ահարկու թշնամու գերազանցող ուժերին:

Չնայած դժնդակ ժամանակներին՝ Արցախի մելիքական տները, ապավինած լեռնաստանի անմատչելի բարձունքներին, շարունակեցին պահպանել հայկական պետականության բեկորները: Լեռն, քննության ենթարկելով եղած աղբյուրները, իրավացիորեն նկատել է. «Իբրև խոշոր կալվածատերեր և արևելյան վասալներ՝ մելիքները մեծ հարստություն էին դիզում և ապրում էին ճոխության մեջ, հետևելով, իհարկե, պարսկական ճաշակին և բարձրաստիճան ավագանու նիստ ու կացին, բայց մնալով միաժամանակ

[1] *Մելիքների իրավունքների և պարտականությունների մանրամասները տես՝ Լեո, Երկերի ժողովածու, հ. 3, գիրք 2-րդ; Ուլուբաբյան Բ., Խաչենի իշխանությունը 10-16-րդ դարերում, Երևան, 1975; Արցախի պատմություն: Պողոսյան Ֆ., Խամսայի մելիքների իրավունքներն ու պարտականությունները, «ԲՀԱ», 1966, թիվ 1; Բալայան Վ., Արցախի պատմություն, Երևան, 2002; Մաղալյան Ա., Արցախի մելիքությունները և մելիքական տները XVII-XIX դարերում:*

կատարյալ ժողովրդական մարդիկ, ժողովրդի մեջ ապրող և ժողովրդի հետ շփվող՝ առօրյա կյանքի բոլոր մանրամասնությունների մեջ»[1]:

Արցախում քննարկվող ժամանակաշրջանում դեռևս պահպանվում էին վաղնջական ժամանակներից մնացած համայնավարական որոշ սկզբունքներ, ինչի արդյունքում իշխող մելիքական դասի ներկայացուցիչները չէին կտրել կապը ազատության համար մարտնչող ժողովրդական մասսաների հետ:

Փույթ չէ, որ Արցախի մելիքներն իրենց տիրույթներում ունեին անսահմանափակ իշխանություն: Միջնադարյան խավարի ու հետամնացության պայմաններում լեռնաստանում գործում էին նաև ժողովրդավարական որոշ սկզբունքներ, որոնք հարիր են ժամանակակից քաղաքակիրթ աշխարհին, մասնավորապես՝ եվրոպականին: Այսպես, մելիքներին սովորաբար փոխարինում էր նրանց ավագ որդին: Սակայն նրանք իրենց իրավունքներն ու պարտականություններն ստանձնում էին ժողովրդի համախոսական-համաձայնությունից հետո: Ահա Արցախում ժողովրդի և իշխանության այս միասնությունն էլ դարձավ ազգային ինքնության պահպանման հիմնական գրավականը: Եվ այդ միասնական կենարար ուժը հզոր ազդակ հանդիսացավ երկրի ազատագրման և պետականության վերակերտման գործին: Համաժողովրդական պայքարի բովում Արցախի լեռներում հղացավ միասնական հայրենիքի՝ Մեծ Հայաստանի ազատագրության գաղափարը:

Մելիքական շրջանում Արցախում գործող երկրի կառավարման համակարգում արմատավորված ժողովրդավարական սկզբունքները տվյալ ժամանակաշրջանի չափորոշիչների համատեքստում, այնքան տպավորիչ էին, որ իր

[1] *Լեո, հ.3, գիրք 2-րդ, էջ 23:*

հայրենիքի՝ անգլիական հասարակության զարգացման նրբերանգներին քաջածանոթ գրող-ճանապարհորդ Ջոնաս Հանվեյը, հանձին այդ լեռնաստանի իշխանությունների, տեսել է հանրապետությանը հարիր մի բան[1]:

Բնականաբար, արցախահայության մոտ արմատավորված ժողովրդավարական պետականամետ գաղափարները 18-րդ դարի դեպքերի զարգացման արդյունք չէին: Դրանք ավելի խորը արմատներ ունեին և գալիս էին դարերի խորքից: Պարզապես այն 18-րդ դարում նոր որակ ստացավ:

Հայտնի է, որ 18-րդ դարի իրողություններում Գյուլիստանի, Զրաբերդի, Վարանդայի և Դիզակի մելիքական տների ներկայացուցիչներին տեղական ծագում չի վերագրվում[2]: Այնուհանդերձ՝ նրանք, հաստատվելով այդ գավառներում, դարձան երկրամասում գործող լավագույն ավանդույթների շարունակողն ու կրողը:

Չնայած Արցախի մելիքություններից ամեն մեկն իր գավառի սահմաններում ուներ առանձին իրավաքաղաքական սուբյեկտի կարգավիճակ, այնուամենայնիվ, չգրված օրենքի ուժով միմյանց նկատմամբ նրանք ունեին որոշակի պարտականություններ: Եղած իշխանական գերդաստաններից առավել աչքի ընկած ներկայացուցիչներից մեկը

[1] *Jonas Hanway, A Historical Account of the British trade over the Caspian tea with the Revolutions of Persia, London, 1754, vol. III, part VIII, p. 252. Լինելով Անգլիայի ծավալապաշտության ջատագովներից մեկը Ջոնաս Հանվեյը թշնամաբար էր լցված այն ուժերի նկատմամբ, որոնք կանգնած էին այդ ճանապարհին, մասնավորապես խոսքը վերաբերում է հայ վաճառականներին, որոնք ազատ մրցակցության պայմաններում ասիական և հնդկական շուկաներից դուրս էին մղում անգլիացիներին: Բայց դա չխանգարեց, որ նա անկողմնակալ գնահատական տա տվյալ ժամանակաշրջանի Արցախի հասարակական-քաղաքական զարգացումներին:*

[2] *Ջալալեանց Ս., Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, հ. Ա, հ. Բ: Միրզա Յուսուֆ Ներսեսով, Ճշմարտացի պատմություն; Ռաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 10; Լեո, Երկերի ժողովածու, հ.3, գիրք 2-րդ; Տեր-Մկրտչեան Կ., Դօփեանք եւ Մելիք-Շահնազարեանք, «Նիւթեր հայ մելիքութեան մասին», պրակ Բ, էջմիածին, 1914:*

համակարգողի դեր էր կատարում՝ հավասարաչափ ներկայացնելով բոլորի շահերը: Պատերազմի, խաղաղության և բախտորոշ այլ երևույթների քննության ժամանակ վերջնական որոշումը կայացվում էր մելիքների խորհրդաժողովում: Միջնադարի պատմական անցքերում, աղբյուրների վկայությամբ, մելիքների մեջ «ավագի» պարտականությունները կատարում էին Գեղարքունիքի տեր Մելիք-Շահնազար Ա-ն, Քաշաթաղի Մելիք-Հայկազը, իսկ Խամսայի շրջանում՝ Դիզակի Մելիք-Եգանը:

17-րդ դարի երկրորդ կեսից սկսած՝ սուգերենության ինստիտուտի մեջ որակական փոփոխություն կատարվեց: Այդ ժամանակ դա հիմնականում պատկանում էր Գանձասարի կաթողիկոսներին:

Ըստ էության՝ 17-րդ դարի երկրորդ կեսից մինչև 1813 թվականը՝ ռուսական գերիշխանության ընդունումը, հանձին Գանձասարի կաթողիկոսության, Արցախն իրենից ներկայացնում էր որպես մի կրոնապետություն: Հասան-Ջալալյան մեծանուն տոհմը 13-րդ դարից սկսած վայրիվերումներով գլխավորում էր արցախահայության ազատագրական պայքարն ու պետականակերտման գործընթացը:

Գանձասարի դերն Արցախի հասարակական-քաղաքական կյանքի կազմակերպման և ազգային ազատագրական պայքարին նոր որակ հաղորդելու տեսանկյունից ավելի էր կարևորվում, որովհետև Հասան-Ջալալյան տոհմի ձեռքին կենտրոնացված էր Խաչենի՝ ինչպես աշխարհիկ, այնպես էլ՝ հոգևոր իշխանությունը: Հայկական պետականության պատմության մեջ կառավարման մոդելի այս ձևաչափը թույլ էր տալիս ներքին կյանքում առավել մոտ լինել ժողովրդին, իսկ արտաքին ճակատում՝ վարել հավասարակշռված ճկուն քաղաքականություն: Այս նրբություններին քաջածանոթ Լեոն գրել է. «Միայն Գանձասարի աթոռն էր, որ մարմ-

նացնում էր երկրի նահապետական-աստվածապետական կառավարության հնագույն ձևը: Իշխանական գավազանը և կաթողիկոսական խույրը հաճախ միանում էին միևնույն տոհմի ներկայացուցչի ձեռքում՝ երկրի ճակատագիրը տնօրինելու համար»[1]:

Հասան-Ջալալյանները, թերևս, հայ իշխանական տների շարքում այն եզակի ներկայացուցիչներն էին, որոնք ունեցած իրավասությունների մի մասը, գիտակցաբար պատվիրակելով նույն տոհմի հոգևոր դասին, փորձում էին իրենց ազդեցության ուղեծրում պահել Գանձասարի հովանու տակ գտնվող ոչ միայն բուն Խաչենի, այլև Կուր-արաքսյան միջագետքի և անդրկուրյան աստվածապաշտ հայ հանրությանը: Այդ նպատակով Հասան-Ջալալյաններն իրենց զավակների մի մասի համար հոգևոր պատշաճ կրթություն էին ապահովում, իսկ Գանձասարի վանքին նվիրաբերում գյուղեր, կալվածքներ:

Գանձասարը, հանձին նրա հայրենապաշտ հոգևորականության, XVIII դարի վերջերին դարձավ վաղ և միջին միջնադարում Հայոց արևելից նահանգներում գոյություն ունեցած թագավորությունների արժանի ժառանգորդը: Նրանք սկսեցին արտահայտել Արցախի ինչպես մելիքական տների, այնպես էլ՝ հասարակ ժողովրդի շահերը:

Գանձասարի հովանու տակ գտնվող ժողովուրդն իր հերթին Հասան-Ջալալյան կաթողիկոսներին ընկալում էր ոչ միայն որպես հոգևոր առաջնորդների, հովվապետերի, այլև նրանց մեջ տեսնում էր երբեմնի գոյություն ունեցած հայկական հզոր պետականության գաղափարախոսների և դրան հասնելու առաջնորդների:

Գանձասարի կաթողիկոսների ընտրման ընթացակարգն իր մեջ նույնպես պարունակում էր ժողովրդավարական

[1] *Լեո, հ.3, գիրք 2-րդ, էջ 15:*

սկզբունքներ: Այսպես, Գանձասարի Պետրոս կաթողիկոսի իրավունքները հաստատող Շահ Աբաս Բ-ի 1663 թվականի հրամանագրի մեջ ասված է. «Պետրոս կաթողիկոսը ներկայացրեց Ղարաբաղի հայերի մի խմբի ձեռքով գրված ու կնքված մի նոտարական փաստաթուղթ՝ հաստատված Ղարաբաղի բեկլարբեկի կողմից այն մասին, որ Գրիգոր կաթողիկոսը մահացել է և Ղարաբաղի բնակչությունը, մելիքները, գեղջավագներն ու քյադխուդաները իրենց համաձայնությունն են տվել Պետրոսի կաթողիկոսությանը: Մենք այն նրան շնորհեցինք ու կարգադրեցինք, որ հիշյալ հայ ժողովուրդը նրան իր կաթողիկոս ու առաջնորդ ճանաչի ...»[1]:

Պետրոս կաթողիկոսին հաջորդած Գանձասարի Երեմիա կաթողիկոսի կաթողիկոսական իրավունքները հաստատող շահ Հյուսեինի 1699/1700թ. հրովարտակում նույնպես խոսվում է ժողովրդավարական այն սկզբունքների մասին, որոնք արմատավորված էին արցախահայ իրականության մեջ: «... Օրերս կարգակիցների մեջ լավագույն Գանձակի, Ղարաբաղի ու Շիրվանի հայերի Երեմիա կաթողիկոսը տեղեկացրեց,- ասված է հրովարտակում,- որ այդ մահալների հայերի կաթողիկոսությունը, ինչպես որ իր նախնիների վերաբերությամբ էր այդ արվել, այնպես էլ դրախտաբնակ արքայի հրամանագրով իրեն է շնորհվել, որը սակայն, Մեր արքայական բարեբախտ Մեծության ստորագրությամբ չէր հաստատվել: Այդ դիրքն իր համապատասխանության մասին մի համախոսական ներկայացրեց՝ գրված Ղարաբաղի մահալների մի խումբ հայ բնակիչների կողմից և հաստատված այնտեղի բարձրաստիճան բեկլարբեկի ու շեյխ-ուլ-իսլամի կնիքներով, ըստ որի վերոհիշյալ ռայաթները շատ

[1] *Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թ. 2ա, վավ. 58:*
Մատենադարանի պարսկերեն վավերագրեր. հրովարտակներ /1652-1731/, պրակ 3-րդ, էջ 50:

գոհ են նրա հաճելի վարվելակերպից և խնդրեց արքայական ստորագրությունը»[1]: Հրովարտակում մատնանշված համախոսականը պահպանվում է Մատենադարանի կաթողիկոսական դիվանում[2]:

Եղած աղբյուրների քննությունից կարելի է եզրակացնել, որ Գանձասարի կաթողիկոսների հաստատման հարցում շահական հրովարտակներն ավելի շատ ձևական նշանակություն ունեին: Պարզապես դա շահական իշխանության քմահաճ և ինչ-որ տեղ, «տիրական» վերաբերմունքի արտահայտություն էր, գոյություն ունեցած աստիճանակարգի պահպանման ձև: Իրականում Գանձասարի կաթողիկոսները, չսպասելով շահական հրովարտակին, անցնում էին իրենց պարտականությունների կատարմանը՝ մելիքների և ժողովրդի համապատասխան «քվեն» ստանալուց անմիջապես հետո: Այսպես, շահ Աբաս Բ-ի 1663 թվականի հրամանագրով հաստատվում են Պետրոս կաթողիկոսի իրավունքները: Մինչդեռ նա այդ գործառույթն իրականացնում էր 1653 թվականից[3]: Նույնը կատարվել է նաև Երեմիա կաթողիկոսի պարագայում:

Փաստորեն Գանձասարի կաթողիկոսները, իրենց թիկունքում ունենալով Արցախի մելիքների և ժողովրդի վստահության մեծ պաշարը, ձեռնամուխ եղան հայկական թագավորության վերակերտման գաղափարի իրագործմանը: Նկատենք նաև, որ քննարկվող ժամանակահատվածում իր պատմական առաքելությունը տրամաբանական ավարտին հասցնելու վճռականությամբ տոգորված ժողովրդի առկայությունն Արցախում նկատելի է դառնում:

---

[1] *Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թ. 2բ, վավ. 133ա: Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ 3-րդ, էջ 142:*

[2] *Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թ. 240, վավ. 2:*

[3] *Մ.արքեպիսկոպոս Սմբատեանց, Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանացն Սաղիանի, Տփխիս, 1896, էջ 237:*

Համաժողովրդական պայքարի գլուխ անցնելով՝ Արցախի մելիքներն ու Գանձասարի կաթողիկոսները, երկրի ազատագրության հույսը կապելով սեփական ներուժի հետ, չանտեսեցին նաև հավանական դաշնակիցների որոնման հնարավորությունը:

Հետաքրքիր է նաև այն փաստը, որ, ի տարբերություն Հայաստանի մյուս նահանգների գործիչների, Ղարաբաղի աշխարհիկ և հոգևոր տերերն ի սկզբանե իրենց երկրի ազատագրության գործը կապեցին ոչ թե Եվրոպայի, այլ Ռուսաստանի հետ: Դա բացատրվում է հետևյալ պատճառներով.

1. հայրենի երկրի ճակատագրով մտահոգ Արցախի մելիքներն ու Գանձասարի կաթողիկոսները, ուշի-ուշով հետևելով Հռոմի պապի և եվրոպական միապետների հետ արևմտահայ գործիչների ու էջմիածնի կաթողիկոսների շուրջ երեքդարյա անպտուղ բանակցություններին, համոզվեցին, որ մեծ տերությունները լիովին հակված էին դեպի Պարսկաստանը և, հատկապես՝ Թուրքիան: Հետագա դարերի պատմական իրադարձությունները դարձան այդ ամենի առհավատչյան:

2. 17-րդ դարի երկրորդ կեսից սկսած՝ Ռուսաստանը ոչ միայն դուրս եկավ միջազգային ասպարեզ, այլև դարձավ տարածաշրջանային հավակնոտ ծրագրերի հեղինակ: Տվյալ ժամանակահատվածում Ռուսաստանը, ընդարձակելով իր պետական սահմանները, մոտեցել էր Այսրկովկասին և ձգտում էր իր ազդեցությունը տարածելով այդ երկրամասի վրա՝ կայսրության համար ճանապարհ հարթել դեպի Հնդկաստան: Իսկ այս պայմաններում, կամա թե ակամա, Ռուսաստանի շահերը պետք է բախվեին Թուրքիայի, Պարսկաստանի, միաժամանակ և՝ նրանց հովանավորող եվրոպական տերությունների հետ:

3. Այսրկովկասում Ռուսաստանին անհրաժեշտ էին կարող ուժեր, որոնց վրա հենվելով՝ պիտի իրականացնվեր այդ երկրի արևելյան քաղաքականությունը: Որպես այդպիսի հենակետեր՝ Այսրկովկասում հանդես էին գալիս Վրաստանը, Սյունիքի և Արցախի մելիքությունները և դրանց գաղափարական առաջնորդ Գանձասարի կաթողիկոսությունը:

4. Չպետք է թերագնահատել նաև ցարական իշխանությունների, մանավանդ՝ Պետրոս առաջինի հակաթուրքական տրամադրությունը: Ռուսաց միապետները տեսնում էին երկրի մեկնարկային վերընթացի կողմնորոշիչները և զգում թուրքական աշխարհից դրանց հարահաս սպառնացող վտանգները: Տակավին իննսունական թվականների վերջին, ուղևորվելով Արևմուտք, Պետրոս ցարը հայտարարում էր, որ, մշակութային նպատակներից զատ, իրեն գրավում է «Տիրոջ խաչի թշնամիների, թուրքաց սուլթանի, Ղրիմի խանի և բոլոր մուսուլմանական հորդաների թուլացումը»[1]:

Ստեղծված բարենպաստ պայմաններն ի շահ հայության առավելագույնս օգտագործեցին Գանձասարի կաթողիկոսները:

1672թ. Գանձասարի Պետրոս կաթողիկոսը հատուկ ուղերձով դիմում է ցար Ալեքսեյ Միխայլովիչին՝ Ռուսաստանում առևտրով զբաղվող խոջաներին և ընդհանուր առմամբ հայերին՝ իր հովանավորության տակ վերցնելու խնդրանքով[2]: Ազատագրական պայքարի ուղղորդման գործում Պետրոս Խանձկեցու վերոհիշյալ ուղերձին ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը վերապահումով է մոտեցել: Նա գրել է. «Պետրոս կաթողիկոսի գրությունը ավելին չէր, քան Սպահանի հայ խոջաների օգտին արված բարեխոսություն.

[1] ՀԺՊ, ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ. 4, Երևան, 1972, էջ 138:
[2] Армяно-русские отношения в XVII веке, т. 1, с. 91-92.

հայերից «լավագույն» համարված այդ խոջաներին նկատի ուներ կաթողիկոսը, երբ պաշտպանություն էր աղերսում «հայ ժողովրդի» օգտին»[1]:

Չհամաձայնվելով մեծավաստակ գիտնականի այս ընդհանրացման հետ՝ նկատենք, որ Պետրոս կաթողիկոսի՝ Ալեքսեյ Միխայլովիչ ցարին հասցեագրված թուղթը խորքում քաղաքական նկատառումներ էր պարունակում: Հայ-ռուսական հարաբերությունների համատեքստում քաղաքական առաջին ձեռնարկումը լինելով՝ կաթողիկոսը ցարի առաջ միջնորդում էր Ռուսաստանում Նոր Զուղայի խոջաների ոչ միայն ազատ երթևեկը, այլև առավել շատ ծանրանում էր հետագա հնարավոր զարգացումների վրա՝ Ալեքսեյ Միխայլովիչին բարեմաղթելով հաղթանակ թշնամիների նկատմամբ և աղերսում նրանից՝ պաշտպանություն հայ ժողովրդին: Պետրոս կաթողիկոսը, Հայոց արևելից նահանգների հովվապետը լինելով, քաջ գիտակցում էր, որ Սպահանի հայ խոջաները Ռուսաստանում, առևտրական գործառույթներից զատ, ցարական արքունիքում համայն հայության բանագնացների դեր էին կատարում: Ուստի Պետրոս կաթողիկոսը շահախնդիր էր Սպահանի հայ առևտրական տան բարգավաճման գործում:

Պետրոս կաթողիկոսի ուղերձը, ըստ էության, առաջին քայլն էր՝ շոշափելու հայության նկատմամբ ունեցած ռուսաց միապետների տրամադրությունը: Գանձասարի կաթողիկոսի այս քայլը վարակիչ էր ինչպես Էջմիածնի հայրապետի, այնպես էլ՝ Արցախի ու Սյունիքի մելիքների համար:

Հայոց երկրի ազատագրության հարցով 1677թ. կաթողիկոս Հակոբ Զուղայեցու գլխավորությամբ, Էջմիածնում հրավիրվել է գաղտնի ժողով, որին մասնակցել են նաև

[1] Հովհաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք Բ, էջ 488:

Սյունյաց ու Արցախի հայ մելիքների ներկայացուցիչները: Նույն այդ նպատակով Հակոբ Ջուղայեցին Գանձասարի կաթողիկոսի հետ գործակցության մեջ է մտել[1]: Երեմիա կաթողիկոսը Հակոբ Ջուղայեցուն խնդրում է եվրոպական միապետների և Հռոմի պապի հետ բանակցությունների ժամանակ ներկայացնել նաև Գանձասարի հովանու տակ գտնվող հայ հավատավորների շահերը:

Գանձասարի կաթողիկոսի հորդորանքով Հակոբ Ջուղայեցին նախ գնում է Վրաստան և, վրաց գործիչների հետ բանակցելով, փոխադարձ համաձայնությամբ որոշվում է, որ հայերը դիմեն Արևմտյան Եվրոպայի պետություններին, իսկ վրացիները՝ Ռուսաստանին:

Պետրոս Առաջինը քաջատեղյակ էր, որ Գանձասարի կաթողիկոսն անվերապահ ազդեցություն ունի ինչպես Կուրի աջափնյակի, այնպես էլ ձախափնյակի հայկական գավառների վրա: Ուստի իր քաղաքական ծրագրերն Այսրկովկասում իրագործելու նպատակով հենվում էր Գանձասարի կաթողիկոսի վրա: Քննարկվող ժամանակաշրջանի աղբյուրները վկայում են, որ Պետրոս Առաջինի ժամանակ ռուսաց կառավարության հարաբերությունները հիմնականում Գանձասարի հետ էին[2]:

17-րդ դարի վերջին և 18-րդ դարի սկզբին հայ ժողովրդի ազատագրական շարժումը թևակոխեց նոր փուլ: Երևան եկան այդ շարժման գաղափարախոսները, որոնք հանդես էին գալիս քաղաքական որոշակի ծրագրով:

Այդ շարքում առավել ընդգծված գործիչներ էին Սյունիքի մելիքական տների հայրենասիրական ավանդույթներով դաստիարակված Իսրայել Օրին և Արցախի Հասան-Ջալալյան մեծանուն տոհմի արժանի ժառանգ Եսային, որը, 1701 թվականից սկսած, կաթողիկոս ընտրվելու օրից, դարձավ ազատագրական պայքարի անխոնջ մարտիկներից մեկը:

[1] *ՀԺՊ, հ. 4, էջ 128:*
[2] *Հովհաննիսյան Կ., Էջեր Արևելյան Հայաստանի ազատագրական շարժման պատմությունից, էջ 8:*

Իսրայել Օրին քաջ գիտակցում էր, որ իր ծրագիրը հնարավոր է իրագործել բուն մայր երկրում կազմակերպված ուժերի առկայության դեպքում:

Որպես իրական և շոշափելի ուժի՝ նա տեսնում էր Արցախի մելիքներին և Գանձասարի կաթողիկոսին: Ռուսական արքունիքի հետ նրանց ունեցած կապերին ծանոթ լինելով՝ Օրին անհրաժեշտ համարեց շեշտակի շրջադարձ կատարել Հայաստանի մինչ այդ որդեգրած արևմտյան կողմնորոշման մեջ: Այդ ուղղությամբ նրա առաջին քայլը հան դիսացավ 1699թ. ապրիլի 29-ի Անգեղակոթի հայ մելիքների գաղտնի խորհրդակցությունը:

Ընդունելի է Բագրատ Ուլուբաբյանի այն կարծիքը, ըստ որի՝ Անգեղակոթի ժողովին հրավիրված են եղել նաև Ղարաբաղի մելիքները[1]: Ճիշտ է, սկզբնաղբյուրները դրա մասին լռում են, բայց, այնուամենայնիվ, Անգեղակոթին նախորդած և հաջորդած դեպքերը, ինչպես նաև բուն հավաքում արծարծված գաղափարներն այդ կարծիքի օգտին են խոսում: Այսպես, 1699թ. գարնանը Օրին, վերադառնալով Հայաստան, իր հետ բերեց Հռենոսյան Պֆալցի կյուրֆուրստ Հովհան Վիլհելմի նամակը՝ հասցեագրված հայ մելիքներին, Էջմիածնի ու Կապանի կաթողիկոսներին[2]: Քննարկվող ժամանակահատվածում Կապանում կաթողիկոսական աթոռ չկար, և, բնականաբար, դա վերաբերում էր Գանձասարի կաթողիկոսին:

[1] *Ուլուբաբյան Բ., Զրուցարան, հ.Ա, Երևան, 1987, էջ 246:*
[2] *Էզոր Գ., նշվ.աշխ, վավ. հմ. 1:*

Հովհան Վիլհելմին ուղղորդելու գործում, անկասկած, իր դերն է ունեցել Իսրայել Օրին, որովհետև նրա հետագա գործունեության առանցքում Արցախն էր՝ իր հոգևոր ու աշխարհիկ տերերով հանդերձ:

Եթե վաղ միջնադարում պատմական սկզբնաղբյուրներում կուր-արաքսյան միջագետքում գտնվող Սյունիքն ու Արցախը շատ հաճախ անվանվել են Սիսական, Սյունիք[1], միջին միջնադարում՝ երբեմն Ղարաբաղ[2], ապա ավելի ուշ շրջանում՝ Ղափանու աշխարհ[3]: Պատահական չէ, որ առաջին՝ 1699թ. թղթի տակ ժողովատեղ էր հիշատակված Անգեղակոթը, իսկ վերջին բոլոր խնդրագրերը, հատկապես 1703 թվականի Կապանի մելիքների անունից կազմված թղթերի գրության տեղ է նշված Աղվանք գավառը, որ նշանակում է Արցախ:

Վերոհիշյալ կարծիքի օգտին է խոսում նաև մեկ այլ փաստ: Արդեն վերևում նշվել է, որ Արցախի հոգևոր ու աշխարհիկ տերերն ի սկզբանե երկրի ազատագրման հույսը կապել էին Ռուսաստանի հետ: Մինչդեռ հայ իրականության մեջ գերիշխում էր արևմտաեվրոպական կողմնորոշումը: Ամենայն հավանականությամբ՝ Իսրայել Օրու դեպի՝ Ռուսաստան դիմաշրջման գործում իրենց դերն ունեցան Արցախի մելիքները և Գանձասարի կաթողիկոսը: Անգեղակոթի ժողովը որոշում կայացրեց հատուկ նամակ ուղարկել Պետրոս Առաջինին՝ խնդրելով աջակցել հայերին՝ ազատվելու անհավատների ծանր լծից[4]: Ապա նամակում ասվում է. «մեր խորհուրդն այն է, որ մենք մեր իշխանքնով և

[1] Խորենացի Մ., Հայոց պատմություն, Երևան, 1981, էջ 153-154:
[2] Ալիշան Ղ., Տեղագիր Հայոց մեծաց, Վենետիկ, Ս.Ղազար, 1855, էջ 86:
[3] Չամչյան Մ., Պատմութիւն հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ տն. 1784, հ.Գ, Վենետիկ, 1786, էջ 788:
[4] Աղայան Ծ., Ռուսաստանի դերը հայ ժողովրդի պատմական ճակատագրում, էջ 75:

պարօնքս ամենեքեանքս հնազանդ լինինք քո մեծ թագաւորութեանդ, որպէս հնազանդ են բազում իշխանք քո հրամանին ներքև, լինինք մենք էլ նմանապէս մին ծառայ քո մեծ տէրութեանդ ...»[1]:

Հատկանշական է նաև այն փաստը, որ, Անգեղակոթի ժողովի որոշմամբ, Օրիի օգնական է նշանակվում Արցախի Ս.Հակոբա վանքի միաբան Մինաս վարդապետ Տիգրանյանը, որը մինչև իր կյանքի վերջն անդադրում ծառայում էր հայրենիքի ազատագրության գործին: Իսրայել Օրին մեծ ակնկալիքներ ուներ Արցախի մելիքներից և Գանձասարի կաթողիկոսից: Անգեղակոթի ժողովից հետո Օրին, վերադառնալով Դյուսելդորֆ, Կյուրֆուրստին հանձնած զեկուցագրում Իրանի դեմ մղվելիք առաջիկա պատերազմում երկու-երեք հարյուր հազարի էր հասցնում ռազմունակ հայերի թիվը, թեև, փաստորեն, միայն հինգ հազար մարտիկներով էր նրանց մասնակցությունը խոստանում Երևանի ազատագրման համար մղվելիք մարտերին: Ըստ երևույթին՝ Օրին ի նկատի ուներ Արցախի հինգ մելիքների հազարական զինական ուժը:

Ի դեպ 18-րդ դարի 80-ական թվականներին, երբ ռուսները պատրաստվում էին մտնել Այսրկովկաս, Արցախի մելիքները ցարական արքունիքին խոստացան նրանց տրամադրության տակ դնել նույնչափ՝ հինգ հազար զինվոր[2]:

Ուշագրավ է, որ 1701թ.՝ Մոսկվայում, իշխան Գոլովինի հետ ունեցած զրույցում, Օրին ակնարկում է, որ Մեծ Հայքում կա հինգ նահանգապետ[3]՝ նկատի ունենալով Արցախի մելիքներին, որոնք ռուսական զորքերի մոտենալու

[1] Армяно-русские отношения в XVIII веке, т. 2, ч. 1, с. 240.
[2] Иоаннисян А., Россия и армянское освободительное движение 80-х годов XVIII столетия, с. 108, 105.
[3] Իսրայել Օրին նկատի ուներ Խամսայի մելիքներին:

դեպքում «24 ժամ էլ չի անցնի, որ նրանք կքշեն անհավատներին և 15 օր էլ չանցած, կտիրեն ամբողջ երկրին»[1]:

Հայտնի է, որ Անգեղակոթի ժողովը մելիքների կողմից ստորագրված, բայց չգրված թուղթ տվեց Իսրայել Օրուն՝ նրան լիազորելով իրենց անունից դիմումներ գրել: Հետագայում, Մոսկվայում Օրին այդ իրավասու թղթերն օգտագործում է: Այս առիթով Ա.Հովհաննիսյանը գրել է. «1703 թվականին խմբագրած նրանց դիմումներն անմիջորեն համընկնում էին եթե ոչ Ղափանի մելիքների, գեթ Ղարաբաղի մելիքների և մանավանդ սրանց քաղաքական ղեկավարի՝ Գանձասարի Եսայի Հասան-Ջալալյան կաթողիկոսի տրամադրություններին»[2]:

Մինաս վարդապետը և Իսրայել Օրին բանակցություններ են վարել ցարական իշխանությունների ներկայացուցիչների հետ՝ փորձելով Ռուսաստանի միջոցով հասնել իրենց ծրագրերի իրագործմանը: Այդ բանակցությունների արդյունքները նրանք հաղորդել են հայ մելիքներին, Գանձասարի ու Էջմիածնի կաթողիկոսներին: Այդ առաքելությամբ 1702թ. Գանձասարում և Էջմիածնում եղավ Մոսկվայում ապրող մի հայ կապիտան՝ Միրոն Վասիլևը:

Նամակներում Օրին կաթողիկոսներին և մելիքներին հորդորում էր, որ նրանք նախապատրաստվեն՝ մասնակցելու ազատագրական պայքարին և իրենց կողմից դիմումներ հղեն ռուսական պետությանը: Մեզ են հասել մելիքների անունից կազմված գրություններ, որոնք 1703թ. ներկայացված են եղել Մոսկվայի դեսպանական պրիկազին և ավելորդ անգամ հաստատում են Արցախի իշխանավորների աննահանջ կեցվածքը՝ ազատագրելու Հայաստանը[3]:

---

[1] *Эзов Г., նշվ. աշխ., էջ 76:*

[2] *Հովհաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք Բ, էջ 523:*

[3] *Эзов Г., նշվ. աշխ., վավ. 98, 100, 102, էջ 154-166:*

Միաժամանակ այդ թղթերից երևում է, որ Օրին հայ մելիքներին հավաստիացրել է, թե ցարը բարեհաճ տրամադրություն է հայտնել՝ շվեդական պատերազմից հետո ձեռնամուխ լինել Հայաստանի ազատագրման գործին: Գալիք պարսկական արշավանքի մանրամասները նախապատրաստելու համար Պետրոս Առաջինն անհրաժեշտ գտավ հետախուզել ապագա ռազմական գործողությունների թատերաբեմը և պարզել Այսրկովկասի ժողովուրդների տրամադրությունները Ռուսաստանի հանդեպ: Օրին պատրաստակամություն հայտնեց մասնակցելու հետախուզական այդ աշխատանքներին: Նա առիթը փորձում էր օգտագործել մանավանդ հայ մելիքների և Գանձասարի կաթողիկոսի հետ իր կապերն ամրապնդելու համար: Արքունիքը նպատակահարմար գտավ, որ դեսպանությունը գլխավորի հենց ինքը՝ Օրին: Իր առաքելության ընթացքում Օրին հանդիպումներ ունեցավ Գանձասարի կաթողիկոսի և Արցախի մելիքների հետ: Արցախահայությունը մեծ ակնկալիքներ ուներ Իսրայել Օրուց: Մեկնարկած հայ ազատագրական շարժման ընթացքը և Օրու գործունեությունն ուսումնասիրող առաջին հեղինակներից մեկը՝ Կրուշինսկին, գրել է. «... ղարաբաղցի հայ իշխանավորները ժողովրդի հետ միասին հայտարարեցին, թե, ինչպես ասված է իրենց գրքում, հայազգի այն թագավորը գալու է Իրան, որպեսզի գրավելով Ղարաբաղի երկիրը և իշխանություն հաստատելով այդտեղ, վերականգնի Հայաստանի նախկին վիճակը...»[1]: Այս հարցում ընդգծված շահախնդրություն ցուցաբերեց Գանձասարի կաթողիկոսը: Ժամանակի լուսավորյալ անհատներից մեկը՝ Եսայի Հասան Ջալալյանը, սերված լինելով Առանշահիկների հինավուրց նախարարական տոհ-

---

[1] *Հովհաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք Բ, էջ 607:*

մից, արտահայտում էր ոչ միայն հայ հոգևոր և աշխարհիկ, այլև բովանդակ արցախահայության ձգտումներն ու տրամադրությունները:

Անուրանալի է նրա դերակատարությունը ոչ միայն իր ապրած ժամանակահատվածում ազատագրական պայքարի կազմակերպման և պետականակերտման գործում, այլև հետագա դարերում իր օրինակով բազմաթիվ սերունդների դաստիարակության գործում: Լեոն իրավացիորեն գրել է. «Այդ մարդն էր, որ եկեղեցու հովվի պաշտոնի հետ միացրեց զինվորական գործունեությունը: Նա էր, որ Ղարաբաղի և Սյունիքի լեռներում հանդես բերեց զինված հայությունը: Շատ բան չէր կարող անել Օրին, եթե նրա հետ միաժամանակ Գանձասարում չլիներ Եսայի կաթողիկոսը: Պատմության ընթացքը շատ պարզ ցույց է տալիս, որ ազատության գաղափարը Օրիի հետ վաղաժամ գերեզման կմտներ, եթե Եսային իր վրա վերցրած չլիներ սկսած գործի շարունակությունը»[1]:

Դեռևս 17-րդ դարի վերջերից սկսած՝ Եսայի Հասան-Ջալալյանն[2] իր համախոհների շրջանում արմատավորում է հայրենի երկրի ազատության համար անընդհատ և անզիջում պայքարի գաղափարը: Այդ կապակցությամբ Մակար Բարխուդարյանցը մի ուշագրավ տեղեկություն է հաղորդում. «... 1701թ. ... իւր բոլոր ուշադրութիւնը (խոսքը վերաբերում է արցախահայությանը,- Վ.Բ.) դարձնում է արտաքին, լափլիզող սուրերի վերայ: Միանում են բոլոր մելիքներն և եիւզբաշիներն, որոշում են կազմել սղնախներ, այն է իւրաքանչիւր մելիք իւր վստահելի ամրոցում ամրանայ իւր ժողովրդով և զօրքով եւ մահու չափ պատերազ-

[1] *Լեո, Երկերի ժողովածու, հ.5, էջ 144:*
[2] *1699 թվականին Երեմիան աթոռակից կաթողիկոս է օծում իր եղբորորդի Եսայուն: Տես՝ Սիմէոն կաթողիկոս, Ջամբռ, Վաղարշապատ, 1873, էջ 81:*

մելով պահպանէ իւր ազատութիւնը, ժողովուրդը եւ կրօնը... Իսկ գլխաւոր ժողովատեղին էր Գանձասարայ վանքն»[1]: 1701 թվականից կաթողիկոս հաստատված Եսայի Հասան-Ջալալյանի վրա էր դրված ոչ միայն ազատագրական պայքարի կազմակերպական խնդիրը, այլև արտաքին ճակատում վարվող դիվանագիտական փնտրտուքներն ու հնարավոր դաշնակիցների որոնման գործը:

Ռուսաստանի և Ուկրաինայի հայ եկեղեցական համայնքները Գանձասարի կաթողիկոսությանը ենթարկելու նպատակին հետամուտ՝ Եսային քաղաքական շեշտված հակում ուներ դեպի Ռուսաստանը: Հայ իշխող դասի ներկայացուցիչների մեջ առաջիններից մեկն էր նա, որ ի սկզբանե հակված էր դեպի Օրիի մոսկովյան ծրագիրը և հետագայում հանդես եկավ որպես այդ ծրագրի կենսագործման եռանդուն պրոպագանդող և կազմակերպիչ: Այդ հանդիպումն առավել կարևորվում է, որովհետև Արցախի հայ տերերը սերտ կապեր և ազդեցություն ունեին ոչ միայն հայկական ողջ լեռնաստանի, այլև հայաշատ վայրերի վրա: Օրիի՝ Արցախի մելիքների հետ հանդիպման մասին է վկայում հայ գործիչների 1721թ. նամակը՝ հասցեագրված Պետրոս Առաջինին: Նամակի հեղինակները վկայում են, որ Օրին տեղեկացել է իրենց երկրի բոլոր եկամուտների, ճանապարհների, մետաքսի արտադրության և պարսկական զորաբանակի մասին: Եսայի կաթողիկոսից և Ղարաբաղի չորս վանահայրերից զատ՝ այդ նամակի տակ կա Զրաբերդի Մելիք Եսայու ստորագրությունը[2]:

Հայ ժողովրդի բաղձանքներն անձամբ Պետրոս Առաջինին հաղորդելու համար, 1710թ. Եսայի կաթողիկոսը միա-

[1] *Բարխուտարեանց Մակար եպիսկոպոս, Պատմութիւն Աղուանից, հ.Բ, էջ 69-70:*
[2] *Армяно-русские отношения в первой трети XVIII века, т. 2, ч. 1, с. 381-383.*

ցավ Պարսկաստանից վերադարձող Օրու դեսպանությանը և ուղևորվեց դեպի Ռուսաստան: 1711թ. Աստրախանում, չպարզված հանգամանքներում, Օրին մահացավ: Նրա գործը շարունակող Եսայի Հասան-Ջալալյանը, վերադառնալով հայրենիք, գիտակցելով սեփական ներուժի կազմակերպման և կանոնավոր հունի մեջ դնելու անհրաժեշտությունը, ձեռնամուխ եղավ Գանձասարի կաթողիկոսության իրավասության տակ գտնվող գավառների պետական կյանքն ընթացքավորելու դժվար գործին:

Հարկ է նշել, որ քննարկվող ժամանակահատվածում «տիրապետության տակ՝ Գանձասարի վանքի շրջապատում, ինը հարիւր գիւղ կայ, եւ այդ գիւղերը մեծ են. ունեն հարիւրից մինչեւ չորս հարիւր եւ աւելի տուն»[1]:

Նկատենք, որ ուշ միջնադարում հայ նահապետական ամեն մի գերդաստանում (տուն) ապրում էր տասից տասնհինգ մարդ: Նշանակում է՝ ամենահամեստ հաշվարկներով հայոց արևելից նահանգներում և անդրկուրյան հայաշատ գավառներում ապրում էր հայ առաքելական եկեղեցու առնվազն երկու միլիոն հավատավոր: Նրանց հոգևոր, մշակութային, տնտեսական և քաղաքական կյանքը կազմակերպելու և պետական ծիրի մեջ դնելու նպատակով 1714թ. Եսայի կաթողիկոսը Գանձասարում հրավիրում է գաղտնի ժողով, որտեղ ընդունվում են մի շարք կանոններ.

«ԺԱ. Իւրաքանչիւր մելիք, պարտաւոր է գահերէց ճանաչել Ջալալեան մելիքները եւ թէ՝ յայտնի և թէ՝ գաղտնի ժողովատեղի ընդունել Գանձասարի վանքը: Ամէն զօրավար հնազանդելու է իւր մելիքի հրամանին, ամէն գնդապետ՝ իւր զօրավարին եւ ամէն զօրական՝ իւր գնդապետին եւն:

[1] Эзов Г., նշվ. աշխ., էջ 324:

ԺԲ. Իւրաքանչիւր մելիք պարտաւորուած կը լինի պահել Վ (3000) կանոնաւոր զօրք, փորձառու զօրավար, հաւատարիմ սուրհանդակներ եւ պատրաստութիւններ:

ԺԳ. Իւրաքանչիւր մելիք պարտաւոր է արթուն հսկել իւր սահմաններին, եւ եթե վտանգ կը նշմարէ թշնամեաց կողմից, անմիջապէս պէտք է հաղորդէ միւսներին:

ԺԴ. Իւրաքանչիւր մելիք, եթե կը յանդգնի իւր գաւառի որոշեալ սահմաններից դուրս գալ և ուրիշ մելիքների իրաւունքը բռնի յափշտակել, կը պատժուի միւսների ժողովով որոշած պատժով եւ ԺՌ (10.000) թուման տուգանք, կըտուժէ մելիքաց (ընդհանուր) գանձարանին եւ կըտուժէ առանձին՝ վնասուած մելիքի վնասը:

ԺԵ. Ամեն ոք (մելիք) պարտաւոր է ամրապնդած պահպանել ներքին սիրոյ եւ միաբանութեան կապը, միածոյլ զօրութեամբ արտաքնոց դէմ կռուելու:

ԺԶ. Մեծ կամ փոքր պատերազմներն կը մղուին բոլոր մելիքների, զօրավարների եւ գնդապետների որոշելուց յետոյ: Անակնկալ կամ յանկարծակի դէպքերն բացառութիւն կը լինին:

ԺԷ. Հայրենեաց եւ կրօնի դէմ դաւաճանութիւն եւ ծանր յանցաք գործողն թէ մելիք լինի, թէ՝ զինուորական եւ թէ՝ ժողովրդական, կը պատժուի կրօնական եւ մելիքական խառն ժողովոյ որոշած պատժով:

ԺԸ. Ո՛չ այլազգի իշխանաւորաց հետ խնամիութիւն հաստատել եւ ո՛չ երկպառակութեամբ նոյա յարիլ:

ԺԹ. Եթէ օժանդակութեան համար զօրեղ տէրութեան դիմելու հարկն զգալի լինի, կրօնական եւ աշխարհական խառն ժողովով որոշելու է առաջարկելի պայմանները եւ պահանջները:

Ի. Իւրաքանչիւր մելիք պարտաւոր է Հայրենեաց ընդհանուր շահերը իւր գաւառի շահերից վեր դասել եւ իւր գաւառի շահերը՝ իւր անձնական շահերից եւ օգուտներից:

ԻԲ. Ամէն մելիք պարտաւոր է գտնուիլ իր զօրաց գլխին պատերազմի ժամանակ եւ խրախուսել քաջասրտութեամբ իւր զօրքը եւ զօրավարը:

ԻԳ. Մեզանից ով որ կյանդգնի սոյն կանոններին հակառակը գործել, Հայրենեաց եւ կրօնի թշնամու կողմն անցնիլ, նորա հետ միաբանելով Հայրենեաց հանգստութիւնը վրդովել, հայը հայի դէմ թշնամի յարուցանել եւ արիւնահեղութիւն պատճառել, այնպիսի մահուան պատժով կը պատժուի, միւս մելիքներն կը գրաւեն նորա բերդը եւ ինչքը ցնոր տնօրէնութիւն»[1]:

Մինաս Վարդապետ Տիգրանյանն ազատագրական պայքարը գործնական հունի մեջ դնելու և հետագա գործողությունների ծրագիրը ճշգրտելու նպատակով 1716թ. Գանձասարում հանդիպեց Եսայի Հասան-Ջալալյանի հետ:

Մինաս Վարդապետ Տիգրանյանը նույն նպատակով էջմիածնում հանդիպեց Ամենայն Հայոց կաթողիկոս Աստվածատուր Ա Համադանցու (1715-1725) հետ: Ի տարբերություն Եսայի Հասան-Ջալալյանի՝ նա ավելի զգուշավոր էր, իսկ ավելի շուտ՝ անվճռական քաղաքականություն էր վարում: Դրա մասին Մինաս վարդապետը Ռուսաստանի դեսպանական վարչությանն ուղղած 1717թ. մարտի 14-ի զեկուցագրում գրել է, որ Աստվածատուր կաթողիկոսը մեծ մտավախություն ուներ շահից. այնպես չպատահի, որ «այդ մեծ գործը իրենց բոլորի համար կործանարար լինի: Սակայն եթե նորին ցարական մեծութիւնը բարեհաճի պատերազմ սկսել Պարսկաստանի դեմ եւ իր զօրքերը այդ երկիրն ուղարկել, ապա նա իր հաւատարիմների հետ որքան կարող է, որպէս բարի միջոց, կօգնի»: Միաժամանակ նա չի համարձակվում գրավոր դիմել ցարին[2]:

---

[1] *Բէկնազարեանց Ա., Գաղտնիք Ղարաբաղի, էջ 210-214:*
[2] *Դանիելյան Է., Գանձասարի վանքը, Երևան, 2009, էջ 37:*

Պատահական չէ, որ Մինաս վարդապետը, ռուսական արքունիքի հետ ունեցած բանակցությունների ժամանակ, մշտապես ընդգծում էր Եսայի կաթողիկոսի և Արցախի մելիքների պատրաստակամությունը՝ ներգրավվելու տարածաշրջանային ռազմաքաղաքական ապագա զարգացումներին:

Նկատենք նաև մեկ այլ հանգամանք. Աստվածատուր Ա Համադանցին անվճռականություն ցուցաբերեց նաև Արցախի ներքին միաբանությունն անխաթար պահելու գործում:

Այսպես, նա Եսայի կաթողիկոսի լիազորություններին համարժեք ճանաչեց իրեն ինքնակոչ Աղվանից կաթողիկոս հռչակած Երից Մանկանց վանքի Ներսես եպիսկոպոսի իրավունքները: Փաստորեն՝ Հայոց արևելից նահանգներում հակաթոռությունն օրինականացվեց, որն իր բացասական հետևանքներն ունեցավ ժողովրդի թե հոգևոր և թե քաղաքական կյանքում:

Սակայն Եսայի կաթողիկոսը խոհեմություն դրսևորեց և, ապագա արհավիրքներին դիմակայելու, պետականաշեն մթնոլորտ ստեղծելու և թշնամու նկատմամբ միասնական ճակատ հարդարելու նպատակով, հանդուրժեց մի առ ժամանակ իր կողքին տեսնել անօրինական կաթողիկոսին՝ մանավանդ, երբ Ներսեսին հովանավորում էին Գյուլիստանի և Զրաբերդի մելիքները:

Ամենայն հավանականությամբ՝ էջմիածնի և Գանձասարի կաթողիկոսների ներուժը մեկտեղելու և Ամենայն Հայոց կաթողիկոս Աստվածատուր Ա Համադանցուն առավել վճռական քայլերի դրդելու նպատակով է, որ 1719 և 1721 թվականներին Եսայի կաթողիկոսը երկու անգամ այցելել է էջմիածին:

Արցախի հոգևոր և աշխարհիկ տերերի անունից 1716թ. օգոստոսի 10-ին Եսայի կաթողիկոսը դիմեց Պետրոս Առա-

ջինին՝ խնդրելով իրենց վերցնել Ռուսաստանի հովանավորության տակ «...Յառաջ քան զայս առաքեալ ի քումմէ թագաւորութենէդ Իսրայէլ Օրի տեսպանն եկն երկիրս Հայոց և զհամբաւ բարեյաղթութեանիդ սփռեալ տարածեաց ի լսելիս մեր ամենեցուն...: Իսկ այժմ կրկին առաքեալ ի մեծէ թագավորութենէդ եղբայրս մեր զՄինաս վարդապետս, որ ի յազգէ մերմէ, եկն եհաս երկիրս մեր և առ մեզ և զբարի և աստուահաճոյ կամք. և խորհուրդ քաջազոր թագաւորութեանդ ծանոյց մեզ. և մեր լսելով զուարճացաք և ցնծաւցաք ի հոգի և ի մարմին. և յօժար սրտիվ կամիմք ընդ հովանեաւ թևոց քոց լինիլ... մեք պատրաստ եմք ընդ առաջ քո ըստ իմուն կարողութեանս և մեր նահանգիս մելիքովս և մեծամեծովք և փոքրումբք և յորժամ կամեսցի հզօր և մեծ թագաւորդ յաջապարել այսր կամօքն աստուծոյ...»[1]:

Ընդգծված ռուսական կողմնորոշում ունենալով հանդերձ՝ Եսայի կաթողիկոսը չէր բացառում նաև եվրոպական երկրների օժանդակությամբ Հայաստանի ազատագրման հնարավորությունը: Այս կապակցությամբ 1712 թվականին կազմված մի «ժամանակագրության» մեջ ասված է. «Եսայի Գանձասարայ, Ղարաբաղի և Շիրուանայ կաթողիկոսն յայսմ մի առ թագավորն մեր Լեհաց Օգոստոսն գրեաց, առաքելով ընդ Յուդայի Քրուշինսքիցին եզուիդային զթուղթն, ցուցանելով զինքն հավատարիմ ս.Աթոռն և որդւոց նորին, թագաւորացն քրիստոնէից»[2]:

Երկրի ներքին կյանքում Եսայի կաթողիկոսի եռանդուն կազմակերպական ձեռնարկները, արտաքին ճակատում ակտիվ դիվանագիտական փնտրտուքները, հոգևոր դասի, մելիքների և ժողովրդի համախումբ ներդաշնակ գործողություններ համայն հայության համար, Հայոց արևելից նահանգները տվյալ ժամանակահատվածում դարձրին հավատի և հույսի կերոններ: Ազատագրական պայքարի գործիչների համար Արցախը դարձավ յուրօրինակ հավաքատեղի:

Պատմական հիշատակարանը հաղորդում է, որ արդեն 1717 թվականին, Ավան հարյուրապետի գլխավորությամբ, «շիրվանցիները» հաստատվել էին Արցախում՝ Շուշին դարձնելով ազատագրական պայքարի օջախներից մեկը[1]:

Այսպիսով, 17-րդ դարի վերջերին հայ իրականության մեջ համատարած կորուստների և հուսահատության պայմաններում Արցախի մելիքական տների ներկայացուցիչները և Գանձասարի կաթողիկոսները, որպես հայկական կորուսյալ պետականության լավագույն ավանդույթների կրողները նոր էջ բացեցին հայ ազատագրական շարժումների պատմության մեջ: Արցախի մելիքները և Գանձասարի կաթողիկոսները՝ նախանձախնդիր իրենց իրավունքների ու ազատությունների վերահաստատմանը, 17-րդ դարի վերջերին և 18-րդ դարի սկզբներին մշակեցին հայ ժողովրդի ազատագրության ռազմավարությունը, որը ենթադրում էր, սեփական ներուժին ապավինելով, Ռուսաստանի աջակցությամբ վերականգնել հայկական թագավորությունը: Գանձասարի Պետրոս կաթողիկոսը հայ իրականության մեջ առաջինն ուրվագծեց ռուսական կողմնորոշման նախաշավիղը, որին նոր քաղաքական ընթացք հաղորդեցին Իսրայել Օրին և Արցախի մելիքները:

Զինված պայքարի միջոցով ոչ միայն հայության ինքնության փրկման, այլև ազատության նվաճման և պետականության վերակերտման գաղափարի հայտնաբերումը հայության համար նոր արժեհամակարգի ստեղծման ելակետ

[1] *Армяно-русские отношения в первой трети XVIII века, т. 2, ч. 1, с. 360.*

[2] *Հովհաննիսյան Ա., Դրվագներ, գիրք Բ, էջ 612:*

[1] *Երկու վավերագրեր տ.Խաչիկ վարդապետի ձեռնագրերի ժողովածուից, «Արարատ», հունիս, 1900, էջ 35:*

դարձավ: Արցախի գործիչների համար անընդունելի էր միայն աղերսագրերի միջոցով «բարեկամ» երկրների աջակցությամբ հայրենիքի ազատագրման մինչ այդ բյուրեղացած կարծրատիպը:

Արցախի ռազմաքաղաքական անվտանգության պահպանումը, ինքնիշխանության վերականգնման անհրաժեշտությունը, երկրամասի հոգևոր ու աշխարհիկ տերերի մեջ ձևավորեց այն գիտակցությունը, թե հնարավոր չէ ապահովել հայկական տարանջատ գոյությունն ու զարգացումը, եթե իրենք չմիավորվեն և չգործեն որպես մեկ ամբողջություն: Արցախահայ իրականության մեջ օրեցօր գերիշխող էր դառնում ողջ Հայաստանի քաղաքական ինքնորոշման՝ Հայոց թագավորության վերականգնման ձգտումը: Այդ առանցքի շուրջն էլ ծավալվեցին 18-րդ դարի և 19-րդ դարի սկզբների հայ իրականության կարևոր պատմական իրադարձությունները:

բ) Եսայի Հասան-Զալալյանի «Նոր նորոգման» տեսլականի իրագործումը Արցախում

Այսրկովկասը Ռուսաստանին միացնելու հարցը ռուսական դիվանագիտության համար 1720-ական թվականներին ձեռք բերեց հատուկ նշանակություն: Այս ընթացքում Պետրոս Առաջինի արքունիքում լրջորեն քննարկվում էր կասպիական արշավանքի ծրագիրը, որտեղ առաջնային դերակատարություն էր վերապահվում Արցախի մելիքներին: Արտաքին քաղաքականությանն առնչվող փաստաթղթերից մեկում ասվում է. «Անհրաժեշտ է պաշտպանել քրիստոնյաներին, հայերին, վրացիներին և մյուս բարյացակամ ժողովուրդներին... նրանց մոտ մեր հավանական օգնության հույսը չփարատելու համար»[1]: Քննարկվող ժամանակահատվածում լեզգիների մշտապես կրկնվող արշավանքներից, թուրք-պարսկական բռնաճնշումներից տուժած արցախահայության և մահմեդական խաներից հալածական մելիքների մոտ դեռևս կենսունակ էր հյուսիսի մեծ հարևանի օգնությամբ երկրի փրկության ծրագիրը:

Արցախի մելիքները նորից լծվեցին հայկական պետականության վերականգնման գաղափարին: Պետրոս Առաջինին հասցեագրած նամակում (1721թ.) Գանձակի Եսայի Հասան-Զալալյան կաթողիկոսը խոսում է ռուսաց ցարերի տված խոստումների մասին, նշում, որ Արցախի մելիքները և ռազմիկները հույսով սպասում են այդ օգնությանը[2]:

Դաղստանի լեռնականների մեծաքանակ զորքերը 1722թ., գարունը բացվելուն պես, անցնելով Ճորա Պահակը, ավերեցին վաճառաշահ Շամախի քաղաքը և հայտնվեցին

---

[1] *Сборник Императорского русского исторического общества в 148 томах, т. 55, СПб, 1886, с. 126.*

[2] *Армяно-русские отношения, т. II, ч. I, с. 383.*

Արցախում[1]: Այս անգամ լեզգիների առաջ երկիրն անպաշտպան ու անպատրաստ չէր: Լեռներում ամրացած կանոնավոր և վարժեցված զորքը Զրաբերդի շրջակայքում արժանի հակահարված հասցրեց թշնամուն: Դրա մասին է վկայում նաև Ղարաբաղի չորս մելիքների նամակը՝ ուղղված Պետրոս Մեծին. «...մէկ տարի է որ երկիրս Աղուանից գերի է ձեռըս լազգոց, նոքայ կոտորէին և եսիրն տանէին, ետ մնացածն տեղոյս բռնակալաց թուրքերն այրելով, խորովելով հարկս բահանջէին ամէնն թախտու թալան յափշտակէին, և մերումս անճար մնալով ծեռս տվաք միմեանց, ես ծառայից ծառայ Եսայիս և այր ոմն շրվան անուն, ևս սարգիս անուն որ այս երկուքս ի չարապերթու (Զրաբերդ-Վ.Բ.) են, ես Եսայիս Պարտայու և մելիք Յովսէփ ի գանձայու, միմեանց ծեռ արկաք Ժ (10) և ժբռ (12000) մարդ ժողովեցանք պատերազմ մտանք կամ թէ լազկոյ հետ, կամ՝ թէ տանս Աղուանից թուրքաց հետ, ամուր ծայրս քարանց սըղնաղ կապեցանք ի մեծի թագաւորիդ սուրդ աղօթիւն շատ կոտորումն և յաղթութիւն եմք առեալ ի վերայ թուրքաց...»[2]:

Ավարառու լեռնականները նահանջեցին դեպի Կուրի ձախափնյակը և այլևս չհամարձակվեցին երևալ Ղարաբաղի կողմերում:

Հյուսիսային լեռնականների դեմ ինքնապաշտպանության գործը տարերայնորեն վերածվում էր պարսկական իշխանության դեմ ուղղված ժողովրդաազատագրական շարժման: Դրա ղեկավարները ժամանակին այս երևույթի մեջ նշմարում էին հայոց ազգային հանգած իշխանության «նոր նորոգում»[3]:

---

[1] *Լեո, հ. 3, գիրք II, էջ 119:*

[2] *Эзов Г., նշվ.աշխ., էջ 341.*

[3] *Եսայի Հասան-Զալալյան, Պատմութիւն կամ յիշատակ ինչ-ինչ անցից՝ դիպելոյ յաշխարհին Աղուանից, էջ 58:*

Արցախի հայկական ինքնավարության տեղական մարմինների ազատագրական ոգորումները համընկան Պետրոս Մեծի հայտնի Կասպիական արշավանքի հետ: Ռուսաստանը հետամուտ էր իրանական մետաքսի ամբողջ արտահանությունը Թուրքիայի ցամաքային ճանապարհներից շրջելու Դնեպրի, Կասպից ծովի և Վոլգայի ջրուղին ու գրավելու Պարսկաստանի ծովափնյա նահանգերը: Դա հնարավոր դարձավ, երբ Հյուսիսային պատերազմը մոտեցավ իր ավարտին: Իրավիճակը հրամայական էր, քանի որ Օսմանյան Թուրքիան, օգտագործելով Իրանի ծանր դրությունը, իրեն հայտարարում էր Այսրկովկասի և Ատրպատականի «օրինավոր ժառանգորդը»՝ սպառնալով գինակալել Սեֆյանների տիրազրկված երկրամասերը:

Լեզգիների դեմ մղվող պայքարը՝ սղնախական շարժման սկզբնափուլը և այն հակապարսկական ընդվզման վերածելու ընթացքը համընկավ Եսայի կաթողիկոսի՝ 1722թ. մայիսի 28-ին Տփղիս մեկնելու փաստի հետ:

Այս հանգամանքը մեզ հիմք է տալիս ասելու, որ Եսայի Հասան-Զալալյանը փորձ է կատարում ազգային ազատագրական պայքարը դուրս բերել համահայկական հարթությից՝ նրա մեջ ներգրավելով նաև քրիստոնեական Վրաստանը:

Հիշենք, որ Եսայի Հասան-Զալալյանն իր այս ծրագիրը փորձում էր իրագործել Նահապետ Եղեսիացու ժամանակ՝ գործակից դարձնելով հայոց կաթողիկոսին:

Նախորդ փուլերում սկբնավորված և ամրապնդված հայ-վրաց-ռուսական ռազմաքաղաքական դաշինքը դիվանագիտական ոլորտից անցավ կոնկրետ գործողությունների ասպարեզ՝ նպատակ ունենալով Այսրկովկասն ազատագրել և Ռուսաստանի հովանավորությամբ ստեղծել հայ-վրացական միացյալ պետություն: Համաձայն Պետրոս Մեծի հանձ-

նարարականի՝ հայ-վրացական միացյալ ուժերը ռուսների հետ հանդիպելու էին Շիրվանում: Այդտեղ էին շարժվում ռուսական զորքն ու նավատորմիղը: Հայ և վրաց ռազմական ուժերի հանդիպումը տեղի ունեցավ Գանձակի մոտ՝ Չոլակ գյուղում, 1722թ. սեպտեմբերի 22-ին: Հայկական 10 հազարանոց ընտիր զորքը գլխավորում էին Եսայի կաթողիկոսը և Ավան, Շրվան, Շահնի ու Սարուխան հարյուրապետերը: Եսայի կաթողիկոսը հայտարարեց, որ հայերն իրենց հոգիները, զավակներին և ունեցվածքն ի սպաս են դնում սկսած գործին[1]: Սակայն ռուսաց և վրաց-հայկական զորքերի նախատեսված հանդիպումն ու միավորումը չիրականացան: Պատմագիտության մեջ այն թյուր կարծիքն է տիրում, թե իբր միջազգային դրության լարվածության խորացումը, մյուս կողմից՝ ռուսական նավերի խորտակվելն ու վնասվելը, պարենի և զինամթերքի հսկայական կորուստը, հիվանդություններն ու մարդկային զոհերը դժվարացրին արշավանքի ողջ ծրագրի կենսագործումը[2]:

Մինչդեռ իրականում, Պետրոս Առաջինի օրոք, ողջ Այսրկովկասն ու մասնավորապես Դարաբաղի գրավման, առավել ևս ազատագրման մասին մոտակա ծրագիր անգամ չկար: Խնդիր էր դրված նվաճել մետաքսառատ մերձկասպյան շրջանները, որոնց կարիքն անչափ զգում էր Ռուսաստանի նոր ձևավորվող մանուֆակտուրային արտադրությունը: Ռուս հեղինակները ժամանակին նկատել են, որ Պետրոս Առաջինի հիմնական նպատակն էր Ռուսաստանի

[1] Եսայի Հասան-Զալալյան, Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի, էջ 45-49:

[2] ՀԺՊ, հ. IV, էջ 148; Бутков П., Материалы для новой истории Кавказа, ч. 1, СПб, 1869; Соймонов Ф., Описание Каспийского моря, СПб, 1763; Комаров В., Персидская война 1722-1725гг., Москва, 1845; Соловьев С., История России с древнейших времен, т. 18, Москва, 1867; Нечаев В., Внешняя политика Петра Первого, СБ.«Три века», т. 3, Москва, 1912; Лысцов В., Персидский поход Петра I 1722-1723гг., Москва, 1951.

գերիշխանությունը տարածել Կասպից ծովի վրա, որը Եվրոպան Ասիայի հետ կապող միջանկյալ օղակ կդառնար[1]:

Ռուսական արքունիքը ծրագրել էր նվաճել մինչև Կուր գետը: Նախատեսվում էր գետի ակունքներում կառուցել խոշոր առևտրական քաղաք, որը հայ, վրացի, պարսիկ և հնդիկ առևտրականների համար կդառնար հավաքատեղի, որտեղից էլ ճանապարհը կձգվեր մինչև Աստրախան[2]: Այդ մտադրությունների մասին 1722թ. սեպտեմբերին Պետրոս Առաջինը բաց տեքստով հայտնում է նաև Կ.Պոլսում ռուսական դեսպան Ի. Նեպլյուևին. «Մեր զորքերը Վրաստանով և Հայաստանով անցնող Թուրքիայի սահմաններին չեն մոտենա և միայն Կասպից ծովի առափնյա շրջանները կմտնեն, որի մասին քեզ հանձնարարում ենք Բարձր Դռանը հավաստիացնել»[3]: Այդ ծրագրերը կյանքի կոչելու նպատակով 1725թ. հոկտեմբերի 23-ին Գաղտնի խորհուրդը որոշում է. «Կուր գետի ափին հիմնավորվել և այդ նպատակով մի քանի ամրոցներ կառուցել»[4]: Վերոհիշյալ ծրագրերից զատ Պետրոս Առաջինը մերձկասպյան առափնյա շրջաններով հետագայում Հնդկաստան հասնելու գաղափարն էր մտմտում: Այդ առիթով նա գեներալ Մատյուշկինին գրել է. «Բաքուն մեր բոլոր գործերի բանալին է»[5]:

Ընդհանուր առմամբ ցարական արքունիքի նվաճողական չափից ավելի հավակնոտ ծրագրերն ինչ-որ տեղ վնասում էին արցախահայությանը: Դա լրջորեն անհանգստացնում էր ոչ միայն Պարսկաստանին և Թուրքիա-

[1] История человечества, под общей редакцией Г.Гельмольта, т. V, Юго-Восточная и Восточная Европа, С-Петербург, 1905, с. 566.

[2] Голиков И., Деяние Петра Великого, т. 8, с. 263-264.

[3] АВПР, ф. СРТ, 1722, д. 4, с. 56.

[4] Зевакин Е., Прикаспийские провинции в эпоху русской оккупации XVIIIв., «Известия общества обследования и изучения Азербайджана», 1927, N 5, с. 15.

[5] Абдулаев Г., Азербайджан в XVIIIв. и взаимоотношения его с Россией, с. 15.

յին, այլև նրանց հովանավոր Անգլիային: Այս երկրի գործակալները շահին և սուլթանին տագնապալի լուրեր են հաղորդում, թե Պետրոս Առաջինը նպատակ ունի նվաճել Հայաստանը, Վրաստանը, Պարսկաստանը՝ հետագայում Հնդկաստան մտնելու ակնկալիքով: Նման պայմաններում Պարսկաստանը և Թուրքիան նախահարձակ եղան:

Շահը Վախթանգ VI-ին զրկեց Քարթլիի զորահրամանատարի պաշտոնից՝ մեղադրեց դավաճանության մեջ: Նրա փոխարեն շահն իրեն դրածո էր դարձրել Կախեթի թագավոր Կոստանդինին, որն ընդունել էր մահմեդականությունը (Մահմուդ-Ղուլի անունով), հայտարարվել նաև Երևանի, Գանձակի, Ղարաբաղի բեկլարբեկ և հրաման ստացել՝ պարսից զորքով գնալ Վախթանգի դեմ և գրավել Թբիլիսին: Թողնելով Վրաստանի մայրաքաղաքը՝ Վախթանգը ստիպված անցավ Ռուսաստան:

Առավել նպատակային էր գործում Թուրքիան: Բարձր Դռան հրահրմամբ Դաղստանի տիրակալ Դավուդ խանն ապստամբում է Ռուսաստանի դեմ: Նմանօրինակ խառը իրավիճակից օգտվելով՝ 1723թ. ամռանը թուրքերը, շրջանցելով Ղարաբաղը, մտնում են Վրաստան: Թբիլիսին գրավելուց հետո 1723թ. հոկտեմբերին թուրքական 80-հազարանոց զորքերը, Իբրահիմ փաշայի գլխավորությամբ, շարժվեցին դեպի Գանձակ: Քաղաքի պաշտպանությանը մասնակցում էր Արցախի սղնախների մարտական ուժերի մի մասը: Թուրքական զորքերը պարտություն կրեցին և նահանջեցին՝ Գանձակի պատերի տակ թողնելով հազարավոր սպանվածներ: Դեռ ավելին՝ հայ զինվորականության պահանջով Իբրահիմ փաշան ազատ արձակեց քաղաքի շրջակա գյուղերից գերեվարված հայերին: Ականատես լինելով հայկական բանակի մարտունակությանը՝ Իբրահիմ փաշան Ավան հարյուրապետին հա-

կապարսկական և հակառուսական ճակատ ստեղծելու առաջարկություն արեց: Հայերը մերժեցին:

Ստեղծված պայմաններում հավաստի տեղեկություններ ստանալու և հետագա անելիքները ճշտելու նպատակով Գյուլիստանի մելիք Եսային 1723թ. սկզբին մեկնում է Վրաստան: Մելիք Եսայու և Արցախի մյուս գործիչների համար պարզ են դառնում ռուս-թուրքական կայացվող դաշինքի հեռանկարները: Նույն թվականի մարտի 1-ին մելիք Եսային, Զրաբերդի մելիք Սարգսին, հարյուրապետ Եսայուն և Գյուլիստանի Աբրահամ սպարապետին նամակ է հղում՝ ներկայացնելով ստեղծված նոր կացությունը[1]: Մելիք Եսայու և Վախթանգ թագավորի ու Շահնավազ խանի հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ Ռուսաստանը և Թուրքիան տարածաշրջանը բաժանել են ազդեցության գոտիների: Մերձկասպյան հողերը, Դերբենդը, Բաքուն, Գիլանը «ըռուս թագաւորն վեր առաւ», «Շամախոյ դէսն, թամամ Դաղըստանաւ, Գանջայ, Գուրջըստան, Երէվան՝ Խոնթկարն»[2]: Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը՝ մելիք Եսային իր համախոհներին խորհուրդ է տալիս թուրքերի հետ առավել զգուշորեն վերաբերվել. «Սունոյ յետ բան չունէք, ... աստուած կոյսիրէք, էթիեաթով կացէք»[3]:

Իր հերթին Պետրոս Մեծը ռուսական ազդեցությունն Արցախում չկորցնելու, սղնախների հետագա անելիքները պարզելու, ինչպես նաև հետագայում հակաթուրքական և հակապարսկական ճակատ ստեղծելու նպատակով 1723թ. Այսրկովկաս և, մասնավորապես, Արցախ է ուղարկում դեսպանորդ Իվան Կարապետին: Նույն թվականի

---

[1] *Ղահրամանյան Կ., Հյուսիսային Արցախ /պատմության քննական վերլուծություն/, պ.գ.դ. գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, էջ 37:*
[2] *Армяно-русские отношения, т. II, ч. II, с. 25.*
[3] *Նույն տեղում, էջ 25-26:*

վերջին Իվան Կարապետը, վերցնելով կանցլեր Գոլովինի նամակը՝ ուղղված Ներսես կաթողիկոսին, Գյուլիստանի մելիք Եսայուն, Զրաբերդի մելիք Սարգսին և այլ մելիքների ու յուզբաշիների, որտեղ օգնելու և ազատագրելու նոր խոստումներ էր տրվում[1], մեկնում է Արցախ:

Եսայի կաթողիկոսն ու մելիքները 1723թ. նոյեմբերի 1-ին պատասխան նամակում նկարագրում են ծայրաստիճան վատ կացությունը և հորդորում ռուսական արքունիքին՝ օգնություն ցույց տալ[2]: Այստեղ նորից կուռ միասնական պետության պակասն իր բացասական դերն ունեցավ: Միասնական բռունցք ստեղծելու փոխարեն հայ հոգևոր և աշխարհիկ վերնախավի ներկայացուցիչները տարամիտվեցին: Մի թևում հայտնվեցին Դիզակի, Վարանդայի և Խաչենի մելիքները, որոնց գլխավորում էր Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանը, իսկ մյուս խմբավորման մեջ էին Գյուլիստանի և Զրաբերդի մելիքները: Սրանց առաջնորդն էր Զրաբերդի մելիք Սարգսի եղբայր, Երիցմանկանց վանքի հակաթոռ կաթողիկոս Ներսեսը:

Եսայի Հասան-Ջալալյանը նպատակահարմար է գտնում ավելի խորացնել Արցախ-Ռուսաստան քաղաքական հարաբերությունները՝ երկրի վերջնական ազատագրության հույսը կապելով հյուսիսի հզոր հարևանի հետ: Ներսես կաթողիկոսն էլ անհեռանկար էր համարում նմանօրինակ քաղաքականությունը: Ըստ նրա՝ դա ավելի էր բորբոքում պարսիկներին, և հատկապես՝ թուրքերին: Նա խոհեմ էր համարում վերջիններիս հետ լեզու գտնելու փորձերը: Դեռևս 1723թ. մարտի 1-ին Գյուլիստանի մելիք Եսային իր համախոհներին՝ Զրաբերդի մելիք Սարգսին,

[1] *Армяно-русские отношения, т. II, ч. II, с. 41-43:*
[2] *Նույն տեղում, էջ 47-49:*

հարյուրապետներ Եսայուն և Աբրահամին գրում է. «այս օսմանցիս ղօշուն ոչ թիվ ունի, ոչ սան»[1]:

Պատահական չէ, որ 1723թ. նոյեմբերի 1-ին ռուսական արքունիքին հասցեագրված նամակում արդեն չկար գյուլիստանյան խմբավորման ներկայացուցիչների ստորագրությունը: Փաստորեն, կասպիական ձախողված արշավանքը անելանելի իրավիճակ ստեղծեց արցախահայության համար: Երկրամասի հայությունն այս անգամ ստիպված էր իր ազատության, ինքնության պահպանման համար պայքարել ոչ միայն Հյուսիսային Կովկասի ավարառու լեռնականների և Պարսկաստանի, այլև ավելի զորեղ թշնամու՝ Թուրքիայի դեմ, որի թիկունքին կանգնած էին Անգլիան և Ֆրանսիան:

Թուրքիան, ի դեմս հայության, մասնավորապես արցախահայության, տեսնում էր իր հիմնական հակառակորդին: Պատահական չէր, որ թուրքական իշխանությունների ներկայացուցիչն էջմիածնի կաթողիկոսին հանդիմանում է, թե հայերը ռուսներին բերել են Կովկաս, և նրանք ձգտում են անգամ նվաճել Օսմանյան տարածքները: Վերջում ավելացնում էր, որ հայերը դրա համար թանկ կվճարեն[2]: Թուրքիայի ղեկավար շրջանները մեղադրում են հայերին, որ «ձեր կաթուղիկոսն ըռուստին խետ միայվորվել այ և ըռուստըն բերել այ Ղզլբաշի երկիրն՝ որ գոն մեզ վերայ»[3]: Ցարական արքունիքն այդ օրերին ոչ թե ձգտում էր աջակցել արցախահայությանը, այլ ուղիներ էր որոնում՝ լեզու գտնելու Պարսկաստանի և Թուրքիայի հետ:

Ռուսաստանի և Պարսկաստանի միջև 1723թ. սեպտեմբերի 12-ին կնքվեց պայմանագիր, ըստ որի՝ մերձ-

[1] *Армяно-русские отношения, т. II, ч. II, с. 25.*
[2] *Ժամանակագրություն Պետրոս Դի Սարգիս Գիլանէնցի, Կռունկ հայոց աշխարհին, 1863, թիվ Գ, էջ 209:*
[3] *Նշվ.աշխ., էջ 193:*

կասպյան տարածքներն անցնելու էին Ռուսաստանին: Իսկ ցարական արքունիքն էլ իր հերթին պատրաստվում էր ռազմական աջակցություն ցույց տալ շահ Թահմազին:

Կ.Պոլսում ռուսական դեսպան Ի.Նեպլյուևը 1724թ. հունիսի 12-ին Թուրքիայի հետ կնքեց պայմանագիր, որի համաձայն՝ թուրքերը ճանաչեցին Ռուսաստանի տիրապետությունը՝ Դերբենդից մինչև Մազանդարան ընկած Կասպից ծովի առափնյա շրջանները: Փոխադարձաբար ռուսները ճանաչեցին թուրքերի իրավունքներն Իրանի այսրկովկասյան տիրույթների նկատմամբ՝ ներառյալ Թիֆլիս, Գանձակ, Նախիջևան քաղաքները, Ղարաբաղի ու Կապանի մարզերը, ինչպես նաև նրանց տիրապետությունն Արդեբիլ-Թավրիզ գծից դեպի հյուսիս և Թավրիզ-Քերմանշահ գծից դեպի արևմուտք ընկած իրանական հողերի վրա[1]: Կոստանդնուպոլսի ռուս-թուրքական պայմանագրով չէր կարելի միջամտել կողմերի գրաված երկրամասերի գործերին, ուստի ռուսական արքունիքը պարբերաբար խուսափողական պատասխաններ էր տալիս օգնություն խնդրող հայերի նամակներին՝ միաժամանակ զգուշացնելով վրաց և հայ գործիչներին՝ չգրգռել թուրքերին: Դեռ ավելին, Արցախում իր ազդեցությունը չկորցնելու նպատակով՝ Այսրկովկասում տեղակայված ռուսական զորքերի հրամանատարությունը գտնում էր, որ հայերի խնդրանքը պետք է ոչ կատարել և ոչ էլ մերժել, այլ հուսադրելով պահել մինչև որոշ ժամանակ անցնի, գուցե փոխվի իրադրությունը, և այն ժամանակ հնարավոր լինի ուրիշ որևէ միջոց ձեռնարկել[1]: Գերագույն գաղտնի խորհուրդն իր հերթին Այսրկովկասում տեղակայված զորքերի հրամանատարությանը՝ հայերին ոգևորելու նպատակով, հրահանգ է տալիս՝ կազմակերպել զինված ուժերի կեղծ զորաշարժեր[1]: Մյուս կողմից էլ Պետրոս Առաջինը ոչ միայն գործնական աջակցություն ցույց չտվեց, այլև գլացավ Արցախ ուղարկել ռազմական գործի գիտակ մասնագետների, հատկապես՝ զինագործ վարպետների՝ տեղում հրանոթներ ձուլելու համար[2]:

Ամենայն հավանականությամբ, Պետրոս Առաջինի ժամանակներից սկսած, Ռուսաստանի քաղաքական սերուցքի մոտ հղացավ, իսկ հետագայում էլ կարծրացավ այն գաղափարը, որ հայերն այլ ելք չունեն և մշտապես դատապարտված են հյուսիսի մեծ հարևանի դաշնակիցը լինելու: Այս «պատվավոր պարտականությունը», 18-րդ դարից սկսած, ուղեկիցն է մեր պատմության: Այսպես, 1927թ. Ս.Մասուրյանն իրավացիորեն նկատել է. «Մոսկվայում համոզված են, որ հայ բոլշևիկները միշտ կլինեն հավատարիմ, իսկ վրացիներին, և մանավանդ թուրք կոմունիստներին անհրաժեշտ է շոյել, այդ պատճառով Ախալքալաքը տրվեց Վրաստանին, իսկ Ղարաբաղը Ադրբեջանին»[3]:

Մեր նորագույն պատմության վերջին ժամանակահատվածի տարաբնույթ իրադարձություններում նմանօրինակ ակնարկային իրողություններն առավել քան շատ են: Թերևս այստեղ տեղին է մեջբերել արցախյան նորօրյա ազատագրական շարժման գործիչներից մեկի՝ Բագրատ Ուլուբաբյանի խոսքը. «1965թ. ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահ Անաստաս Միկոյանի գլխավոր օգնականը, կարդալով իմ տարած նամակը, բավականին կարեկից էր դարձել, խոստանում էր իր ամեն տեսակ օգնությունը, մեկ

---

[1] *Армяно-русские отношения в первой трети XVIII века, т. II, ч. II, с. 295.*

[1] *Армяно-русские отношения в первой трети XVIII века, т. II, ч. II, с. 297:*

[2] *Լեո, հ. 3, գիրք II, էջ 151:*

[3] *Մասուրեան Ս., Ռուսաստանը բեկման շրջանում, «Հայրենիք», հմ. 1, 1927 էջ 140:*

էլ հարց տվեց՝ Ինչքա՞ն է ձեր մարզի բնակչությունը: Ասացի՝ 160 հազարից մի քիչ ավելի: Սկզբում կարծես սխալ է լսել, հետո ճշգրտեց, լրջացավ և քթի տակ մրթմրթաց. 160 հազարը մենք մի գիշերում փակ վագոններով այս ու այնտեղ ենք փոխադրում: Եվ դրանից հետո խոսում էր կոտրված եռանդով»[1]:

Բազմամիլիոնանոց մահմեդական երկրներով շրջապատված քրիստոնեական մի փոքրիկ կղզյակը, բնականաբար, չէր կարող շարժել անգամ քրիստոնեության շղարշով պարուրված գիշատչի ախորժակով ծավալապաշտ կայսրությունների ոչ հետաքրքրությունը և ոչ էլ՝ սովորական մարդկային գութը: Սա այն դասերից մեկն է, որ մենք պետք է սերտենք և մոռացության չտանք: Անդրադառնալով նորից Պետրոս Մեծի ժամանակների տարածաշրջանային քաղաքական զարգացումներին՝ նկատենք, որ Թուրքիան, ի հակակշիռ Ռուսաստանի, գործնականում փորձում էր շահել արցախահայության վստահությունը և համակրանքը՝ ավելի խորը ճանաչելով այդ երկրամասի հայության գենետիկ ազատաբաղձ, չընկճվող և չնվաճվող ոգին:

Այսպես, 1723թ. սեպտեմբերին թուրքերը, գրավելով Գանձակը և հարակից հայկական բնակավայրերը, ավարի և ավերի ենթարկեցին:

Արցախի սղնախների ղեկավարները թուրքական զորքերի հրամանատար Իբրահիմ փաշայից պահանջեցին ազատել գերիներին: Վերջինս ոչ միայն ազատեց գերիներին, այլև հայերին առաջարկեց համատեղ գործողությունների ծրագիր մշակել: Սակայն Ավան հարյուրապետը, ակնկալելով Ռուսաստանի աջակցությունը և վերջինիս

[1] *Ղլուբաբյան Բ., Փորձության օրերի խորհուրդը, Ստեփանակերտ, 2010, էջ 277:*

հետ կապելով երկրամասի փրկության գործը, հրաժարվեց[1]: Թեև սղնախականները մերժում էին թուրքերի համագործակցության առաջարկները, բայց և այնպես վերջիններս համառորեն շարունակում էին փորձել հասնել իրենց նպատակին:

Օմար փաշան 1724թ. հոկտեմբերին նամակով դիմում է սղնախների մելիքներին. «Այդ քոհդ մեզ է թափշարիշ արել թաքաւորը, ամէն ճհաթէ, խաթըրջամ գէնայք, կայք, ինչ որ ձեր մաթլապն է, ձեզ պալալթու դանք, գնայք, ձեր աւատանութիւն անէք: Հալպաթ կայք, թէ չէ՝ իխդիար ունէք, լաւ իմացէք, փիքր դաղդաղա չի քաշէք, կայք, թէ չէ փաթշահին իռայի էք, գայք, թէ չէ իխդիեար ունէք»[2]:

Օմար փաշայի այս հորդորները նույնպես մերժվեցին:

Նկատենք, որ, արաբական ժամանակներից սկսած, երբ մահմեդականությունն սկսեց գործել քրիստոնեական աշխարհի հարևանությամբ, լուրջ և վճռորոշ ազդեցություն ունեցավ տարածաշրջանային քաղաքական զարգացումների վրա: Այս պայմաններում հայ դիվանագիտությունն իր հերթին սերտաճեց քրիստոնեական վարդապետության հետ՝ կորցնելով ճկունությունը և պահի շահը որսալու հմտությունը: Մի քանի դար անց նոր հավատքի՝ իսլամի կույր ու մոլեռանդ հետևորդ ցեղերն ու ցեղախմբերը, հայտնվելով Հայկական լեռնաշխարհի սահմաններին, հայությանն ահաբեկեցին և անգործության մատնեցին: Սեփական ներուժի վրա հենվելու, հարևան մահմեդական պետությունների հետ հարաբերվելու, երբեմն մեկը մյուսի դեմ լարելու, շահավետ և հայանպաստ իրավիճակներ ստեղծելու փոխարեն մեր հայացքը հառվեց հեռուներում գտնվող և իրենց շահերով շղարշված քրիստոնեական

[1] *Լեո, հ. 3, գիրք II, էջ 144 և 161:*
[2] *Աբրահամյան Ա., նշվ. աշխ., էջ 224:*

երկրներին: Դրա հետևանքով մենք ոչ միայն կորցրինք Կիլիկիան և Հայկական լեռնաշխարհի զգալի մասը, այլև պետականությունը՝ վտանգի տակ դնելով հայ մարդու ինքնությունը:

Քրիստոնեական աշխարհի հետ կապելով մեր անհույս վիճակից դուրս գալու միակ ելքը՝ մեր դիվանագիտական միտքը ոչ միայն կորցրեց իր ճկունությունը, այլև այլընտրանքի ամեն մի հնարավորությունը:

Ռուսաստանից ակնկալվող օգնությունը տեսանելի ապագայում անհեռանկար համարելով՝ սղնախների քաղաքական որոշ շրջանակներում հղանում է այն միտքը, որ հակաթուրքական ճակատ ստեղծելու ամենահիրատեսական քայլը հարևան մահմեդականների, հատկապես՝ շիաների և պարսկամետ խաների հետ դաշինք ստեղծելու մեջ է: Նկատենք, որ սղնախականների այս մոտեցումը Պետրոս Առաջինի՝ Այսրկովկասում վարվող քաղաքականությանը համահունչ էր: Ռուսական արքունիքը պարզ գիտակցում էր, որ իր հավակնոտ ծրագրերի իրականացման ճանապարհին առավել շատ խոչընդոտ էր ոչ թե Պարսկաստանը, այլ՝ առավել հզոր Թուրքիան: Սղնախականները, դա գիտակցելով, միջնորդի դերակատարությունը վերապահեցին Պետրոս Առաջինի պատվիրակին՝ Իվան Կարապետին: 1724թ. փետրվարի 22-ին հետևյալ բովանդակությամբ դիմում են հղել վերջինիս. «Մեք, Շոշի եղեալ ուզլբաշէքս, ես Թարխանս, և ես Բաղիս, և ես Փանիս, և ես Սարգիսըս, և ես Սատեղս, մեր թաբուն թալեղօվս և մեր քէվխայ քադխոդէքօվս և Գանջոյ խայէրօվս, մեծօվ և փոքրօվ, խնդրեցինք Իվան Կարապետէն, որ մեր կողմանէ մին գիր գրէ Գանջայ մայալին քադ-

խոդէքոնց վերէն..., որ մեք և գանջեցիք բարիշ լինենք, մինչի մեր թագայորըն գայ մեզ հասանի»[1]:

Երկարատև բանակցություններից հետո 1724թ. մարտի կեսերին սխնախականների ներկայացուցիչների և Գանձակի մահմեդականների միջև կնքվեց փոխադարձ օգնության պայմանագիր: Հայկական կողմից պայմանագիրը ստորագրել են Գանձասարի Եսայի կաթողիկոսը, Երից Մանկանց Ներսես կաթողիկոսը, Ավան, Միրզա, Թարխան, Բաղի, Սարգիս, Աբրահամ հարյուրապետները և Թամրազ, Բաղի, Գրիգոր, Դանիել, Եգան մելիքները: Պայմանագրի՝ հայերի կազմած տեքստում ասված է. «... մինըզմինոյ հետ սէր մօհբաթ առենք և մինըզմինոյ քօմակ առենք: Եւ էս ըլթզամս էլ տվինք էլչի բէկին, որ թէ գանջէցուց վերէն, թէ օսմանլուի և թէ լազկոյ ղօշուն գայ, մեր Հայոց ազգըս, թամամի վերոյգրեալքս, գընանք գանջէցոնց քօմակ, չուն Գանջայ է մեր թագաւորին թաբէ այ: Եւ թէ մեզ վերէն օսմանլու կամ լազգի գայ, գանջեցիք գան մեզ քօմակ: Եւ թէ մեր հայոց ազգըս գանջեցոնց խաբենք, գնանք ոչ քօմակ, և թէ գանջեցոց խաբենք, կամ գանջեցոց մին մարդի, կամ շատ փոքր բռնենք, կամ սպանենք, կամ թալանենք, մեր գլուխըն և մեր ապրանքըն թագաւորին լինի»[2]:

Գանձակի շիա մահմեդականների կողմից պայմանագիրը վավերացվել է 125 ստորագրությունով և կնիքով[3]: Նրանք էլ իրենց հերթին պարտավորվում են. «Ղաջարների և քաղաքի ցեղերից որևէ մեկը, այնքան ժամանակ, որ սղնախի հասարակությունը և Ղարաբաղ երկրի մյուս քրիստոնյա ժողովուրդը հնազանդության և հպատակության շրջանակի մեջ մնալով, հլու և հնազանդ մնան, և կամ այն՝

---

[1] *Աբրահամյան Ա., նշվ. աշխ., էջ 162:*
[2] *Նույն տեղում, էջ 106:*
[3] *История Азербайджана, с древнейших времен до присоединения Азербайджана к России, т. 1, Баку, 1958, с. 308.*

որ նրանց հպատակության և հնազանդության ժամանակ օսմանլուի և լեզգիների կողմից նրանց վրա զորք գա, ղաջարի քաղաքացի մարդիկ առաջքն առնելով՝ հիշյալ քրիստոնյա ժողովրդին օգնության և ձեռընտվության չգան, համենայն դեպս հանցագործ և մեղավոր և անբարեպաշտ պիտի լինին, և չարագործ և ոչ ղազի և անբարենպաստ պիտի համարվին մահմեդականության օջախի առաջ»[1]:

Ի դեպ, վերոհիշյալ պայմանագրի ստորագրումը ձեռնտու էր նաև Պարսկաստանի համար: Տնտեսապես թուլացած, քաղաքականապես անկայուն, երկպառակտչական պատերազմների մեջ ներքաշված երկրի համար ձեռնտու էր թեկուզև ժամանակավոր դադարը: Մյուս կողմից էլ հակաթուրքական ճակատի «հարդարման» գործն ինչ-որ չափով կմեղմեր Բարձր Ղռան՝ Այսրկովկասի պարսկական տարածքների նկատմամբ հավակնությունները: Այս ժամանակահատվածում տարածաշրջանում նկատելի էին ռուս-պարսկա-վրացա-հայկական մերձեցման նախանշանները:

Գանձակի պայմանագրի ստորագրումն իրագործվեց Թահմազ II շահի ներկայացուցիչների, Պետրոս Մեծի պատվիրակի, Իվան Կարապետի, Գանձակի բեկլարբեկի՝ պարսկական կողմնորոշում ունեցող վրացական ծագմամբ Մուհամմադկուլի խանի կամ, որ նույն է՝ Կախեթի Կոստանդին թագավորի մասնակցությամբ և միջնորդությամբ: Պայմանագրի ստորագրումից հետո Ղարաբաղի հայերը և Գանձակի մահմեդականները 200-հոգանոց մի պատվիրակություն են ուղարկում Պարսկաստան: Թահմազ II շահը հավանություն է տալիս պայմանագրի դրույթներին:

Քանի որ տվյալ ժամանակահատվածում Արցախի և Սյունիքի հայության առջև դրված էին նմանատիպ խնդիրներ, ուստի ազատագրական շարժման առաջնորդները կիրառում էին նույն ռազմավարությունը:

Սյունյաց ազատագրական շարժման առաջնորդը՝ Դավիթ Բեկը, նույնպես փորձեց բարիդրացիական հարաբերություններ ստեղծել հարևան պարսկամետ խաների և Թահմազ II շահի հետ: Շահը ոչ միայն ոգևորությամբ ընդունեց Արցախի և Սյունիքի պատվիրակներին, այլև Դավիթ Բեկին հրովարտակ հղեց. «Շահթահմազ արքայ Պարսից՝ առ քաջդ Դաւիթ Պէկ, եւ առ քաջ զորավարդ Հայոց՝ ոտք ընդ քեզ են, ողջոյն: Ի բազմայ բազում անգամ ազդ եղեւ մեզ զքաջութեանց քոց, բայց արդ իբր ականատես, իսկ եղեալ մեր զձերոց մեծամեծ քաջութեանց՝ որ ընդդէմ թշնամեացն մերոյ, ահա՛ արդ կացուցի զքեզ իշխան և գլուխ ամենայն իշխանոց մերոց, ոտք են ի կողմանսդ յայդոսիկ եւ երկիրդ Ղափան՝ զոր կալար քաջութեամբ, քեզ լիցի, բայց դու ելցես եւ ժողովեսցես առ քեզ զամենայն զօրս եւ զխանս ի կողմանցդ յայդոցիկ, եւ ի բաց հանցես զօսմանցին ի սահմանաց քոց»[1]:

Շահը միաժամանակ Դավիթ Բեկին թույլ է տալիս դրամ հատել:

Այսպիսով, Թահմազ II-ը փաստացի և իրավական տեսանկյունից ճանաչում է սղնախների և Սյունիքի հայության ինքնիշխանությունը: Ավելին, Դավիթ Բեկը միաժամանակ դառնում է Անդրկովկասի պարսկահպատակ խաների գլխավորն ու շահի հուսալի դաշնակիցը: Փաստորեն, հայ-պարսկական նմանօրինակ մերձեցումն Արցախի և Սյունիքի հայությանը հնարավորություն է ընձեռում ոչ միայն սեփական ներուժը, այլև պարսից շահի ու նրան հպատակ խաների զինական ուժը նպատակաուղղելու՝

[1] Աբրահամյան Ա., նշվ. աշխ., էջ 107-108:

[1] Ղուկաս Սեբաստացի, Պատմութիւն Ղափանցիոց, Մատենադարան, Ս.Ղազարու, ձեռագիր թիվ 620, բ. օրինակ, գլուխ երրորդ:

կանխելու թուրքական և հյուսիսային Կովկասի ցեղերի ագրեսիան:

Փաստորեն, Պետրոս Առաջինի ժամանակներից ցարական կառավարության արտաքին նվաճումները նոր որակական հատկանիշներ էին ձեռք բերում, այն է՝

ա) ձեռք բերել ռազմավարական նշանակության հենակետեր՝ տարածքային հետագա ծավալումների համար: Այս տեսակետից Հայկական բարձրավանդակի, Պարսկաստանի, Միջագետքի և Փոքր Ասիայի նկատմամբ գերիշխող աշխարհագրական դիրքը ռազմավարական կարևոր և անփոխարինելի հանգույց է դառնում Ռուսաստանի համար՝ փոքր Ասիայում հետագա գերիշխանության հասնելու ճանապարհին[1]:

Դեռևս Պետրոս Առաջինից շատ առաջ ռուսական ցարերի «երկրի աճի հիվանդության»[2] մարմաջն օրեցօր միս ու արյուն է ստանում: Արևելքի քրիստոնեական աշխարհին, մասնավորապես՝ հայությանը և նրա քաղաքական ինստիտուտներին, հատկապես Գանձասարի կաթողիկոսությանը և Արցախի ու Սյունիքի մելիքական տներին հյուսիսից եկող «ազատարար» առաքելության գործառույթում որոշակի դեր էր վերապահվում.

բ) Փոքր Ասիայում առաջանցիկ քայլեր կատարել և կարևոր դիրքեր գրավել եվրոպական երկրների, հատկապես՝ Անգլիայի և Ֆրանսիայի, իսկ 19-րդ դարի վերջերից՝ նաև Գերմանիայի ծավալապաշտական նկրտումները կանխելու համար:

Նման իրավիճակներում Անգլիան, Ֆրանսիան և Գերմանիան սկսեցին հենվել մահմեդական երկրների՝ Պարսկաստանի և Թուրքիայի վրա, իսկ Ռուսաստանը՝ քրիս-

[1] *Ленорман Ф., Руководство в древней истории Востока до персидских войн, в 2-х томах, т. 2, Киев, 1879, с. 195.*
[2] *Соловьев В., Национальный вопрос в России, Москва, 2007, с. 203.*

տոնական աշխարհի՝ Վրաստանի և Հայաստանի վրա: Արտաքին քաղաքական այս ուղեգիծը վերոհիշյալ երկրների համար 18-րդ դարի սկզբներից մինչև 1917թ. մնաց անփոփոխ:

Գանձասարի կաթողիկոսները և Արցախի մելիքները, հավատալով Արևելքի քրիստոնյա ժողովուրդներին ազատագրելու ռուսաց ցարերի հայտարարությունների անկեղծությանը և Ռուսաստանին վերապահելով ազատարարի առաքելությունը, ոչ միայն խորացրին իրենց հանդեպ այն պետությունների հակակրանքն ու թշնամանքը, որոնց հպատակներն էին, այլև, հանձինս եվրոպական երկրների, ձեռք բերեցին նոր հակառակորդներ: Այդ առիթով գերմանացի քաղաքագետ Պ.Ռորբախը նշել է. «Քանի որ մեզ անհրաժեշտ է ամեն կերպ պահպանել Թուրքիան, ապա չպետք է թույլ տանք, որ Հայաստանը անցնի Ռուսաստանին»[1].

գ) Ռուսաստանի տնտեսական զարգացման համար նոր հեռանկարների ուրվագծումը:

Դեռևս Իվան Կարապետի՝ մինչև Արցախ գալը, Պետրոս Առաջինն իր «Հուշագրի» մեջ հայտնում է, որ ինքը Ներսես կաթողիկոսի և մելիքների նամակներից լավ իրազեկված է արցախահայության ծանր կացության մասին և պատվիրակին՝ Իվան Կարապետին, ուղարկում է Արցախ՝ հավաստիացնելու, որ հայ ժողովրդին կազատագրի և կվերցնի իր հովանավորության ներքո: Վերջում նա ասում է, որ այդ ամենը կիրագործի Կասպից ծովի առափնյա շրջաններում հաստատվելուց հետո[2]:

Կասպիական արշավանքի նախօրյակին Պետրոս Առաջինը գեներալ-լեյտենանտ Մատյուշկինին հանձնարարում

[1] *Рорбах П., Война и германская политика, Москва, 1915, с. 64.*
[2] *Эзов Г., նշվ.աշխ., էջ. 356-358:*

է. «Պղնձի հանքերի մասին տեղեկություններ հավաքել, դրա համար վերցնել այդպիսի մի անձնավորություն, որը դրանից բան է հասկանում»[1]:

Հետագայում Պետրոս Առաջինի պատվիրակ Իվան Կարապետը, լինելով Արցախում, զեկուցագրեր է նեկայացնում երկրամասի հանքային հարստությունների մասին. «Էս երկրումս արճըճի մադան շատ կայ, յէնց մադան կայ, որ յեփ խալէս՝ կէս վէ կէս դուս գէ գոյ: Եւ պղինձին և արկաթին չափ չկայ: Եւ զօրայ՝ շատ, անխսէբ; Եւ մէշայ էլ կայ, տմայ ուրենք խաբար չեն և մադանանին բանացնում չեն»[2]:

Պատվիրակության անդամ Սիմեոնը, 1724թ. աշնանը, լինելով Պետերբուրգում, Արտաքին գործերի կոլեգիային հայտնում է, որ Ղարաբաղում՝ Շամախիից վեց օրվա հեռավորության վրա, արծաթի, պղնձի, արճճի և երկաթի մի հանք կա[3] (խոսքը վերաբերում է Գետաբակի բազմամետաղ հանքերին – Վ.Բ.):

Ցարական արքունիքը հատկապես շահագրգիռ հետաքրքրություն է ցուցաբերում մետաքսառատ շրջանների նկատմամբ՝ մանավանդ, որ ռուսական ձևավորվող մանուֆակտուրային արտադրությունը նմանօրինակ ուղղվածություն ուներ: Այսպես, XVIII դարի կեսերին Ռուսաստանում գործում էր 50 մետաքսագործական մանուֆակտուրա, որտեղ մշակվում էր շուրջ 3000 փութ բոժոժ[4]:

Մյուս կողմից էլ մետաքսի շահութաբեր ճանապարհը, որը վերահսկվում էր հայ առևտրականների կողմից, անհրաժեշտ էր տանել Ռուսաստանի վրայով: Այս հարցում

[1] *Лысцов В., Персидский поход Петра I, Москва, 1951, с. 21.*
[2] *Աբրահամյան Ա., նշվ. աշխ., էջ 38:*
[3] *Эзов Г., նշվ.աշխ., էջ 379-380.*
[4] *Яковцевский В., Купеческий капитал в феодально-крепостнической России, Москва, 1953, с. 121.*

Ռուսաստանի հիմնական ախոյանը Թուրքիան էր: Բարձրագույն Դուռը 1718-19թթ. հայ առևտրականներին որոշ արտոնություններ տվեց: Դրա շնորհիվ մետաքսի հոսքը հիմնականում ուղղվեց դեպի Թուրքիա: Պետրոս Առաջինը չկարողացավ կուլ տալ հայերի այդ արարքը: Նա 1719թ. վերացրեց հայ առևտրականներին տված բոլոր արտոնությունները[1]: Այսպիսով, Ռուսաստանը նորից ի ցույց դրեց իր շահանկատ ծրագրերը: Չնայած դրան՝ Արցախի մելիքները, ճիգերի վերջին լարումով, ի մի բերելով երկրամասի տնտեսական և ռազմական կարողությունները, փորձում էին պահպանել ազգային պետականությունը:

1725թ. մարտի 10-ին նրանք ռուսական արքունիքին հայտնում են, որ կարողանում են դիմակայել թշնամուն և պաշտպանել հայրենի հողը, միաժամանակ ընդգծելով, որ եթե թողնեն իրենց ամրություններն ու լեռները և հեռանան դեպի օտար դաշտեր, թշնամին ամեն կողմից կհարձակվի և կոչնչացնի[2]:

Փաստորեն, ցարական արքունիքը 1720-ական թվականներին, չկարողանալով գրավել ողջ Այսրկովկասը, իր տիրապետության տակ գտնվող մերձկասպյան առափնյա շրջաններից շահ ստանալու նպատակով այս անգամ փորձում է արցախահայերին վերաբնակեցնել վերոհիշյալ տարածքներում: Ռուսական կառավարությունը ձգտում էր իրականացնել իրար հետ փոխկապակցված միջոցառում՝ մերձկասպյան շրջաններից տեղահանել անվստահելի մահմեդականներին՝ այնտեղ վերաբնակեցնելով Ռուսաստանին հավատակից քրիստոնյաների[3]: Սղնախների ղեկավարները մերժեցին արտագաղթի ծրագիրը:

[1] *Бабаян Д., Политическая история Карабахского ханства в контексте Арцахской дипломатии XVIII века, Ереван, 2007, с. 16.*
[2] *Эзов Г., նշվ.աշխ., էջ 421-422.*
[3] *Лысцов В., նշվ.աշխ., էջ 150-151.*

Ստեղծված պայմաններում սղնախների առաջնորդները, շարունակելով բանակցությունները ռուսական իշխանությունների հետ, միաժամանակ թուրքական ագրեսիան կանխելու միջոցներ էին որոնում:

1724թ. սեպտեմբերի 26-ին թուրքերը, Երևանը գրավելուց հետո, Ումար փաշան Արցախի հայերին սպառնալիքներով պահանջում է հպատակվել[1]:

Ղարաբաղի քաղաքական շրջանները որոշել էին մինչև վերջ կռվել թուրքական բանակի դեմ, ուստի և մերժեցին այդ առաջարկը: Թուրքական 4700 հոգուց բաղկացած զորքը Շահին, Սալահ և Ալի փաշաների գլխավորությամբ Գանձակի կողմերից 1725թ. մարտի 1-ին մտան Վարանդա՝ տեղավորվելով գավառի գյուղերում: Տեղացիները, զգալով, որ չեն կարող դիմադրել թվով գերակշռող թշնամուն, առերես ընդունեցին նրանց հպատակությունը և, կերուխումից հետո, մի գիշերվա մեջ, նախօրոք պայմանավորված կոտորում են թուրքերին: Եսայի Հասան-Ջալալյանի տեղեկությունների համաձայն՝ միայն 150 ասկյարի հաջողվեց փախչել: Ղարաբաղցիներն ազատեցին 200 գերիների և իրենց հերթին գերեցին Սալահ փաշային[2]:

Վերջինս բացեց Արևելքում, մասնավորապես՝ Արցախի նկատմամբ Բարձր Դռան վարվելիք քաղաքականության հեռապատկերները. «Հայն այս մէջս չպիտի և այս երկրներս խարապ պիտի լինիլ, որ մեր ճանապարհն բացուի. ... Դուք չէիք այս միջումս, մեք հիմա Դարպանտու և Պաքու վերա էինք գնացել, որ ղատիմի մերն է»[3]:

Երեք դար անց, Ցյուրիխյան արձանագրության ստորագրումից հետո էլ Թուրքիայի վարչապետը և, նրան

[1] Աբրահամյան Ա., նշվ. աշխ., էջ 114:
[2] АВПР, ф. 100, 1725г., д. 2, л. 1.
[3] Армяно-русские отношения, т. II, часть II, стр. 249.

ձայնակցելով, մյուս պաշտոնական և ոչ պաշտոնական շրջանակները, միշտ հիշեցնում են, որ, իրենք իրենց նախնիների պատգամներին հավատարիմ, փորձելու են վերացնել հայկական սեպը, տվյալ պարագայում Ղարաբաղյան հարցը լուծելու են թուրքական սցենարով:

Դեռևս 2009թ. մայիսի 14-ին Բաքվում Միլլի մեջլիսում Թուրքիայի վարչապետ Էրդողանը հայտարարել է. «Սահմանները (խոսքը վերաբերում է Հայաստանի և Թուրքիայի սահմանին – Վ.Բ.) կարող են բացվել միայն օկուպացիայի ավարտից հետո: Մենք այս դիրքորոշումից մեկ քայլ անգամ առաջ չենք շարժվի մինչև դրա հետ չհամաձայնվեն Ադրբեջանի մեր եղբայրները»[1]:

Մի քանի ամիս հետո Թուրքիայի արտաքին գործերի նախարար Ահմեդ Դավութօղլուն անթաքույց բացահայտեց Անկարայի՝ հեռուն գնացող մտահոգություններն ու ծրագրերը. «Թուրքական հանրապետության գոյության ողջ ժամանակահատվածում՝ խոստովանել է արտաքին գործերի նախարարը՝ Անկարայի ռազմավարական խոշոր կորուստներից մեկը դարձավ Հայաստանի կողմից ադրբեջանական տարածքների 20 տոկոսի բռնազավթումը»[2]:

Բացելով Անկարայի խաղաքարտերը՝ թուրք պաշտոնյան մյուս կողմից համաշխարհային հանրությանը հասկացնում է, որ Ադրբեջանը Թուրքիայի անօտարելի մի հատվածն է: Այս միտքն ավելի արմատավորելու նպատակով Դավութօղլուն մի այլ առիթով ավելացրել է. «Եթե անգամ փուլ գա երկինքը, Թուրքիայի դիրքորոշումը՝ կապված Ադրբեջանի տարածքային ամբողջականության և բռնազավթված հողերի վերաբերյալ, չեն փոխվի[3]:

[1] «Голос Армении», 15 сентября, 2009.
[2] regionplus.az/ru/posts/view/109797
[3] analitika.at.ua/news/2009-10-28-16433

Վերոհիշյալ փաստերը վկայում են, որ թուրքական պետությունը, լինի դա օսմանյան, երիտթուրքական, քեմալական կամ էլ մեկ այլ տիպի, Ղարաբաղի նկատմամբ ունի հստակ և անփոփոխ դիրքորոշում, որը մեզ համար ինչքան էլ աննպաստ լինի, այնուամենայնիվ, պիտի ընդունենք, որ դա հատուկ է ձևավորված քաղաքական համակարգ ունեցող երկրին, ինչին, թերևս, մենք նույնպես պետք է ձգտենք հասնել:

Փաստորեն, խորամուխ լինելով երեք հարյուր տարի առաջ տեղի ունեցած իրադարձությունների մեջ, մեր մոտ հստակ պատկերացումներ են ձևավորվում երկու երկրների՝ Հայաստանի և Թուրքիայի միջպետական հարաբերությունների ներկայիս հավանական զարգացումների մասին:

Թուրքերի դեմ մղվող պայքարում Արցախի հայության անկոտրում կամքի մասին է վկայում նաև Մարտիրոս Եպիսկոպոսի՝ 1726թ. հունվարին Դերբենդի պարետին ուղղված հետևյալ տեղեկությունը. «Թուրքական փաշան Գանձակից գրել է Սղնախների հայերին, որպեսզի նրանք ուղարկեն 5 տարվա հարկը, առաջարկելով՝ եթե դրամը ձեզ մոտ պատրաստ է, ուղարկեցեք, իսկ եթե պատրաստ չէ, ապա հաճեցեք պատրաստել բոլոր տարիների համար: Իսկ եթե չուղարկեք, այն ժամանակ մենք կգանք և ուժով ձեզանից կվերցնենք: Եվ նրանք՝ Սղնախների հայերը պատասխանել են նրան, թե՛ մեզ մոտ դրամ չկա, բայց միայն ամեն մի մարդու մոտ մի հրացան է և մի սուր, եթե ցանկանում եք գալ, եկե՛ք, մենք աստծու օգնությամբ պատրաստ ենք ձեզ դիմավորելու և ձեզանից չենք վախենում»[1]:

Հայ-թուրքական պատերազմն օրեցօր դառնում էր ավելի կատաղի և անխնա: Արյունահեղ կռիվները, ինչպես

[1] *Աբրահամյան Ա., նշվ. աշխ., էջ 131:*

գրում էր Մինաս Վարդապետը, տեղի էին ունենում համարյա ամեն օր: Իրանի 18-րդ դարի պատմությանն առնչվող «Յաղագս պատմութեանցն Պերսիու երկրին» երկի մեջ գրված է. «Դարձեալ օսմանցին կամենում է, որ հայոց ուզբաշէքն էլ իւրեան հնազանդեն, բայց ոչ հնազանդին, վասն այն պատճառի, որ Շուշոյ բերթն իւրեանց հետ է, մանավանդ՝ իւրեանց տեղն էլ շատ պինդ տեղ այ: Որ և քանիցս անգամ բազում օսմանցւոց ղօշուն է գնում, որ սոցա հախտահարի, բայց ողորմութեամբն Աստծոյ կարողանում չեն: Բայց ընդդէմ նոցին բազում անգամ հայոց Ավան խանն բազում զօրովք հայոց օսմանցուն հետ կռվում է և միշտ յաղթում, որ և այսու գործովք օսմանլուն ձեռն է վեռման հայոց սղնաղէն և երկիւղ է կրում: Այլևս ղօշուն չեն ուղարկում ի վերայ նոցա, և հայքն սղնաղու բոլորն մնում են աներկիւղ»[1]:

Ուշագրավ է գեներալ Դոլգորուկովի՝ 1727թ. մայիսի 11-ին իր կառավարությանը հայտնած այն զարմանքը, թե ինչպես են հայերը դիմանում ստեղծված դրությանը. «Միայն աստված էր պահպանում հայերին, թե չէ մարդկային խելքից բարձր է հասկանալ, թե դեռ ինչպես են նրանք պահվում այդքան զորեղ թշնամու առաջ»[2]:

Այնուհետև ռուս գեներալը 1727թ. հուլիսի 26-ին գրում է. «Երրորդ օրն է, որ Սղնախներից այստեղ է եկել հայ Հակոբը, նամակով, որ ուղարկել են ինձ Ներսես Կաթողիկոսը, Աբրահամը, Սարգիսը, Ներսեսը և Պետրոսը: Նամակի մեջ նրանք գրում են ինձ, որ աստծու օգնությամբ մեծ թվով թուրքեր են ջարդել, որի համար ես առաջիկայում ևս ամեն տեսակ բարիքներ եմ աստուծոց մաղթում նրանց...»[3]:

[1] *Նադիր շահի դարաշրջանի պատմագրական հուշարձանները, աշխատասիրությամբ Արտակ Մաղալյանի, էջ 59-60:*
[2] *Լեո, հ. 3, գիրք 2,էջ 174:*
[3] *Աբրահամյան Ա., նշվ. աշխ., էջ 130:*

Չնայած ռազմի դաշտում Արցախի հայերի ձեռք բերած հաղթանակներին, երկրամասի քաղաքական ղեկավարությունը, անմիտ ձևով ժամանակ վատնելով, շարունակում էր նամակներ հղել ռուսաց արքունիքին:

Վերջիններիս էլ, մասնավորապես Եկատերինա 1-ը, 1726թ. փետրվարի 22-ի հրովարտակով հավաստիացնում է, որ հրահանգված է Դոլգորուկովին և Վախթանգին անհապաղ օգնել[1]: Իրենց հերթին՝ Իվան Կարապետի պատվիրակության անդամներն արցախահայությանը շարունակում էին հուսադրող խոստումներ տալ: Վերոհիշյալ պատվիրակության անդամներից մեկը՝ Քրիստափորը, 1726թ. նոյեմբերին, լինելով Բաքվում և Սալյանում, ռուսական հրամանատրության հետ անպտուղ բանակցություններից հետո, Արցախի մելիքների ցարական օգնության պատրանքը չցրելու նպատակով, մտացածին կեղծ լուրեր է հաղորդել Եսայի և Ներսես կաթողիկոսներին և մելիքներին. «Եւ ձեր աչքըն լուս, որ աստուծոց ողորմութիւնըն մեր հայոց ասկին հասաւ... թախէխըն, ղօշունըն եկէլ ան մինչի էստեղ՝ Սալիան: Եւ տէր Գրիգորն ուր աչքօվն և՛ ղօշունըն և՛ նավէրն ետես, յինքըն ասաց թէ՝ ես գնամ ուզբաշոնց ամենեցոն մշտլուղ տանեմ»[2]: Եվ իր ասածները հավաստի դարձնելու, մյուս կողմից էլ որոշ շահ ստանալու ակնկալիքով շարունակում է. «Եւ ուրէնց լայըղ փէշքաշ շինէք և երկու լավ ձի, որ մինըն սարասկարին և մինըն Վախտանկ խանին, և՛ մին քանի էլ յնէնց ձի, որ բաշխեմ և ձեր գրէրն տամ, ղօշունըն վեռում, բերեմ»[3]:

Ընդհանուր առմամբ՝ Իվան Կարապետը, վաճառական և արդյունաբերող լինելով, մեծ ակնկալիքներ ուներ և

[1] Աբրահամյան Ա., նշվ. աշխ., էջ 126:
[2] Նույն տեղում, էջ 258-259:
[3] Նույն տեղում, էջ 259:

ձգտում էր իր քաղաքական գործունեության ընթացքում որոշակի հարստություն դիզել: Իվան Կարապետի եղբայրը, ռուսական արքունիքի թարգմանիչ Ղուկաս Շիրվանովը, 1724թ. նամակով եղբորը հաղորդում է «... քեզ խետ բօլ փող բերես»[1]:

Արցախի մելիքները, զգալով ռուսական արքունիքի երկդիմի քաղաքականությունը, նրանց պատվիրակին՝ Իվան Կարապետին սպառնում են՝ պահանջելով հեռանալ Արցախից: Վերջինս ստիպված 1727թ. ամռանը տեղափոխվեց Բաքու և մնաց Դոլգորուկովի շտաբում՝ փորձելով նորից լեզու գտնել սղնախականների հետ[2]: Ազատագրական մաքառումների ամենաթեժ պահին՝ 1728թ. վախճանվեց Եսայի Հասան-Զալալյանը:

Կաթողիկոսի մահից հետո ռուսական կառավարության սին խոստումներից հոգնած և հետագա դիմադրությունն անհուսալի համարելով՝ Ավան հարյուրապետն իր համախոհներով 1729թ. անցավ Ռուսաստան՝ ծառայության մտնելով ցարի բանակում: Նրան հետևելով՝ 1730թ. օգոստոսի 18-ին սղնախցիներից Դերբենդ են անցել 137 հայեր՝ հարյուրապետ Աբրահամի, Ալավերդիի, Բաղիրի, Սիմեոնի, եպիսկոպոս Պետրոսի և գնդապետ Գրիգորի հետ[3]:

Սղնախների առաջնորդների նման քայլը կորստաբեր եղավ լեռնաստանի հայության համար՝ բաց անելով աղետալի գաղթականության ճանապարհը, որն այնուհետև երկար ժամանակ կլանում էր երկրի կենսական հյութերը, թուլացնում և ուժասպառ անում նրան:

[1] Աբրահամյան Ա., նշվ. աշխ., էջ 26:
[2] Левиатов В.Н., Очерки из истории Азербайджана в XVIII веке, Москва, 1951, с. 94.
[3] Армяно-русские отношения во втором тридцатилетии XVIII века, т. III, с. 23.

Հայաթափումն աննախադեպ ու մասսայական չափեր ընդունեց հատկապես Ծար գավառից: Մի քանի տասնամյակների ընթացքում հայաշունչ այս գավառը գրեթե ամբողջովին հայաթափվեց: Արտագաղթածների մի մասը հանգրվանեց Վրաստանում: Չիրքին գյուղի հայերը վերաբնակվել էին Տփղիսում, յանշաղցիները՝ Տփղիսից ոչ հեռու Տաբախմելիք (այժմ՝ Տաբախմելա գյուղը Գարդաբանի շրջանում) գյուղում, խութավանքցիների մի մասը՝ Շուլավերում: Արդեն 1760-ական թվականներին շրջանի տարածքը գրեթե լիովին հայաթափ էր, բացառությամբ Խութավան գյուղի և երբեմնի եպիսկոպոսանիստ ու թեմական կենտրոն Դադի վանքի[1]:

Ծարի լեռնային արոտավայրերը դեպի իրենց էին ձգում Կուր-Արաքսյան տափաստանում ծվարած մահմեդական խաշնարած ցեղերին:

Արտագաղթի ճանապարհն էր բռնել նաև Արցախի մյուս գավառների հայ բնակչությունը: Գյուլիստանի մելիքների մի մասը հանգրվանել էր Կախեթի Թելավ քաղաքում և Վրաստանի կազմում գտնվող Գուգարքի Բողնոփոր գավառում (Բոլնիս): Արտագաղթածների մի մասը բնակություն էր հաստատել Քարթլիի բազմաթիվ վրացական գյուղերում: Միայն շուրջ հարյուր գյուղ էին հիմնադրել արցախահայերը Շաքի և Շիրվան գավառներում[2]: Այս ճանապարհով Արցախի հայությունը Հյուսիսային Կովկասում հիմնեց ինը գյուղ[3]:

Չնայած երկրամասն արնածոր վերքեր ուներ, բայց և այնպես չընկրկեց թշնամու առաջ և հետագա տասնամյակներում նոր եռանդով շարունակեց պայքարը:

---

[1] *Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, Երևան, 1999, էջ 12:*
[2] *Նույն տեղում:*
[3] *Լեո, նշվ. աշխ., էջ 176:*

1729-1731 թվականներին հայ դիմադրական շարժման գլխավոր օջախը դարձավ Գյուլիստանի բերդը, որի հրամանատարը հայկական աղբյուրներում անվանված էր «Աբրահամ սպարապետ», իսկ սուլթանական ֆերմաներում քանիցս հիշվում է «գյավուր Աբրահամ» անունով[1]: Ստամբուլում Ռուսաստանի ներկայացուցիչ Ի.Նեպլյուևին թուրք նախարարը 1730թ. հուլիսի 26-ին բողոքում է, որ, չնայած 1724թ. պայմանագրով Ղարաբաղը տրվել է Թուրքիային, այնուամենայնիվ, այդ լեռնոտ ամուր երկրի բնակչությունը ոչ միայն չի հպատակվում Բարձր Դռանը, այլև համառորեն դիմադրում է կառավարական զորքերին և մեծ վնասներ պատճառում[2]:

Ազատագրական շարժման նոր թափը կոտրելու համար սուլթանը «սրբազան պատերազմ» հայտարարեց հայերին և հատուկ ֆերմանով հրամայեց Երևանի Իբրահիմ փաշային, Բայազետում նստած Մահմուդ փաշային, քուրդ ամիրաներին ու Դաղստանում, Շիրվանում ու Գանձակում տեղակայված իր զորքերին՝ համատեղ ուժերով հիմնահատակ քանդել հայերի բնակատեղիներն ու ամրությունները[3]: Թուրքական ճնշումներին դիմակայելու համար Ներսես կաթողիկոսը նամակով դիմեց գեներալ Վ.Լևաշովին[4]:

Այսրկովկասում Ռուսաստանի քաղաքական ծրագրերի մասին առաջարկություններով իր կառավարության առջև 1733թ. սեպտեմբերի 14-ին հանդես եկավ Պ.Շաֆիրովը: «Սղնախների հայերի միջոցով այս քաղաքը (իմա՝ Շամա-

---

[1] *Բարխուդարյանց Մ., Արցախ, էջ 241:*
[2] *Армяно-русские отношения во втором тридцатилетии 18-го века, т. 3, с. 19.*
[3] *ՀԺՊ, հ.4, էջ 161: История Азербайджана, Баку, 1958, т.1, с. 312.*
[4] *Армяно-русские отношения во втором тридцатилетии 18-го века, с. 27.*

խին-Վ.Բ.) վերցնելու դեպքում,- գրել է Պ.Շաֆիրովը,- կարելի է ամբողջ փոքր Հայաստանը (իմա՝ Արցախը,-Վ.Բ.) կամ ինչպես այժմ են անվանում՝ հայկական սղնախները գրավել, որոնց բոլոր տարածքները հայ քաջ քրիստոնյաներով են բնակեցված և նրանք իրենք ինքնուրույն մի քանի տարի պաշտպանվում էին ինչպես թուրքերից, այնպես էլ պարսիկներից ...»[1]:

Սղնախականների՝ Ռուսաստանի հետ կապված հույսերն ի դերև եղան: Դեռ ավելին, 1732թ. Ռեշտի պայմանագրով Ռուսաստանը Պարսկաստանին վերադարձրեց Գիլանը և Մազանդարանը, իսկ 1735թ.՝ Բաքուն և Դերբենդը[2]: Մնում էր սեփական ուժերին ապավինելով, շարունակել հակաթուրքական պայքարը:

1733 թվականի ձմռանը Գանձակում հաստատված Սարը Մուստաֆա փաշայի զորքերը մտան Վարանդա և Դիզակ: Մելիք Եգանը, իր շուրջը համախմբելով Արցախի մելիքներին, մի գիշերվա մեջ ոչնչացրեց անկոչ հյուրերին: Ռազմագործողությունն Ավետարանոցում ղեկավարում էր մելիք Եգանի քույրը՝ Վարանդայի մելիք Հյուսեինի կինը՝ Աննա խաթունը: Նրա աղջիկը՝ Գայանեն, անձամբ սպանում է իրեն հետապնդող Սուլեյման բեկին[3]:

1730-ական թվականներին Արցախում ծավալված հակաթուրքական շարժման մասին է խոսում նաև Ավետարանոց գյուղի Կուսանաց անապատի գավթում գտնվող Վարանդայի մելիք Հուսեյինի չափածո տապանագիրը.

«Այս է տապան Մելիք Շահնազարի որդի
Մելիք Յուսէինին, թվին ՌՃՁԵ /1736/,

[1] *Армяно-русские отношения во втором тридцатилетии 18-го века, с. 35:*
[2] *Мелик Шахназаров А., Властители Варанды на службе Империи, Москва, 2011, с. 42.*
[3] *Ռաֆֆի, Երկերի ժողովածու, էջ 185-186: Լեո, հ.3, գիրք 2, էջ 254:*

Ոգեմ զբանս գովեստի, ի վերայ
Մելիք Յուսէինի, զոր գրեցի այս տապանի:
Սա էր տէր երկրին Վարանդայի,
ԼԵ /35/ մասի գեղի,
Սա էր հացով, սեղանով լի,
Ողորմէր ամէն ազգի
Կերպարանօքն էր գովելի,
Թագ պարծանք Հայոց ազգի,
Յոյժ կոտորեաց ազգէն դաջկի
Պատերազմեաց յետ Օսմանի
Սա ոչ ետ հարկ թագաւորի
Ամուր պարիսպ էր աշխարհի»[1]:

Սղնախների հայերի սխրանքները համընկնում էին թուրք նվաճողների դեմ ոտքի ելած Պարսկաստանի ժողովուրդների համաշավիղ ընթացքին, որի գլուխ կանգնեց Նադիր շահը: Իրանի ապագա խորամանկ տիրակալը տեսնում էր հայերի հակաթուրքական տրամադրվածությունը և, օսմանցիների դեմ մղվող վճռական գոտեմարտում, հայ մելիքների վրա նայում էր որպես հուսալի դաշնակցի:

Ազատագրական պայքարի այս փուլում, երկարատև հուսախաբությունից հետո, Արցախի մելիքները որոշեցին մի առ ժամանակ ձեռնպահ մնալ ռուսական կողմնորոշումից և համագործակցել վերելքի ուղին բռնած Նադիրի հետ: Նադիրն առանձնապես ջերմ հարաբերություններ ուներ Դիզակի մելիք Եգանի հետ: Նադիրի պալատական պատմիչ Մուհամմադ Քյազիմը բազմիցս հիշատակում է նրան որպես նուրբ քաղաքագետին հատուկ արտակարգ ընդունակություններով օժտված իմաստուն մի գործչի, որը շահի

[1] *Դիվան հայ վիմագրության, պրակ 5, էջ 149:*

կողմից մեծ սիրո և վստահության էր արժանացել[1]: Հայ մելիքները ոչ միայն զորքերով էին մասնակցում թուրքերի դեմ մղվող կռիվներին, այլև հայթայթում էին պարսից բանակի համար անհրաժեշտ պարեն ու հանդերձանք: Թուրք տարեգիրը վկայում է, որ Մուղանում գտնվելու ժամանակ մելիք Եգանը կերակրում էր շահական զորքերին[2]:

Հայերի օգնությամբ 1735թ. հուլիսի 8-ին Եղվարդի մոտ Նադիրը ջախջախիչ հաղթանակ տարավ թուրքերի նկատմամբ: Այնուհետև նա ասպատակեց Կարսից մինչև Կարին և Բայազետ ընկած հարյուրավոր գյուղեր ու քաղաքներ: Բարձր Դուռը հզոր հակառակորդի դեմ ի վիճակի չէր պատերազմը շարունակել: Սուլթանը հարկադրաբար Նադիրի հետ երզրումում 1736թ. հաշտություն է կնքում, որի համաձայն՝ թուրքերը հանձնում են պարսիկներին Արևելյան Հայաստանը, այդ թվում՝ Ղարաբաղը, Վրաստանի մի մասը, Գանձակը, Շամախին ու Ատրպատականը:

Այդ հաղթանակներից հետո Մուղանի «կուրուլթայը» միաձայն 1736թ. ձմռանը Իրանի շահ ճանաչեց Թահմազկուլուն՝ Նադիր շահ անվամբ: Թագադրությունից հետո Նադիրը բարձր պաշտոններ և կալվածքներ տվեց իրեն աջակցած ամիրաներին, զորավարներին, խաներին և հայ մելիքներին: Նադիրն արցախահայերի և մելիքների ռուսամետ տրամադրություններին վերջ տալու, նրանց սիրաշահելու և ռազմական կարողություններն օգտագործելու նպատակով ոչ միայն մելիքներին հաստատում է իրենց իշխանության մեջ, այլև ընդգծված կարգավիճակ է շնորհում՝ ծնունդ տալով նոր վարչական միավորի՝ Խամսայի (արաբերեն՝ հնգյակ, պարսկերեն՝ «Մահալե խամսե») մելիքություններին:

---

[1] *ՀԺՊ, հ.4, էջ 181: Հ.Փափազյան, Հայ-իրանական գինակցությունը 1726-1736թթ. և Արևելյան Հայաստանի քաղաքական իրավիճակը Նադիր շահի օրոք, «ԲԵՀ», թիվ 2, 1972, էջ 76:*
[2] *Լեո, նշվ. աշխ., էջ 254:*

Չնայած նախորդ սղնախական շրջանի համեմատությամբ Արցախի անկախ կարգավիճակն ինչ-որ տեղ սասանվեց, այնուամենայնիվ, պարսկական տերության կազմում երկրամասը ուներ լայն ինքնավարություն:

Մելիք Եգանը, Նադիրից խանական տիտղոս ստանալով, մինչև 1744 թվականը գլխավորեց Խամսայի մելիքությունները: Նա Շիրվանի, Գանձակի, Երևանի բեկլարբեկերի նման ուղղակի ենթարկվում էր Նադիրի եղբոր՝ սիփահսալար Իբրահիմ խանին, որը նստում էր փոխարքայանիստ Թավրիզ քաղաքում:

Ըստ էության, ուշ միջնադարում Մեծ Հայքի հյուսիս-արևելյան մի հատվածում ֆեդերատիվ կառուցվածքով վերածնվեց հայկական մի նոր ծույլ պետական միավոր: Հինգ մելիքություններից կազմված նահանգը, կենտրոն ունենալով Տող ավանը, ճանաչվեց որպես հայկական ինքնավար մի երկիր, որի սահմանները ձգվում էին Գանձակի մատույցներից մինչև Արաքս գետը: Այդ կապակցությամբ Մելիք Եգանի պալատի ընդունարանի մուտքի վիմագիր արձանագրությունը պատմում է. «... Նադիր զորեղ թագավորը իր զորքով եկավ, երկիրը օսմանլուի ձեռքից առավ: Նրան էլ այնքան ծառայություն մատուցեցի, որ նա քրիստոնյա ազգի 6 մահալների՝ Թալիշի, Չարաբերդի, Խաչենի, Վարանդայի, Քոչիզի և Դիզակի վրա, ինձ որպես խան և բեկլարբեկի կարգեց. շնորհ արեց»[1]:

Պատմական բախտորոշ այս ժամանակաշրջանում Արցախի մելիքները, մասնավորապես Մելիք Եգանի նման տաղանդավոր պետական-քաղաքական գործիչը, օգտագործելով Նադիրի հետ ունեցած իր ջերմ հարաբերությունները, հոգում էր ողջ Արևելյան Հայաստանի հայության

---

[1] *Փափազյան Հ., Մելիք Եգանի ընդունարանի մուտքի վիմագիր արձանագրությունը, «ԼՀգ», թիվ 5, 1985, էջ 77:*

հոգսերը: Դրա մասին ամփոփ ներկայացված է Տողի մելիքական ապարանքի ճակատին Մելիք Եգանի թողած վիմագրի մեջ. «Ես թողեցի ոչ Հայասդանաս եսիր տալու»[1]:

Այսպիսով, հայ հասարակական-քաղաքական կյանքի աշխուժացման գործին և նոր զարգացումներին իր ուղղորդիչ դերակատարումով, 1720-ական թվականներից սկսած, առանձնապես կարևորվում է Արցախի մելիքների և, մասնավորապես, Գանձասարի կաթողիկոսության ազդեցությունը: Եթե համաժողովրդական շարժում կազմակերպելու նպատակով նախորդ ժամանակահատվածում նրանք հիմնականում բավարարվում էին ազգային ազատագրական գաղափարների տարածումով և կազմակերպական բնույթի հարցերի լուծումով, ապա 1720-ական թվականների սկզբներից այդ նույն ուժերը գործնականորեն ձեռնամուխ եղան զինված պայքարի միջոցով Արցախում հայոց պետականության վերականգնմանը: Իրագործվեց Եսայի Հասան-Ջալալյանի «Նոր նորոգման» տեսությունը: Արցախահայությունն, առանց դրսի օգնության ոչ միայն դիմակայեց լեզգիական և թուրքական արշավանքներին, այլև թոթափեց պարսկական լուծը: Այդ պայքարի ընթացքում Արցախի գործիչները հայոց պետականության վերականգնման հեռանկարը սկսեցին կապել տարածաշրջանով հետաքրքրված Ռուսաստանի հետ: Ցարական արքունիքը հմտորեն օգտագործեց մահմեդականների լծից հայ ժողովրդի ազատագրվելու ձգտումը: Բնականաբար՝ կայսերական ծավալապաշտ նկրտումներ ունեցող ցարական արքունիքի արտաքին քաղաքական հայեցակետում չէր մտնում Հայաստանի անկախության վերականգնման խնդիրը: Ռուսաստանը, հանդես գալով որպես քրիստոնյաների հովանավոր, ընդամենը փորձում էր Այսրկովկասի հաշվին ընդարձակել իր սահմանները՝ այդ

[1] *Դիվան հայ վիմագրության, պրակ 5, էջ 181:*

հարցում ապավինելով Վրաստանի և Արցախի մելիքությունների օժանդակությունը:

1730-ական թվականների սկզբներին ցարական արքունիքը, համաձայնության գալով շահի հետ, մի առ ժամանակ հետաձգելով տարածաշրջանային ծրագրերի իրագործումը, Այսրկովկասը թողեց Պարսկաստանի տիրապետության տակ: Արցախի մելիքները, հակաթուրքական ճակատ հարդարելու նպատակով, ստիպված սկսեցին համագործակցել Իրանի նոր տիրակալ Նադիրի հետ՝ ծնունդ տալով հայկական մի նոր ինքնավար միավորի՝ Խամսայի մելիքությունների: Արցախում սղնախների հիմքերի վրա ծնված վարչաքաղաքական նոր միավորը, որպես հայոց պետականության արտահայտության ձև, գոտեպնդելով լեռնաշխարհի զինավառ հայությանը, մոտակա տասնամյակներում դարձան հայ ազգային ազատագրական շարժման նոր օջախներ՝ ամրացնելով հավատը միասնության և հաղթանակի համար:

գ/ Պետականության վերականգնման փորձերը Արցախում 18-րդ դարի երկրորդ կեսին և 19-րդ դարի սկզբներին

Խամսայի մելիքությունների կարգավիճակը շատ բանով կախված էր Իրանում տեղի ունեցող քաղաքական անցուդարձերից: Նադիրի սպանությունից հետո Իրանում սկսվում է անիշխանության մի շրջան: Կենտրոնական իշխանության բացակայության և գահի համար մղվող պայքարի հետևանքով Պարսկաստանի տարբեր մարզերի, այդ թվում՝ Այսրկովկասի երկրամասերի շատ իշխողներ անկախություն ձեռք բերեցին: Դժբախտաբար, Արցախի մելիքական տների ներկայացուցիչները ոչ միայն չկարողացան օգտագործել ազգային պետականությունը վերականգնելու նպաստավոր պահը, այլև ինչ-որ չափով կորցրին նախկին կարգավիճակը: Ամենայն հավանականությամբ՝ դա պայմանավորված էր Եսայի Հասան-Ջալալյանի կամ մելիք Եգանի պես համարձակ ու լայնախոհ գործիչների բացակայությամբ: Այս հարցում պակաս բացասական ազդեցություն չունեցան տարբեր գավառների տերերի հատվածական շահերը, որոնք, շատ դեպքերում, տարամիտվում էին համազգային խնդիրներից: Դրան հակառակ՝ ստեղծված խառնակ վիճակից առավելագույնս օգտվեցին Խորասանում ապաստանած շիա աղանդի քոչվոր թուրքախոս ցեղերը, որոնք նորից վերահաստատվեցին Այսրկովկասում, հատկապես՝ Կուրարաքսյան միջագետքում և անհանգիստ կացություն ստեղծեցին Խամսայի սահմանով մեկ: Ավազակաբարո թուրքախոս քոչվորները միավորվեցին ջիվանշիր ցեղի Սարուջալլու տոհմի առաջնորդ Փանահի շուրջ: Շուտով նա պարսից Ադիլ շահից խանի տիտղոս ստացավ և առավել սանձարձակ գործողությունների դիմեց:

Անկայուն երկրում իշխանությունը պահելու համար այս քայլով պարսից տիրակալը, հանձին Փանահի և նոր ձևավորվող վարչական միավորի, փորձում էր ունենալ հուսալի դաշնակից: Մյուս կողմից էլ Ադիլ շահը ռուսական կողմնորոշում ունեցող Արցախի մելիքներին հակակշիռ զսպող ուժ է ստեղծում:

Փանահի համար չափազանց նպաստավոր այս պայմաններում Ղարաբաղում տեղի էին ունենում այնպիսի իրադարձություններ, որոնք համահունչ պետք է լինեին քոչվոր ցեղապետի նկրտումներին: Առիթը հայ մելիքների ներքին գժտություններն էին: Վարանդայի մելիք Շահնազարը, Փանահի զինական ուժն օգտագործելու և Արցախի մյուս մելիքների դեմ պայքարելու համար, որպես վարձատրություն, վերջինիս նվիրաբերեց Շուշիի անմատչելի հին բերդը: Մելիք Շահնազարի այս դավաճանական քայլով պատմության մեջ առաջին անգամ թուրքը փորձեց բնավորվել Ղարաբաղում:

Հայկական, վրացական, պարսկական և ռուսական աղբյուրները միաբերան վկայում են, որ մինչև 18-րդ դարի կեսերը Լեռնային Ղարաբաղում թուրքեր և այլազգի մուսուլմաններ չեն եղել:

Փանահը, իր դիրքերն ամրապնդելու և էթնիկ հենարան ստեղծելու նկատառումով, Վրաստանից և Միլ-Մուղանի տափաստանում վխտող կարաչոռլու, ջինլի, դամիրչի-հասանլի, ղըզըլ-հաջիլլի, սաֆի-քյուրդ, քյոյահմեդլի, սահաթլի, քենգերլի և շատ այլ թափառական ցեղերի փոխադրեց Ղարաբաղ, դրանց բնակեցրեց բերդի շրջակայքում և դաշտային Ղարաբաղից Շուշի տանող ճանապարհների երկայնքով: Ստեղծվեցին համանուն թուրքաբնակ գյուղեր, որոնք արցախյան պատերազմի տարիներին վեր էին ածվել հակառակորդի ռազմական հենակետերի: Միաժամանակ

Շուշիում ստեղծվեց թուրքաբնակ թաղամաս: Նորաստեղծ խանությունն ուներ խիստ ռազմավարական դիրք և Իրանի հետ Այսրկովկասը կապող ամենահիմնական օղակն էր: Պատահական չէր, որ պարսից արքունիքը շուրջ կես դար Ղարաբաղի խանության նկատմամբ վարում էր մտրակի և մեղրաբլիթի քաղաքականություն՝ մերթ խանին կոշտ մեթոդներով իրեն էր ենթարկեցնում, երբեմն էլ տրվում էր հավելյալ առանձնաշնորհներ՝ հարևան խաներին և հայ մելիքներին ենթարկեցնելով վերջիններիս: Փանահ խանը, հիմնավորվելով Շուշիում, Վարանդայի մելիք Շահնազարին դարձրեց իր կատարածուն: Փանահին հաջողվեց նաև Խաչենի մելիքությունը խլել Հասան-Ջալալյաններից և հանձնել Խնձրիստանի գյուղապետ, իր դրածո Միրզախանին: Փաստորեն, դրանով Ղարաբաղը երկատվեց, նրա հարավային թևը՝ Դիզակը կտրվեց Զրաբերդից և Գյուլիստանից: Պատերազմական գործողությունները նոր ընթացք ու թափ ստացան: Դրանք ընթանում էին փոփոխական հաջողություններով և շարունակվեցին նաև Փանահի հաջորդ՝ Իբրահիմ խանի ժամանակ: Լեոն գտնում է, որ Ղարաբաղի խաների դեմ պայքարում հայ մելիքների հերոսական ջանքերը դատապարտվեցին անհաջողության[1]: Մինչդեռ իրականում Ղարաբաղի խաները ոչ թե պատերազմը շահեցին, այլ պարզապես ճակատամարտում հաղթեցին: Դրա մասին է խոսում նաև դեպքերի զարգացման հետագա ընթացքը: Խամսան երկատվեց ու թուլացավ, բայց պայքարը դադար չունեցավ: Իրավական տեսանկյունից երկրամասը պատկանում էր մելիքներին և հայ ազգաբնակչությանը: Պատահական չէ, որ երբեմն Ղարաբաղի խաները մելիքներից կալվածքներ էին գնում: Ղարաբաղի խանի իշխանությունը հիմնականում տարածվեց Շուշիի թուրքական թաղամասի և

[1] *Լեո, հ.3, գիրք 2-րդ, էջ 268:*

դաշտային Ղարաբաղում նոր ձևավորվող մահմեդական բնակավայրերի վրա:

1769թ. հունիսին Հերակլ II-ի կազմած և Ռուսաստան առաքած «Վրաստանին կից երկրների նկարագրությունից» գրության մեջ ասված է. «Խամսան մի երկիր է, որտեղ կան յոթ մելիքություններ: Նրանք բոլորը քրիստոնյաներ են, դավանանքով՝ հայեր, և սրանք ևս պարսից թագավորի արքունիքին հարկատու են եղել: Երբ քայքայվեց Պարսից թագավորությունը, այնտեղի քոչվոր ցեղերից մեկի առաջնորդը, որ մահմեդական էր տոհմով՝ ջոանշեր, հզորացավ և այս Խամսայի կենտրոնում կա հնուց ի վեր ամուր բերդ, խաբեությամբ գրավեց այն: Մի քանի անգամ մեր և այս ջոանշերի միջև տարաձայնություններ եղան և զորությամբն աստծու մեզանից և մեր զորքերից պարտվեցին և ավերվեցին, ո՛չ այն քրիստոնյա հայերը, ո՛չ, այլ միա՛յն այն ջոանշերները: Այժմ այնպիսի պատճառներ ծագեցին, որ մեր և նրանց միջև խաղաղություն է տիրում: Խամսան ունի մեծ ամրություն, շատ լեռներ՝ անտառապատ ու ժայռաշատ և դաշտեր ունի ջրառատ, հույժ բերքատու: Իր երկրում ջոանշերը կարող է հավաքել երկու հազար հինգ հարյուր զինվոր, իսկ հայերը հանդես կգան չորս հազար հինգ հարյուր: Այս երկիրը գտնվում է հարավ արևելյան մասում և տիրում են սրանք մինչև Ղարաբաղի և Գանձակի սահմանները և գտնվում են Շիրվանի, Նախիջևանի, Գանձակի ու Ղարադաղի միջև: Այս Խամսայի բնակիչները շատ քաջ են, պատերազմող և խիզախ, և այս մելիքների միջև վրեժխնդրության և թշնամության ծագումը ջոանշերների ձեռքը գցեց այս հայերին»[1]:

Անսանձ բռնություններից մելիքների վիճակն այնքան էր ծանրացել, որ Գյուլիստանի մելիք Հովսեփն ու Զրաբերդի

[1] *Цагарели А., Граммоты и другие исторические документы, XVIII столетия..., т. 1, с. 434-435.*

մելիք Ադամը (Հաթամը) աստանդական էին դարձել և, իրենց հպատակների հետ միասին, հանգրվանել էին Գանձակի խանությունում ու Վրաստանում: Տարագիր մելիքներն անգործության չմատնվեցին: Նրանք, դաշնակցելով Ուրմիայի Ֆաթալի և Գանձակի Շահվերդի խաների հետ, փորձում էին ազատագրել հայրենիքը: Իր համար անհեռանկար պատերազմում բարենպաստ ելք չտեսնելով՝ Իբրահիմ խանը մելիքներին համոզում է վերադառնալ իրենց տիրույթները և վերականգնում նրանց ինքնավար կարգավիճակը: Ռուսաստանի օգնությամբ Հայաստանի ազատագրության հարցը նորից օրակարգային դարձավ:

Դժվարին այս ժամանակաշրջանում Ղարաբաղ է գալիս Հովսեփ Էմինը: Նա մեծ հույսեր էր կապում Արցախի մելիքների հետ՝ նրանց մեջ տեսնելով ապագա հայկական պետականության հիմնաքարը: Իր ինքնակենսագրության մեջ նա ասել է. «Ես կարծում եմ, որ եթե լինեմ եվրոպական զինվորի նման, կգնամ իմ երկիրը, Լեռնային Հայաստանի (Ղարաբաղ,-Վ.Բ.) հայերի մոտ, որոնք, լսել եմ, որ միշտ անհաղթ են ու քաջ և եթե ես նրանց կարողանամ սովորեցնել պատերազմի արվեստը, դա շատ մեծ օգուտ կտա»[1]:

Հովսեփ Էմինը, հյուրընկալելով Գյուլիստանի մելիք Հովսեփի մոտ, փորձեց միավորել մելիքների ուժերը, կազմել միասնական բանակ և ազատագրել Հայաստանը: Սակայն հանգամանքների բերումով, այդ ամենը մնաց անկատար:

Հայաստանի ազատագրման և հայոց պետականության վերականգնման գործում Արցախի մելիքների դերակատարությանն անդրադարձել է Հովսեփ Էմինի զինակից, Մադրասի հայրենասիրական խմբակի ամենաեռանդուն անդամներից մեկը՝ Մովսես Բաղրամյանը: Մադրասում, 1773թ. հրատարակած «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ» աշխատության մեջ, նա հանգամանալից ներկայացնում է Արցախի հինգ մելիքներին, մանավանդ ջերմ խոսքեր ասում Գյուլիստանի մելիք Հովսեփի հասցեին, որի տանը տասը ամիս ապրել է: Չնայած մելիքների ծանր վիճակին՝ Մովսես Բաղրամյանը գտնում է, որ հայկական պետականության անկումից հետո միակ կազմակերպված ուժը մնում են Արցախի իշխանական տների ներկայացուցիչները, և հայությունը, նրանց շուրջը համախմբվելով, պետք է իրականացնի Հայաստանի ազատագրության գործը[1]:

Որպես գործողության ծրագիր՝ Մ.Բաղրամյանի աշխատությունը Մադրասից ուղարկում են Խամսայի մելիքներին: Գործնական քայլերի դիմելու նպատակով Մադրասի խմբակի անդամները Արցախ են հասցնում նաև զենք ու զինամթերք[2]:

Արցախի մելիքներին սիրաշահելու և պայքարի մեջ ներգրավելու նպատակով 1789թ. տպագրված Շահամիր Շահամիրյանի «Որոգայթ փառաց»-ում նրանց պատշաճ տեղ է նախանշվում. Հայաստանի նախարարը (նախագահը,-Վ.Բ.) պետք է ընտրվի Ղարաբաղում՝ երկրի տարբեր գավառներից այդտեղ եկած պատգամավորների կողմից: Ընտրովի ներկայացուցչական օրենսդիր այդ մարմինը կշարունակեր գործել Ղարաբաղում[3]:

Վերոնշյալ ծրագրի իրագործման նպատակով 1779 թվականին Շահամիր Շահամիրյանը նամակով դիմում է Գանձասարի Հովհաննես կաթողիկոսին, նրան հորդորում երիտասարդության շրջանում հայրենասիրական գաղա-

---

[1] *Գրիգորյան Զ., Հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությունը, էջ 157:*

[1] *Նոր տետրակ, էջ 118-120:*
[2] *Դիւան հայոց պատմութեան, հ.ը, մասն 2-րդ, էջ 378:*
[3] *Շահամիր Շահամիրյան, Որոգայթ փառաց, էջ 21, Դիւան հայոց պատմութեան, հ. ը, մասն 2-րդ, էջ 575*

փարների տարածման համար առաջին հերթին բացել կրթական-լուսավորական հաստատություններ[1]:

1768-1774թթ. ռուս-թուրքական պատերազմը հայ ժողովրդի մեջ երկիրն ազատագրելու նոր հույսեր արթնացրեց: Աստրախանաբնակ մեծահարուստ արդյունաբերող Մովսես Սարաֆյանը 1769թ. հունիսի 8-ին Ռուսաստանի արտաքին գործերի կոլեգիային ներկայացրեց Հայաստանի ազատագրման և պետականության ստեղծման ծրագիր, որի մեջ մեծ տեղ էր հատկացված Ղարաբաղի մելիքներին: Հեղինակը գտնում էր, որ ծրագիրն իրագործելու համար անհրաժեշտ է մելիքներին տրամադրել փող, արհեստավորներ, հրետանու և, ընդհանրապես, ռազմական գործի գիտակներ, ճարտարագետներ, զենք, զինամթերք: Ըստ Մովսես Սարաֆյանի՝ Հայաստանը Թուրքիայի և Պարսկաստանի լծից ազատագրելուց և պետություն ստեղծելուց հետո Արցախի մելիքներից մեկին պետք է կարգել թագավոր[2]:

Չնայած այդ ծրագրերը մնացին անկատար, այնուամենայնիվ, դրանք նոր լիցք հաղորդեցին արցախահայ ազատագրական պայքարին: Ղարաբաղի մելիքները և Գանձասարի կաթողիկոսը քաջ գիտակցում էին, որ անհավասար գոտեմարտում նրանք միայնակ չեն, և համայն հայության ազատագրական ձգտումները սևեռված են հույսի այդ կղզյակի վրա:

Քննարկվող ժամանակահատվածում Այսրկովկասը Ռուսաստանին միացնելու հարցը ցարական արքունիքի համար օրակարգային դարձավ: Այդ ընթացքում կառավարական շրջանակներում առաջ էին քաշվում դեռևս Պետրոս Առաջինի օրոք կազմված մերձկասպյան արշավանքների ծրագրերի իրագործման նախագծեր, որտեղ նորից առաջնային դերակատարություն էր վերապահվում Արցախի մելիքներին: Իբրահիմ խանից հալածական մելիքների մոտ տակավին կենսունակ էր հյուսիսի մեծ հարևանի օգնությամբ երկրի փրկության ծրագիրը: Նրանք, ճիգերի վերջին լարումով ի մի բերելով երկրամասի տնտեսական ու ռազմական կարողությունները, նորից լծվեցին հայկական պետականության վերակերտման գաղափարին:

Դեպի Այսրկովկաս կատարվելիք արշավանքը՝ ռուսական կառավարությունը մտադիր էր իրականացնել նշանավոր զորավար Ա.Սուվորովի հրամանատարությամբ: Սուվորովն ապագա արշավանքի հաջողությունը կապում էր Արցախի մելիքների եռանդուն գործունեության հետ: Մելիքների և Սուվորովի կապն իրականացվում էր Հ.Արղությանի և Հ.Լազարյանի միջոցով: 1780թ. հունվարի 13-ին Սուվորովն իր մոտ է հրավիրում Հ.Արղությանին ու Հ.Լազարյանին և մանրամասն տեղեկություններ ստանում Արցախի մելիքների մասին: Սուվորովն ակնկալում էր, որ Արցախի մելիքների օժանդակությամբ ինքը կազատագրի ոչ միայն Հայոց արևելից նահանգները, այլև՝ Երևանը: 1780թ. Սուվորովը Հ.Լազարյանից զեկուցագիր է ստանում Հայաստանի քաղաքական դրության մասին, որտեղ նշվում է, որ «Հայաստանը ամայացած է, բնակչության մեծ մասը ստիպված է բնակություն հաստատել տարբեր տեղերում, սակայն հայ մելիքները Ղարաբաղում դեռևս պահպանում են իրենց անկախությունը և անհրաժեշտ դեպքում կարող են հանել իրենց զորքերը, որպեսզի վերականգնեն հայկական պետությունը, միայն թե անհրաժեշտ է Ռուսաստանի ռազմական և տնտեսական օգնությունը...»[1]: Սուվորովը ցանկություն է հայտ-

---

[1] *Армяно-русские отношения, т. 4, с. 135-137. Լեռ, հ.3, գիրք 2, էջ 317-320:*
[2] *Иоаннисян А., Иосиф Эмин, с. 220, 223.*

---

[1] *Нерсисян М., Суворов А. и русско-армянские отношения в 1770-1780 годах, с.50.*

նում ժամանել Ղարաբաղ և տեղում ծանոթանալ գործերի վիճակին, նույնիսկ կազմում է Հայաստանի քարտեզը, որը ներառում էր գլխավորապես Ղարաբաղի մելիքությունները: Ղարաբաղի մելիքները նաև ուղղակի նամակներ էին հղում ռուսական կառավարությանը, որի մեջ հայտնում են իրենց հպատակությունը և խնդրում օգնել՝ ազատագրելու իրենց երկիրը: Այդ նամակներից մեկում՝ գրված 1781թ. սեպտեմբերի 2-ին և հասցեագրած Եկատերինա II-ին, մելիք Բեգլարը և մելիք Հաթամն իրենց համարում էին «... ի ազգաց հայոց ի տանիցն Արշակունեաց և Աղուանից ի արքունական գահոյից, մնացեալ ազնիւ զինուորացէն ժառանգ ...»[1]:

Ուշագրավ է նաև 1799թ. սեպտեմբերի 22-ին Պավել I-ին մելիք Զումշուդի գրած նամակը, որի տակ ստորագրված է Փոքր Հայաստանի, Շուշիի և այլ գավառների տեր Արշակունի իշխան մելիք Զումշուդ Շահնազարով[2]:

Սուվորովը, որի մայրը ծագումով արցախցի էր, մեծ հռչակ ուներ Ղարաբաղի հայերի մեջ: Մելիքները ձգտում էին, որ ապագա արշավանքը գլխավորի մեծ զորավարը: «Խնդրում ենք,- գրում են մելիքները Պ.Պոտյոմկինին, - մինչև 10 հազար հետևակ և գոհ կլինենք, եթե դա իրականացվի գեներալ պորուչիկ Սուվորովի գլխավորությամբ»[3]:

Սակայն շուտով Սուվորովին տեղափոխում են Կազան, և նրան այլևս չվիճակվեց զբաղվելու Այսրկովկասի հարցերով: Ռուսական կառավարության հանձնարարությամբ՝ այդ հարցով զբաղվում էր Գ.Ա. Պոտյոմկինի ամենավստահելի բարեկամներից մեկը՝ գեներալ պորուչիկ Պ.Ս. Պոտյոմկինը: Իր նախորդների պես՝ նա ակտիվ շփումներ ունեցավ հայ երևելի գործիչների, հատկապես՝ Հ.Արղությանի և Հ.Լազարյանի հետ: Պ.Պոտյոմկինը մանրամասն տեղեկություններ էր հավաքում Այսրկովկասում ստեղծված քաղաքական և տնտեսական կացության մասին:

[1] *Армяно-русские отношения, т. 4, с. 181.*
[2] *Նույն տեղում, էջ 511:*
[3] *Нерсисян М., Суворов А. и ..., с. 58.*

18-րդ դարի 80-ականների սկզբին ռուսական արքունիքում նոր եռանդով սկսեցին քննարկել Հայաստանի ազատագրության հարցը: Այդ ծրագրերում ամենասուր ուշադրություն էր դարձվել իրական ուժի՝ Արցախի մելիքների վրա: 1783թ. ապրիլի 25-ին Գրիգորի Պոտյոմկինին հասցեագրած իր նամակում էջմիածնի Ղուկաս կաթողիկոսը հիշեցնում էր, թե առանձնապես ջանադիր են մելիքները, առավել ևս՝ Արցախի մելիքները. լինելով անկախ, ինքնիշխան, ունեն բավական թվով զորք և պարենի տեսակետից էլ, հավատացած են, որ կարող են բավարարել կայսերական զորքերին[1]: Ռուսական արքունիքը փորձում էր Արցախի մելիքություններն ապագա Հայաստանի քաղաքական հիմքը դարձնել, իսկ մելիքներից մեկին կարգել հայոց պետության թագավոր: Այդ առթիվ 1783թ. ապրիլի 6-ին Գ.Ա.Պոտյոմկինը հրահանգ է տալիս Պ.Ս.Պոտյոմկինին. «Շուշիի Իբրահիմ խանին պետք է հեռացնել, որովհետև դրանից հետո Ղարաբաղը կկազմի բացի Ռուսաստանից ոչ ոքից կախյալ հայկական նահանգ: Դուք այդտեղ օգտագործեք ամեն ջանք, որպեսզի այս նոր նահանգը կազմակերպվի ժողովրդի համար առավել նպատակահարմար ձևով: Դրանով հայկական այլ խոշոր նահանգներ ևս կհետևեն նրա օրինակին կամ մեծ քանակությամբ կգան Ղարաբաղ»[2]:

Զարգացնելով և կարևորելով այս գաղափարը, Գ.Ա. Պոտյոմկինը, 1783թ. մայիսի 19-ին Եկատերինա II-ին ուղղած զեկուցագրում, ասում է. «Չունենալով դեռևս ձերդ

[1] *Սատենադարան, ձեռ. հմ. 2803, թ. 315:*
[2] *Маркова О., Россия, Закавказье и международные отношения в XVIII веке, Москва, 1966, с. 183.*

կայսերական մեծության հրամանը ես կարգադրություն եմ արել գեներալ պորուչիկ Պ. Պոտյոմկինին Շուշիի Իբրահիմ խանի մասին, որը կմոտեցնի նրա հնազանդությունը: Այստեղ հարկ է նախատեսել, որպեսզի հարմար առիթով նրա նահանգը, որը բաղկացած է հայ ժողովուրդից, տրվի ազգային կառավարման և դրանով իսկ վերականգնվի Ասիայում քրիստոնեական պետություն, ձեր գերագույն կայսերական մեծության խոստումների համաձայն՝ տրված իմ միջոցով հայ մելիքներին»[1]:

Դեպքերի հետագա զարգացումներն ապացուցեցին, որ, ռուսական արքունիքը, ըստ էության, ոչ մի նպատակ չուներ Խամսայի մելիքությունների հիմքերի վրա վերականգնել հայկական պետականությունը: Պարզապես երկդիմի քաղաքականությամբ փորձում էր ստանալ հայերի համակրանքն ու, առանց պատերազմի, իրեն ենթարկեցնել Իբրահիմ խանին:

Ռուս բարձրաստիճան պաշտոնյաները լավ էին հասկանում, որ առաջ քաշելով անկախ Ղարաբաղի գաղափարը, այդ ճանապարհով կստիպեն Իբրահիմին՝ ընդունել իրենց հպատակությունը: Իսկ հայերի հարցում նրանք վստահ էին, որ սիրաշահելու միջոցով մշտապես կվայելեն նրանց համակրանքը: Մի առիթով Եկատերինա II-ը ասել է. «...միայն զենքի ուժով չէ, որ հաղթում են ժողովուրդներին... այլ պետք է նվաճել նրանց վստահությունը... նվաճել սրտերը..., որի համար պետք է ամեն կերպ սիրաշահել և մեր կողմը գրավել ժողովրդի լավագույն մարդկանց»[2]:

Հայոց ազատագրության ամենավճռական պահին Իբրահիմ խանը հերթական անգամ ցույց է տալիս իր դիվանագիտական ճկունությունը և հպատակություն հայտնում Ռուսաստանին: Այդ առթիվ Գրիգորի Պոտյոմկինը զեկույց է ներկայացնում Եկատերինա II-ին, որտեղ հարցնում է, թե հարմար չի՞ լինի արդյոք «այս անգամ շոյենք Իբրահիմին, որպեսզի անհրաժեշտության դեպքում նա մեր բռի մեջ լինի»[1]: Այդպես էլ կատարվում է:

1783թ. նույն մայիսի 19-ին Գրիգորի Պոտյոմկինը հրահանգ է տալիս Պավել Պոտյոմկինին. «...Շուշիի Իբրահիմ խանի հնազանդության և հպատակության մասին նրա խնդրանքը ավելորդ են դարձնում նրա հեռացումը: Ձերդ գերազանցություն, առանց իրականացնելու նախորդ հրահանգը նրա տապալման մասին, հաղորդեք նրան միայն, որ հարկը, որը ռուսական թագուհին կբարեհաճի հարգել, հավատարմությունն է: Եվ այդպես, եթե նա աներեր կմնա դաշինքի մեջ և մշտապես պատրաստ՝ կատարելու գերագույն հրամանները, ապա այդպիսի պայմաններում կարող է հուսալ հպատակության մեջ ընդունումը»: Իսկ Արցախի հայերին սիրաշահելու համար հրահանգ է տալիս «... աշխատեք փաղաքշել հայերին և ներարկել նրանց մեջ բարի կամեցողություն դեպի Ռուսաստանը, որպեսզի նրանց միշտ ջանադիր և պատրաստ ունենալ օգտագործելու այն ձեռնարկումների համար, որոնք հանգամանքներն ու մեր գործերի շահերը կպահանջեն»[2]: Ցարական արքունիքը նմանօրինակ հուսադրական խոստումներ էր տալիս ռուսահայ գործիչներին՝ Հ.Լազարյանին և Հ.Արղությանին:

Մինչդեռ իրականում Գ.Պոտյոմկինն արդեն սկսում է հովանավորել Իբրահիմին և քայլեր է կատարում, որոնք հետին պլան էին մղում հայոց ազատագրության հարցը: Այդ այն դեպքում, երբ Իբրահիմի բանագնացները հավատար-

---

[1] *Иоаннисян А., Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия, с. 238.*
[2] *Маркова О., Россия..., с. 183.*

---

[1] *Գայոյան Գ., Ռուսաստանը և Անդրկովկասի ժողովուրդները, Ե, 1978, էջ 131:*
[2] *Иоанисян А., Россия..., с. 237.*

մագրերով թակում էին ռուսական, թուրքական և պարսկական արքունիքների դռները: Թուրքական սուլթանին ուղղած խնդրագրում նա ասում է. «Ամենապայծառափայլ բարձրյալիդ զեկուցում եմ, որ պատվիրակն եմ դարձնում ինձ վսեմագույն Դռան, որտեղ հենց հրեշտակներն են ապրում և նրանից են հորդում առատություններն անծայր, քան ծովը, ամբողջ իմ կյանքը, կարողությունը, հողերն ու ժողովուրդները ոտքի փոշին են փոխանորդի մեր մեծ մարգարեի: Ողորմագութ տեր, ...քեզանից օգնություն եմ սպասում և եթե զորացնենք մեզ, ապա մեր օրենքի թշնամիներին մենք գլխիվայր կդնենք»[1]: Միաժամանակ Իբրահիմ խանը Պավել Պոտյոմկինին հայտնում է, թե ինքը վաղուց ի վեր ցանկություն է ունեցել դառնալու «ամենամեծաշուք Ռուսական գահի և անսպառ առատաձեռնությամբ գահակալող կայսրուհու հավատարիմ ու հաճակատար ստրուկը»[2]:

Դիվանագիտական քայլերի հետ զուգընթաց՝ Իբրահիմ խանը եռանդուն նախապատրաստվում էր կանխելու Ռուսաստանի հնարավոր առաջխաղացումը: Այդ նպատակով նա հիմնում է Ասկերանի բերդը, միաժամանակ մելիքներից աշխատուժ պահանջում՝ Շուշի բերդաքաղաքի պարիսպներն անմատչելի դարձնելու համար: Չնայած դրան՝ Արցախի մելիքներն ու Գանձասարի կաթողիկոսը համառորեն փորձում են արժանանալ ռուսական արքունիքի բարեգութ վերաբերմունքին:

1783թ. Ադամ և Աբով մելիքների ու Հովհաննես կաթողիկոսի կողմից Պ.Պոտյոմկինին հասցեագրած նամակում նշված է. «հրաման է ինքնակալութենէ պայծառափայլ տերութենէ ձերմէ ելանել և ազատել զազգս մեր ի ձեռաց

[1] Հարությունյան Վ., Արցախ. հիմնահարցի ակունքները, Ստեփանակերտ, 1998, էջ 12:
[2] Ուլուբաբյան Բ., Արցախի պատմությունը (սկզբից մինչև մեր օրերը), էջ 160:

անօրինաց և զերկիրս մեր և զմեզ ի ներքոյ ինքնակալ տէրութեան ձերոյ նուաջել»[1]:

Ռուսական արքունիքի քաղաքական վայրիվերումներն ու հակասական դիրքորոշումը ողբերգական են դառնում Արցախի հայության համար: Ռուսական օգնության խոստումներից խրախուսված՝ նրանք ըմբոստանում են խանի դեմ: Խանն էլ առերես հպատակություն հայտնելու ճանապարհով, նույն ռուսական իշխանություններից իրեն ապահովագրած, դաժանորեն ճնշում, կողոպտում էր հայերին, քայքայում մելիքների ուժերը:

1787թ. Իբրահիմ խանը ձերբակալում է Արցախի մելիքներին՝ Աբովին, Բախտամին, Մեջլումին և Գանձասարի Հովհաննես կաթողիկոսին: Շուշիի բանտում սպանվում են Հովհաննես կաթողիկոսն ու մելիք Բախտամը, իսկ մելիք Աբովին և մելիք Մեջլումին հաջողվում է փախուստի դիմել: Ի պատասխան այդ քայլերի՝ Ռուսաստանի ներկայացուցիչ Ս.Բուրնաշևը և վրաց Հերակլ թագավորը որոշում են շարժվել դեպի Գանձակ և Արցախ: Գանձակի մատույցներում, 1787թ. օգոստոսի 17-ին, Ս.Բուրնաշևը հրաման ստացավ վերադառնալ Ռուսաստան[2]:

Երբ 1787թ. օգոստոսին ռուս-վրացական միացյալ զորքերը հայտնվեցին Գանձակի մատույցներում՝ Արցախի մելիքների մոտ հայրենիքն ազատագրելու նոր հույսեր առաջացան: 1787թ. հունվարին և մարտին մելիք Մեջլումը և մելիք Ադամը նամակով դիմում են Գ.Պոտյոմկինին՝ խնդրելով ազատագրել Արցախը: Գ.Պոտյոմկինը, երկիմաստ պատասխանելուց զատ, նրանց հստակ առաջարկում է տեղափոխվել Ռուսաստան՝ խոստանալով բարեկեցիկ կյանք[3]:

[1] Армяно-русские отношения во II половине XVIII века, т. 4, с. 225.
[2] Иоанисян А., Россия..., с. 188.
[3] Бутков П., Материалы для новой истории Кавказа..., часть II, с. 195.

Հ.Արղությանն Արցախի մելիքներին հորդորում է չհուսահատվել, շարունակել պայքարը՝ ակնկալելով Ռուսաստանի աջակցությունը: 1788թ. հուլիսի 30-ին նա մելիք Մեջլումին և մելիք Աբովին գրել է. «...յամենայն կողմանց կռիվ է ընդդէմ Հագարացւոց և Շուէթաց, չկարծեմ ի յայսմ միջոցի օգնութիւն ինչ լինի ձեզ աստի, եթէ կարէք այլ ինն դուռն գտանել և բախել, և կամ նորին արքայական մեծութեանն աղաչել՝ օգնել ձեզ ...»[1]:

Գանձակի դռներից ռուս-վրացական զորքերի հետ քաշվելուց հետո՝ մելիք Մեջլումն ու մելիք Աբովն իրենց ընտանիքներով ժամանակավոր ապաստան գտան Վրաստանում:

Այս դեպքերի մասին 1789թ. փետրվարին Ղուկաս Կարնեցին գրել է. «Այլ վասն Խամսայու մելիքացն ծանիցես, որքան ինքն ի նոցանէ նուաճեալք էին ընդ ձեռամբ տաճկաց և ունայնացեալք յամենայնէ, մնացեալ էին Մելիք Ադամի որդի Մէճլումն և Մելիք Յովսէփի որդի Ապովն, որք սակաւ մի յիշխանութիւն էին, սակայն և նոքա յանցեալ տարին մինչ Վրաց պետն գնաց ի Գեանջայ, յարեցան ի նա՝ ապստամբելով ի յԻբրահիմ խանէն և, ի դառնալ փութով Վրաց պետին վասն յառնելոյ Լեզկեաց ի սահմանս Վրացտանու, նոքա ևս քանէօք ընտանեօք իւրեանց դատարկ փախեան ի Վրաց երկիրն և զրկեցան յամենայն կայից իւրեանց և ի բնակութեանց»[2]:

Արցախի մելիքները, հայտնվելով անագորյուն վիճակի մեջ և ականատես լինելով 1787-88թթ. դեպքերի նմանօրինակ զարգացումներին, ապագայում պետականության վերականգնման հարցում սրբագրեցին իրենց դիրքորոշումները: Եթե նախկինում Արցախի մելիքներն ակնկալում էին

[1] *Մատենադարան, ձեռ. 2699, թ. 172ա:*
[2] *Մատենադարան ձեռ. 4501, էջ 1395:*

Ռուսաստանից ստանալ օժանդակություն՝ թոթափելու մահմեդականների լուծը և վերակերտելու հայոց պետականությունը, ապա այս անգամ նրանց մոտեցումներն ավելի քան շերտավորված տեսք ստացան:

1. Ռուսաստանի օգնությամբ թոթափել օտարի լուծը և վերականգնել հայոց պետականությունը
2. Առաջին գերխնդիրը չիրականանալու պարագայում՝ ժամանակավոր ապաստան ստանալ Վրաստանում:
3. Իբրահիմ խանի լուծը թոթափելուց հետո հնարավոր է ընդունել նաև Վրաց թագավորի գերիշխանությունը:
4. Եթե Ռուսաստանն այլևս ի վիճակի չէ օգնելու արցախահայությանը՝ տապալելու Իբրահիմ խանին, ապա Արցախի մելիքներն ակնկալում են ցարական արքունիքից՝ ստանալ տարածքներ Դերբենդի շրջակայքում կամ Կասպից ծովի ափերին և ողջ ժողովրդի հետ տեղափոխվել նոր բնակավայր:

Այս մոտեցումները նկատելի են ռուսական արքունիքին և Հովսեփ Արղությանին հասցեագրված Արցախի մելիքների նամակներում[1]:

Տասնամյակներ շարունակ ցարական արքունիքի վարած երկիմաստ քաղաքականությունն Արցախի մելիքներին և ժողովրդին հասցրել էր մի այնպիսի վիճակի, երբ վերջիններս պատրաստ էին հրաժարվել ամեն ինչից, այդ թվում՝ պետականությունից, միայն թե փրկվեին Իբրահիմի ճիրաններից: Նման քաղաքականություն վարվել է նաև 1988-91 թվականներին: Բարեբախտաբար, ժողովրդի համառության և նպատակասլացության շնորհիվ դեպքերն ի նպաստ հայության ընթացան:

[1] *Армяно-русские отношения во II половине XVIII века, т. 4, с. 229-231, 473-474.*

Հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ Արցախի մելիքները և հատկապես ժողովուրդը, պատրաստ չէր հրաժարվել դարերի ընթացքում պահած ու փայփայած պետականության բեկորներից ու հայրենի եզերքից և ապահով, բայց՝ անհեռանկար կյանքով ապրել օտար ափերում:

18-րդ դարի վերջերին Իրանում նորից գահակալական կռիվներ են սկսվում: 1794 թվականին Կաջարների ներկայացուցիչ ներքինի Աղա Մուհամմադ խանն իրեն շահ է հռչակում, որից հետո եռանդուն գործունեություն ծավալում՝ Իրանի տիրապետությունն Այսրկովկասի վրա վերահաստատելու և ռուսների առաջխաղացումը կանխելու համար:

Այսրկովկասի խաներն ու վրաց Հերակլ II թագավորը հրաժարվեցին ընդունել Աղա Մուհամմադ խանի հպատակությունը: Շահին առավել շատ անհանգստացնում էին ռուսական կողմնորոշում ունեցող Արցախի մելիքները: Պարսից շահին ենթարկվելու պարագայում նա խոստացավ ճանաչել մելիքների իրավունքները և տապալել Իբրահիմ խանին: Սակայն Արցախի մելիքները մերժեցին շահին: Դեռ ավելին, նրան դիմակայելու համար անգամ դաշնակցեցին Իբրահիմ խանի հետ: Միայն շրջահայեցություն ցուցաբերեց Ձրաբերդի մելիք Մեժլումը՝ միանալով Աղա Մուհամմադ խանին: Իբրահիմ խանին և անհնազանդ մելիքներին պատժելու համար, 1794թ. ամռանը, Սուլեյման շահզադեի զորքերը մտնում են Արցախ և խայտառակ պարտություն կրում[1]: Արցախում կրած պարտությունը կատաղեցնում է Աղա Մուհամմադ խանին, և նա դաժանությամբ պատժում է ողջ վերադարձած զորապետերին:

Եվ ահա 1795թ. պարսկական 80000-անոց խառնիճաղանջ բանակը, անձամբ Աղա Մուհամմադ խանի գլխավորությամբ, անցնում է Արաքս գետը, մտնում Արցախ և պաշարում Շուշի ամրոցը: Աղա Մուհամմադ շահը չի կարողանում կոտրել Շուշիի պաշտպանների դիմադրությունը: Արցախցի մի ծերունու պատմածի հիման վրա՝ Վարդան Օձնեցին նկարագրում է, թե ինչպիսի խիզախություն են դրսևորել Շուշիի ամրոցը պաշտպանելիս 60 հայ քաջորդիներ, որոնք, ծածուկ դուրս գալով ամրոցից, հանկարծակի հարձակում են գործել թշնամու վրա, խուճապի մատնել և մեծ կորուստներ պատճառել նրանց[1]:

Շրջակա գյուղերի 12 հազար հայ ընտանիքներ, պատսպարվելով Շուշին շրջապատող կիրճերի մեջ, թիկունքից հարվածում էին պաշարողներին[2]: Շուշիի ամրոցի պարիսպների տակ կրած պարտության համար Աղա Մուհամմադ խանի հրոսակները վրեժխնդիր են լինում անզեն ժողովրդից: Պարսից շահն առանձնակի դաժանություն էր ցուցաբերում գերի ընկած բերդապահ հայերի նկատմամբ: Նա հրամայեց ձիերը պայտել այնպես, որ պայտերը լինեն սմբակների երեսին, իսկ մեխերը դուրս ցցված լինեն սմբակների տակից: Ապա գերիներին փռել տվեց գետնին և այդպես, պայտած ձիերով, կոխկրտել տվեց նրանց: Սմբակներից դուրս ցցված մեխերը կատարելապես հոշոտեցին, մսի և արյան զանգված դարձրին այդ թշվառներին[3]:

Չկարողանալով գրավել Շուշին՝ Աղա Մուհամմադ խանը, ասպատակելով Շուշիի շրջակայքում գտնվող հայկական բնակավայրերը, շարժվում է դեպի Թիֆլիս: Քաղաքի բնակիչների մի մասը սրի է քաշվում, իսկ մնացածները տարվում են գերի:

---

[1] *Հայկական աղբյուրները Աղա Մուհամմադ խանի Անդրկովկասյան արշավանքների մասին, էջ 19:*

[1] *Վարդան Օձնեցի, Նոր քաղաքական և եկեղեցական պատմութիւն Հայաստան աշխարհի, մեծի և փոքրու, Մատենադարան, ձեռ. 4331, թ. 135:*
[2] *Տիտանյան Ռ., Նորահայտ նյութեր Շուշի բերդի պաշտպանության մասին, «ԼՀԳ», 1966, թիվ 9, էջ 76-77:*
[3] *Լեո, հ.3, գիրք 2-րդ, էջ 386:*

Շահի զորքը մեծաքանակ ավարով քաշվում է դեպի Մուղանի դաշտ՝ այնտեղ ձմեռելու: Մինչև այդ շահը փորձեց հնազանդեցնել Շամախու և Նուխու խաներին: Բայց նրա զորքերը պարտություն կրեցին: Կատաղած շահն իր թույնը թափեց Թիֆլիսից բերած գերիների վրա: Ավելի դաժան շահը պատժեց Արցախից բերված 52 հայ գյուղապետերի: Նրա հրամանով շինվեց մի քարակիր պատ՝ 52 նեղլիկ անցքերով, որոնց մեջ մտցվեցին գյուղապետերի գլուխները: Ապա պատի մյուս կողմից նրանց պարանոցներին անց կացրին հաստ պարաններ, որոնց ծայրերը կապեցին ամեհի ջորիների գավակներին ու հարվածներով ստիպեցին անասուններին՝ քաշել այդ պարանները: Նրանք այնքան քաշեցին, որ թշվառների գլուխները պոկվեցին[1]:

Աղա Մուհամմադ շահի հաջողություններն Այսրկովկասում ի չիք դարձրին տարածաշրջանում Ռուսաստանի վերջին տասնամյակների ձեռքբերումները: Կորուստները վերականգնելու նպատակով ցարական իշխանություններն անհապաղ միջոցներ ձեռնարկեցին:

Օգտվելով առիթից, որ Խորասանում բռնկված խլրտումները ճնշելու համար Պարսկաստան է ճանապարհվել Աղա Մուհամմադը՝ 1796թ. գարնանը ռուսական արքունիքը գործնականորեն նախապատրաստվում է արշավանքի: Ռուսական էքսպեդիցիոն կորպուսը գլխավորելու էր կոմս Վալերիան Զուբովը: Վերջինիս Եկատերինա կայսրուհու խնդրանքով ուղեկցում էր արքեպիսկոպոս Հովսեփ Արղությանը, որը քաջատեղյակ էր Այսրկովկասում և Պարսկաստանում տիրող քաղաքական կացությանը:

1796թ. մայիսի 10-ին ռուսները գրավում են Դերբենդը: Ռուսական զենքի համար արշավանքը սկզբից ևեթ բարեհաջող էր:

---

[1] *Վարդան Օձնեցի, Մատենադարան, ձեռ. 4331, թ. 158:*

Շուտով ռուսներին են հանձնվում նաև Ղուբան, Շամախին ու Բաքուն[1]: Ռուսական զորքերի այս հաջողությունները պայմանավորված էին նաև այդ վայրերի հայերի աջակցությամբ: Հովսեփ Արղության կոչով ամենուր ստեղծվում են կամավորական ջոկատներ: Ռուսական իշխանություններն Այսրկովկասի քրիստոնյաներին ոգևորելու նպատակով հայտարարել էին, որ իրենց գերխնդիրը իր կալվածքներում Հերակլի իշխանության վերականգնումն է, իսկ հայ մելիքներին և նրանց հպատակ Ղարաբաղի բնակիչներին ազատումը[2]:

1796թ. աշնանը կոմս Վ.Զուբովը համալրում է ստանում և հոկտեմբեր ամսին մի զորաջոկատ, գեներալ Ս.Մ.Ռիմսկի-Կորսակովի հրամանատարությամբ, ուղարկում Գանձակի վրա: Քաղաքը գրավելուց հետո նրանք պետք է միանային ռուսական հիմնական ուժերին և հասնեին Կուր ու Արաքս գետերի խառնվելու վայրը: Հովսեփ Արղությանն այնուհետև խորհուրդ է տալիս «անցնել Կուր գետը և, կանգ առնելով Մուղանի դաշտում, հրաման տալ Շուշու Իբրահիմ խանին, որ նա ինքը գա Ձեր պայծառափայլության մոտ կամ գոնե ուղարկի իր ավագ որդուն հայ մելիքների հետ: Ձեր պայծառափայլության այդ հրամանի կատարումը կդառնա Իբրահիմի՝ դեպի Ռուսաստանն ունեցած հավատարմության և ջերմեռանդության ապացույց: Այնտեղ բոլոր կարևոր գործերը վերջացնելուց հետո, կարելի է անարգել գնալ Թավրիզի կամ Արդեբիլի վրա, ուր որ ավելի հարմար կդիտվի: Իսկ հիշյալ Իբրահիմ խանից անհրաժեշտ է պահանջել նրա որդուն՝ հազար զինվորների հետ և հինգ հայ մելիքներին՝ նրանց հինգ հազար զորքերի հետ, զանազան

---

[1] *Միրզա Յուսուֆ Ներսեսով, նշվ.աշխ., էջ 71-72:*

[2] *Бутков П., նշվ աշխ., մաս 1, էջ 209; Дубровин Н., Поход графа В.А.Зубова в 1796г., "Военный сборник", 1874, н.5, с.13-15.*

գործողությունների համար, մասնավորապես իբրև առաջապահ գնդեր, որովհետև նրանց խորթ չի պատերազմական ոգին: Իսկ եթե Շուշու խանը ձեր հրամանը կատարել չկամենա, այդ կլինի նրա անհավատարմության և խորամանկ խաբեության բացարձակ ապացույց: Այս դեպքում կարելի է գործադրել հայ մելիքներին, որոնք հարմար զենք կդառնան նրան պաշտոնազուրկ անելու և բարձր աստիճանից ու բերդից զրկելու համար, իսկ այնուհետև ամբողջ Ատրպատականը կարելի է հնազանդության մեջ պահել առանց զենքի: Հայ զորքի թիվը, ի մեծ օգուտ Ռուսաստանի, կբազմապատկվի և կհասնի մեծ քանակության, և բոլոր ձեռնադրությունները վերջիվերջո կհանգեն բարեհաջող վախճանի: Շուշու խանը, իր կարծիքով, իր բերդերը համարում է անառիկ, բայց այդ կարծիքի վերաբերմամբ կարող է հեշտությամբ խաբված լինել, որովհետև նրա բերդը և ուժն առավելապես հայերն են կազմում, որոնք թեև կտրիճ ու քաջ են, բայց ճշմարտապես անձնատուր եղած լինելով ռուսաց գահին, ոչ միայն զենք չեն վերցնի ռուսների դեմ, այլև ամեն կարպ կաջակցեն Իբրահիմի կորուստյան, եթե նա ուխտադրուժ կհանդիսանա: Պետք է միայն հայ մելիքներին գաղտնաբար հուսադրել նորին մեծության ողորմությամբ և հովանավորությամբ»[1]: Իբրահիմ խանը կեղծավորաբար, ջերմ հարաբերություններ պահպանելով Զուբովի հետ, միաժամանակ հակառուսական ծրագրեր էր մշակում: Նա Նուխու և Շամախու խաների հետ հակառուսական դաշինք կնքեց: Իբրահիմ խանն իր մոտ կանչեց Վարանդայի մելիք Շահնազարի որդի մելիք Զումշուդին և մահ սպառնաց նրան, եթե հայերի մեջ ռուսամետ շարժում նկատի: Դրանից հետո Իբրահիմ խանը դավադրություն կազմակերպեց Զուբովի դեմ, բայց հաջողություն չունեցավ:

[1] *Լեո, հ.3, գիրք 2-րդ, էջ 386:*

Շուտով նորից ընդհատվեց ռուսական զորքերի հաղթարշավը: 1796թ. նոյեմբերի 6-ին մահացել էր Եկատերինա II-ը, և նոր կայսր Պավել I-ը, լինելով իր մոր քաղաքական ծրագրերի հակառակորդը, քմահաճորեն չէր ցանկանում շարունակել այդ արշավանքը: Ռուսական զորքերի հեռանալը ծանր հարված էր հայության համար: Ժողովուրդն ապրում էր տագնապալից օրեր: Մշտապես կրկնվող պատերազմական գործողությունների հետևանքով Արցախի, Սյունիքի և Գանձակի շրջաններում սովն ու մահտաբժամը սովորական երևույթներ էին: Հայության մի մասը ստիպված լքում էր իր հայրենիքը՝ հեռանալով Վրաստան և Ռուսաստան: Շուրջ 500 հայ ընտանիքներ բնակություն են հաստատում Կիզլյարում և շրջակա բնակավայրերում[1]:

Ռուսական զորքերի հեռանալուց հետո, 1797թ. գարնանը, Աղա Մուհամմադ շահը նոր արշավանք սկսեց դեպի այսրկովկասյան երկրներ: Շահը Խուդափերինի կամրջով, անցնելով Արաքսը, շարժվում է դեպի Շուշի: Ղարաբաղի Իբրահիմ խանն իր մերձավորներով լքում է ամրոցի պաշտպաններին և ապաստանում Դաղստանի Ումմա խանի մոտ: Այս անգամ Աղա Մուհամմադ շահը գրավում է Շուշին և ավերում այն, սրի անցկացնում բնակչությանը: Շահի դաժանություններից զերծ չէին մնում նաև իր իսկ անմիջական սպասավորները: Եվ նրանցից մեկը՝ Սաֆար Ալին, գիշերով մտնում է շահի ննջարանը և դաշույնի հարվածներով վերջ դնում բռնակալի ոճրաշատ կյանքին[2]: Դրանից հետո պարսից զորքը խառնիճաղանջ խմբերով հեռանում է դեպի Իրան, ուր պայքար էր սկսվել իշխանության համար:

[1] *Бутков П., նշվ.աշխ., մաս 2, էջ 424-425:*
[2] *Հայկական աղբյուրները Աղա Մուհամմադ խանի Անդրկովկասյան արշավանքների մասին, էջ 21:*

Արցախահայությունն ապրում էր իր պատմության թերևս ամենատագնապալից ու մղձավանջային օրերը: Աղա Մուհամմադ շահի և Հյուսիսային Կովկասի խառնամբոխ ցեղերի պարբերաբար կրկնվող ասպատակությունները, Իբրահիմ խանի խարդավանքներն ու հայաջինջ քաղաքականությունը քամել էին Արցախի կենսատու ուժերը: Այս ամենին գումարվեց երաշտն ու բնական մյուս աղետները: Երկրամասում մոլեգնում էին սովն ու համաճարակ հիվանդությունները: Ավանդությունները պատմում են, որ մարդիկ գերեզմաններից հանում էին նոր թաղած մեռելներին և ուտում, հարձակումներ գործում գերիներ խլելու և մորթելու համար, երեխաներից մի քանիսին սպանում էին՝ մյուսներին հանգստացնելու[1]: Գաղթականների հոծ զանգվածներ, տեղափոխվելով Վրաստան, մի կտոր հացի համար վաճառում էին իրենց երեխաներին[2]: Երկրամասի ազգաբնակչության թվաքանակը խիստ կրճատվեց: Եթե 18-րդ դարի 80-ական թվականներին Արցախում ապրում էր 60.000 ընտանիք, ապա 19-րդ դարի սկզբներին նրանց թիվը հասավ 24.000-ի[3]:

Չնայած Իբրահիմ խանի դեմ անհավասար պայքարում մելիքների ուժերը ջլատվել էին, բայց պայքարը դադար չունեցավ:

18-րդ դարի վերջերին և 19-րդ դարի սկզբներին սկսվում է արցախահայության ազատագրական պայքարի և Ռուսաստանին միանալու եզրափակիչ փուլը:

Վարանդայի մելիք Զումշուդը և նրա քրոջ որդի Գյուլիստանի մելիք Ֆրեյդունը 1797թ. մեկնեցին Աստրախան՝ նպատակ հետապնդելով Հովսեփ Արղությանի միջնորդությամբ

[1] *Ахмедбек Джеваншир, О политическом существования Карабахского ханства, с. 38.*
[2] *Հայկական աղբյուրները Աղա Մուհամմադ խանի Անդրկովկասյան արշավանքների մասին, էջ 192:*
[3] *Сейранян П., Карабах и Россия, Страницы истории, с. 97.*

հանդիպել Պավել կայսրի հետ: Արցախում հայոց պետականությունը վերականգնելու համար մելիքներն ակնկալում էին ստանալ ցարի օժանդակությունը: Իր հերթին Ղուկաս Կարնեցի կաթողիկոսը հատուկ ուղերձով դիմեց կայսրին՝ հովանավորության տակ առնելու հայ ժողովրդին: 1798թ. փետրվարի 26-ի կայսերական հրովարտակով իր նախորդների՝ Պետրոս Ի-ի, Եկատերինա Ի-ի և Եկատերինա Ի-ի նման, հայոց կաթողիկոսին, մելիքներին, յուզբաշիներին ու կառավարիչներին, ողջ հայ ժողովրդին և մասնավորապես Ռուսական կայսրության սահմաններում բնակվող հայերին, Պավել Ի-ը վերցնում է իր կայսերական ողորմածության ու պաշտպանության ներքո[1]: 1799թ. հունիսի 2-ի հրովարտակի մեջ Պավել Ի-ը մելիք Զումշուդ Շահնազարյանին և մելիք Ֆրեյդուն Բեգլարյանին անվանում է Ղարաբաղի ինքնակալ տերեր[2]: Չնայած այդ հավաստիացումներին և վերաբերմունքին՝ Պավել Ի-ը, ըստ էության, հրաժարվել էր Այսրկովկասում հայկական դուստր պետության ստեղծման գաղափարից՝ նպատակ հետապնդելով բռնազավթել երկրամասը: Իրենց հեռագնա ծրագրերն իրագործելու նպատակով՝ ցարն ամեն կերպ ձգտում էր Ռուսաստանի նկատմամբ Արցախի մելիքների և ժողովրդի բարյացակամ տրամադրությունը պահպանել:

Աստանդական դարձած մելիքներն Աստրախանում երկար սպասելուց հետո, 1799թ. մեկնեցին Պետերբուրգ և, Հ.Արղությանի միջնորդությամբ, ներկայացրին կայսրին իրենց աղերսագրերը:

Պավել կայսրն ընդունեց երկու մելիքներին ռուսաց հպատակության տակ: Մելիք Ֆրեյդունը ստացավ Բորչալուի մի մասը, իսկ մելիք Զումշուդը՝ Լոռին: Գյուլիստանի մելիք

[1] *Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа, ч. 1, с. 194-196.*
[2] *АКАК, т. 1, док. 875, 876.*

Աբովը հաստատվեց Բոլնիսում: Մելիքներին նշանակեցին ամենամյա թոշակ և տրվեցին շքանշաններ: Այս ճանապարհով ցարը վերացնում է արցախահայ պետականության վերականգնման վերջին հնարավորությունը:

Բարեբախտաբար, արցախահայությունը տուրք չտվեց իր մելիքների մի մասի ցանկություններին՝ տեղափոխվել նոր տիրույթներ: Ժողովուրդն, ամուր կառչած իր հողին, շարունակեց պայքարն ազատության համար:

Աղա Մուհամադ շահի սպանությունից հետո նրա եղբորորդին՝ Ֆաթալի շահը, անցնելով իշխանության գլուխ, փորձեց Պարսկաստանի գերիշխանությունը նորից վերահաստատել Այսրկովկասում: Դաշնակիցներ ձեռք բերելու և հակառուսական ճակատ ստեղծելու համար շահն իր հերթին փորձում էր սիրաշահել Արցախի մելիքներին: Այդ նպատակով պարսից շահը մելիք Զումշուդին և մելիք Ֆրեյդունին նամակ-հրավեր է ուղարկում՝ վերադառնալ իրենց տիրույթները՝ խոստանալով շահական հովանավորություն[1]: Նույն ժամանակահատվածում Ֆաթալի շահը Իբրահիմ խանից պահանջել է մելիքների նկատմամբ փաղաքշական վերաբերմունք ցուցաբերել[2]: Մելիքները ոչ միայն տեղի չտվեցին, այլև շարունակեցին հավատարիմ մնալ ցարական արքունիքին: Պարսից շահն այս անգամ փորձեց հարցը լուծել ռազմական ճանապարհով: Այդ գործում առանձնակի եռանդ էր ցուցաբերում թագաժառանգ Աբբաս-Միրզան: 1800թ. գարնանը նրա զորքերը մտան Արարատյան դաշտավայր և պաշարեցին Երևանը: Բերդաքաղաքը գրավել նրանց չհաջողվեց:

Դեպքերի զարգացման ընթացքն ի նպաստ Ռուսաստանին դարձնելու համար Հերակլ թագավորի որդի Գիորգի

[1] *АВПР, ф. СРП, оп. 77/6, 1796-1800, д. 473, л. 310, Армяно-русские отношения во второй половине XVIII века, т. IV, 1990, с. 510.*
[2] *АВПР, ф. СРП, оп. 77/6, д. 490, л. 17.*

XII-ի մահվանից մեկ տարի հետո՝ 1801թ. սեպտեմբերի 12-ին, Ալեքսանդր I-ի հրովարտակով, վերացվեց վրաց թագավորությունը, և Վրաստանը միացվեց Ռուսաստանին: Ալեքսանդր I-ի մանիֆեստով՝ Ռուսաստանին միացվեց նաև հայկական Լոռին, Փամբակը, Շամշադինը և Հայաստանի հյուսիսային մի քանի այլ շրջաններ:

1804թ. հունվարին Գյանջայի գրավումով այստեղ բնակվող հայերը նույնպես անցան ռուսական հպատակության ներքո: Այնուհետև ռուսական հրամանատարությունը սկսում է եռանդուն նախապատրաստություն տեսնել՝ գրավելու ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող Երևանի ու Նախիջևանի խանությունները և Շիրակը:

Ռուս-պարսկական խորացող հակասությունները շուտով վերաճեցին 1804-1813թթ. պատերազմի:

Դեպքերի սրընթաց զարգացումից անհանգստացած՝ Իբրահիմ խանը որոշեց հարաբերություններ հաստատել ռուսների հետ: Պարսկաստանն էլ, Ղարաբաղը կորցնելու հեռանկարից խուսափելու նպատակով, 1805թ. հունվարին մեծաքանակ մի զորագունդ է ուղարկում Արցախ: Դեռևս Շուշի չհասած՝ Դիզակում հայ կամավորները խայտառակ պարտության են մատնում պարսիկներին:

Իբրահիմ խանի վրա ճնշումն ուժեղացնելու նպատակով Շուշի է ուղարկվում մայոր Լիսանևիչի գլխավորությամբ ռուսական մի ջոկատ:

Իբրահիմ խանը ստիպված գնաց զիջումների: 1805թ. մայիսի 14-ին, Գանձակից 30 վերստ հեռավորության վրա, Քյուրակչայ գետի մոտ, գեներալ Ցիցիանովը և Իբրահիմ խանը ստորագրեցին պայմանագիր: Որպես շահագրգիռ կողմ՝ հայերից ներկա էին Թիֆլիսի և Գանձակի առաջնորդ Հովհաննես արքեպիսկոպոս Գեղարդակիրը և Վարանդայի մելիք Զումշուդ Մելիք-Շահնազարյանը: Պայմանագրով Ղա-

ռաբաղն ընդունում է Ռուսաստանի հովանավորությունը, Շուշիում պետք է տեղակայվեին են ռուսական զորքեր, ռուս աստիճանավորների հսկողության տակ Ղարաբաղը ղեկավարվելու էր խանի կողմից: Ռուսական արքունիքը միաժամանակ խոստանում է Իբրահիմի և նրա ժառանգների իշխանությունը մշտապես պահպանել[1]:

Միջազգային իրավունքի տեսանկյունից՝ այս պայմանագիրը վավերական չէ: Նախ և առաջ Ղարաբաղի հողը, ջուրը և ազգային հարստությունը պատկանում էին մելիքներին և նրանց հայ հպատակներին: Իսկ Ղարաբաղն այդ պահին Պարսկաստանի մի նահանգն էր, և այդ երկրի իրավասու մարմինները Իբրահիմ խանին չէին լիազորել նման համաձայնագիր կնքել:

Փաստորեն, այդ դաշնագրով ցարական Ռուսաստանն անսքող կերպով ցույց տվեց մերկապարանոց, շահախնդիր արտաքին քաղաքականության էությունը՝ հարազատ մնալով ծավալապաշտ նկրտումներին՝ անտեսելով մինչև վերջ իրեն հավատարիմ մի ամբողջ ժողովրդի՝ իր հայրենիքում ազատ ապրելու խնդրանքը՝ ամենակոպիտ ձևով ոտնահարելով Ղարաբաղի մելիքների իրավունքները: Այս նույն ձեռագիրն ուներ նաև 1921թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագիրը և 1921թ. հուլիսի 5-ի Կովկասյան բյուրոյի հայտնի որոշումը:

Ադրբեջանի պատմաբանները, անհարկի արժևորելով իրավական տեսանկյունից խոցելի Քյուրակչայի պայմանագիրը, 2005թ. Բաքվում հրատարակել են հոդվածների ժողովածու[2]: Հարազատ մնալով փաստերն աղավաղելու և նենգափոխելու իրենց որդեգրած գործելաոճին, Ի.Ալիևը, Բ.Մամեդովը, Գ.Մամեդովան, Վ.Փիրիևը, Օ.Էֆենդիևը փորձել են Արցախի պատմությունը հարմարեցնել Ադրբեջանի պետական շահերին: Նրանք ոչ միայն մերժել են 18-րդ դարի պատմական իրողություններում Արցախում և Ուտիքում հայության ներկայության փաստը, այլ նաև իրենց հոդվածներում օգտագործված սկզբնաղբյուրները հավատաքննության ենթարկելով՝ «սուննի», «շիա», «մուսուլման», «պարսիկ» բառերը դարձրել են «ադրբեջանցի», ըստ այդմ հիմնավորելով հայկական հողերի նկատմամբ իրենց ղեկավարության հավակնոտ ծրագրերը:

Իրենց մոգոնած ստերը հավաստի դարձնելու և միջազգային հանրությանը մոլորեցնելու նպատակով նրանք շրջանառության մեջ են դրել մեկ այլ կեղծիք ևս, ըստ որի հայերը Արցախ-Ղարաբաղում հայտնվել են միայն Թուրքմենչայի պայմանագրից հետո[1]: Ավելին, նրանք աշխարհին փորձում են ներկայացնել իրենց «մեծահոգությունը», որ հայերին իրենց հողում հյուրընկալել են, իսկ վերջիններս երախտամոռ են գտնվել: Ցանկալին իրականության տեղ ընդունելով և նենգափոխելով 1823թ. Պ.Երմոլովի և Պ.Մոգիլևսկու կողմից Ղարաբաղում բնակչության հաշվառման արդյունքները, Զ.Հաջիևան, չգիտես որտեղից, գրում է, որ այդ ժամանակ երկրամասի ազգաբնակչության 80 տոկոսը ադրբեջանցիներ էին[2]: Շարունակելով այդ մտավարժանքները և իբր չընդունելով Պ.Երմոլովի և Պ.Մոգիլևսկու տեղեկությունները, Զ.Հաջիևան գտնում է, որ քննարկվող ժամանակահատվածում ադրբեջանցիների թիվը իրականում ավելի շատ էր:

---

[1] *АКАК, т. II, с. 704-705.*

[2] *Карабаг. Кюрекчайский договор -200", Сборник статей, Баку, 2005.*

[1] *Мамедов С., Азербайджан по источникам XV- первой половине XVIIвв., Баку, 1993; Мамедияров И., Мусаев Г., Армяно-азербайджанский конфликт: История, право, посредничество, Тула, 2007; Карабах вчера, сегодня и завтра, материалы научно-практических конференций, вторая часть, Баку, 2009.*

[2] *Гаджиева З., Гарабагское ханство; социально-экономические отношения и государственное устройство, Баку, 2008, с. 7.*

1805թ. գարնանը Աբաս-Միրզան, մեծ բանակով անցնելով Արաքսը, մտնելով Ղարաբաղ՝ պաշարեց Շուշին: Ռուսական կայազորը Լիսանևիչի գլխավորությամբ և տեղի հայ կամավորների օժանդակությամբ համառ դիմադրություն ցույց տվեց թշնամուն:

Իբրահիմ խանը, չնայած իր երդմանը, որոշեց միանալ Աբաս Միրզայի զորքին՝ իր ընտանիքով գիշերը լքելով բերդը: Լիսանևիչը և մելիք Զումշուդը, իմանալով դրա մասին, հետապնդում են խանին և, Խանեն բաղ կոչվող տարածքում, սպանում են նրան ու նրա ընտանիքի մյուս տղամարդկանց:

Նկատենք, որ այդ դժվարին պահին ռուսական հրամանատարությունը նորից զգաց արցախահայության օգնության կարիքը: «Ինձ հայտնի է ձեր վաղեմի քաջությունը, ուստի և կանչում եմ ձեզ՝ մեծ և ամենազոր թագավոր կայսրի սրբազան անունով,- կարդում ենք արցախահայությանը ուղղված գեներալ Ցիցիանովի դիմումի մեջ,- միանալ նրա մեծափառ և անպարտելի ռուսական զինվորներին՝ ընդդեմ պարսկական զորքերի...: Ներշնչվեցեք ձեր նախկին քաջությամբ, պատրաստ եղեք այս տարվա հաղթություններին և ռուսական զորքեր ուժեղ օգնությամբ ցույց տվեք, որ դուք այժմ էլ նույն քաջ ղարաբաղցի հայերն եք, ինչպես առաջ եղել եք ահարկու պարսկական հեծելազորի համար»[1]:

Արցախահայությունը, անսալով Ցիցիանովի կոչին, նորից լծվեց ռուսական զենքի հաղթանակներին:

Շուշիի պաշտպաններին օգնելու համար Գանձակից, զնդապետ Կարյագինի հրամանատարությամբ, ուղարկվում է 500 հոգանոց մի ջոկատ՝ երկու հրանոթով: Ասկերանի մոտ ռուսական զորքերին շրջապատում է պարսկական Փիր-Ղուլի խանի 10 հազարանոց բանակը: Պարսից առաջապահ զորքերին օգնության է հասնում Աբաս Միրզայի 30 հազարանոց բանակը: Գումարտակի ծանր վիճակի մասին Շուշիի կայազորին տեղյակ է պահում կուսապատցի Վանի Աթաբեկյանը: Նրա օգնությամբ Կարյագինի գումարտակն Ասկերանից գաղտնի հեռանում և ամրանում է Շահ-Բուլաղ բերդում: Աբաս-Միրզան փորձում է պաշտպաններին սովի մատնելով՝ հարկադրել անձնատուր լինել: Ստեղծված կացության մասին Վանի Աթաբեկյանն իր եղբոր՝ Հակոբի միջոցով նամակ է ուղարկում Ելիզավետապոլ՝ գեներալ Ցիցիանովին, իսկ ինքը՝ հաց և այլ սննդամթերքներ հասցնում սովի մատնված զինվորներին:

Հույսը կտրելով օժանդակ ուժեր ստանալուց, հուլիսի 7-ի գիշերը, Վանի Աթաբեկյանի ուղեկցությամբ, Կարյագինի գումարտակը թշնամուց աննկատ հասնում է Մոխրաթաղ գյուղ: Կուսապատում հոր տանը գտնվող այլուրի պաշարները հանձնելով ռուս զինվորներին՝ նրանց բարեհաջող հասցնում է ռուսական հիմնական ուժերին: Այս քաջագործությունների համար Ցիցիանովը Վանի Աթաբեկյանին նվիրեց իր արծաթե ժամացույցը[1]:

Հետագայում Վանի Աթաբեկյանը, 60 հայ կամավորների գլուխ անցած, կռվում է ռուս-պարսկական ճակատի ամենաթեժ կետերում: Արցախի հայությունը, նրա մելիքական ուժերը, երկիրն ազատագրելու նպատակով կռվում էին ոչ միայն հայրենի եզերքներում, այլև ուր անհրաժեշտ լիներ, ուր ռուսական հրամանատարությունը հարմար գտներ:

Երևանի՝ 1804թ. պաշարման ժամանակ ռուսական զորքերին մեծ օգնություն ցույց տվեց Գյուլիստանի Մելիք-Աբովի որդի Ռոստոմ բեկի գլխավորած հայկական հեծյալ ջոկատը:

Ռոստոմ բեկն անձնազոհության հրաշալի օրինակներ ցույց տվեց Բոլնիսում, Փամբակի ու Ապարանի մարտերում:

[1] *АКАК, т.II, с.833.*

[1] *Потто В., Первые добровольцы Карабага, с. 24-29.*

Անհավասար մարտերում ընկան Ռոստոմ բեկի ջոկատի մարտիկներից շատերը, իսկ ինքը՝ հրամանատարը, վիրավոր վիճակում գերվեց և շղթայակապ ուղարկվեց Թավրիզի բանտը, որտեղ և, դաժան խոշտանգումներից հետո սպանվեց[1]:

Ծերունի Մելիք Աբովը, որդու հերոսական նահատակությունից հետո, գլխավորեց հայկական ջոկատը և արիության բազում օրինակներ ցույց տվեց:

1806թ. Ղարաբաղում պարսկական զորքերի դեմ մղվող մարտերում աչքի ընկավ Մելիք-Զումշուդ Շահնազարյանի հեծյալ ջոկատը: Ֆելդմարշալ Գուդովիչը, բարձր գնահատելով հայորդու ցուցաբերած ծառայություններն ու հմտությունը, գլխավոր շտաբ էր ներկայացրել Մելիք-Զումշուդ Շահնազարյանին՝ փոխգնդապետի աստիճան շնորհելու համար:

Հայ ժողովրդի ջանադիր մասնակցությամբ՝ ռուսական զենքի հաղթանակներն ամբողջականացվեցին 1813թ հոկտեմբերի 12-ին Գյուլիստանի հաշտության պայմանագրով: Այն ստորագրում են Ռուսաստանի լիազոր՝ Ռտիշչևը և Պարսկաստանի ներկայացուցիչ Միրզա Աբդուլ Հասան խանը: Պարսկաստանը ճանաչեց Դաղստանի ու Արևելյան Վրաստանի, ինչպես և՝ Գյանջայի, Ղարաբաղի, Շաքիի, Շիրվանի, Դերբենդի, Ղուբայի, Բաքվի, Թալիշի խանությունների միացումը Ռուսաստանին: Ըստ պայմանագրի երկրորդ կետի՝ այս տարածքների հետ Պարսկաստանը հրաժարվում էր նաև Արևելյան Հայաստանի՝ Ղարաբաղի, Լոռու, Փամբակի, Շամշադինի, Զանգեզուրի և Շորագայլի գավառներից: Պարսկաստանը զրկվում է Կասպից ծովում նավատորմ ունենալու իրավունքից[2]:

---

[1] *ՀԺՊ, հ.5, էջ 127:*

[2] *Договоры России с Востоком политические и торговые, С.-Петербург, 1869, с. 208-214; Советско-иранские отношения в договорах, конвенциях и соглашениях, Москва, 1946, с. 24-26.; "Тесакет", 1994, N 15, с. 25.*

Անկախ նրանից, թե ցարական իշխանություններն Այսրկովկասում ինչ նպատակներ էին հետապնդում, այն համապատասխանում էր Ղարաբաղի հայության ազատագրական ձգտումներին:

Գյուլիստանի պայմանագիրը մեր ժողովրդի համար պատմական անանցանելի իրողություն է: Այն մի ավելորդ անգամ վկայում է, որ Ղարաբաղն առանձին ազգային-պետական միավորի կարգավիճակով է անցել Ռուսաստանի տիրապետության տակ: Հետևաբար, ինչպես ներկայիս Ադրբեջանը կազմող տարածքները, այնպես էլ ԼՂՀ մաս հանդիսացող շրջանները Ռուսաստանին են անցել հավասար իրավասուբյեկտային կարգավիճակով: Ուրեմն, եթե խորհրդային կայսրության փլուզումից հետո վերոհիշյալ երկիրը իրեն իրավունք է վերապահում ստեղծել ազգային պետականություն, այդ նույնից օգտվում է նաև Ղարաբաղը: Գյուլիստանի պայմանագիրը կարող է քաղաքական ուղենիշ հանդիսանալ ԼՂՀ՝ արդեն ձևավորվող արտաքին քաղաքականության և դիվանագիտության սկզբունքների մշակման համար: Այն, բացի քաղաքական պատճառաբանություններից, ունի նաև իրավական ամբողջացված դաշտ՝ մեր օրերի թելադրած տեսակետի առումով: ԼՂՀ ճանաչման իրավական կողմի առաջնային քայլն անպայման պետք է կապել Գյուլիստանի պայմանագրի հետ:

Այստեղ Ադրբեջանը հանդես է գալիս որպես երկրորդական դեմք: Հիմնական կնճիռը Ղարաբաղ-Ռուսաստան կապն է, որովհետև, կամա թե ակամա, Ռուսաստանն ինքը եթե հիմա կանգնած է իր պետականության կայացման ճանապարհին և այն փորձում է իրականացնել քաղաքակիրթ չափանիշներով, չի կարող խուսափել իր պատմության իրավա-պայմանագրային հիմունքներից: Այսինքն՝ հաշվի նստելով այդպիսի հիմունքներից մեկի՝ Գյուլիստանի պայմանագրի հետ, Ռուսաստանը պիտի կողմնորոշվի ստացած

ժառանգության նկատմամբ: Իսկ պետա-իրավական ժառանգությունը ոչ թե հպանցիկ երևույթ է, այլ տվյալ տերության գոյության ընթացքում մշակված պետական շահերի ամբողջություն: Հետևաբար, եթե Գյուլիստանի պայմանագրով Ղարաբաղն ինչ-որ չափով ինքնուրույնացված միավոր է Հայաստանի համար, ապա Ադրբեջանի մասին խոսք անգամ լինել չի կարող:

Գյուլիստանի պայմանագրի քաղաքական-իրավական ուժի արտահայտություններից մեկն էլ այն է, որ այդ պայմանագիրը պաշտպանության կարիք չունի: Խուսափումը նրանից նրան առնչվող ցանկացած պետության կողմից ուղղված է հենց դրա դեմ: Որովհետև կիսատ-պռատ ուժեղ-մշտական պետություն չի լինում, այլ լինում է հզոր երկիր, որի կառուցման հիմքում դրվում է քաղաքակրթության կողմից մշակված պետական-քաղաքական սկզբունքներն ամբողջությամբ:

Այսպիսով, 18-րդ դարի երկրորդ կեսին Արցախում տեղի ունեցած քաղաքական նոր վերադասավորությունները՝ Ղարաբաղի խանության ասպարեզ գալը և դրա հետևանքով ստեղծված հայ հանրության ծանր, անտանելի վիճակն ու մելիքների իրավունքների սահմանափակումը պատճառ են դառնում ազգային ազատագրական պայքարի աննախադեպ վերելքին և հայկական թագավորության վերակերտման գաղափարի վերակենդանացմանը:

Սեփական ուժերով անհնարին համարելով վերոնշյալ ծրագրի իրագործումը՝ քննարկվող ժամանակաշրջանում Ռուսաստանի օգնությամբ Հայաստանի ազատագրության հարցը դարձավ հայկական դիվանագիտության առանցքը:

Ցարական արքունիքն էլ իր հերթին, հմտորեն օգտագործելով հայության ակնկալիքները, իր արտաքին քաղաքական ծրագրերի իրագործման համար, առավելագույնս նպատակաուղղելով մելիքների զինական ուժը, 19-րդ դարի սկզբներին տարածաշրջանում ապահովեց գերիշխող դիրք:

Պարսկական իշխանություններն ու Իբրահիմ խանը, հանձին Արցախի մելիքների և Գանձասարի կաթողիկոսի, տեսնում էին դեպի Այսրկովկաս ռուսների մուտքն ապահովող ուժի, ուստի ամենադաժան և հետևողական ձևով փորձում էին վերացնել հայկական պետականության վերջին բեկորները:

Ցարական արքունիքը, Արցախի մելիքությունների մեջ տեսնելով իրական կազմակերպված կառույցների և հավատարիմ դաշնակիցների, նրանց հետ մշտական կապեր էր պահպանում՝ վերջիններիս առաքելով նամակներ, հրովարտակներ, երկրամաս ուղարկելով բանագնացներ: Երկիրն ազատագրելու և հայկական պետականությունը վերականգնելու խոստումներով՝ ռուսական կառավարությունը Արցախի մելիքներին մշտապես պահում էր իր ազդեցության ուղեծրում: Տարբեր երկրներում ապրող հայ հասարակական-քաղաքական գործիչները, ուշի-ուշով հետևելով տարածաշրջանային զարգացումներին, Արցախը համարելով հայկական պետականության վերակերտման հնարավոր օջախ, փորձում էին ի մի բերել մելիքական ուժերը՝ նրանց մղելով գործնական քայլերի:

Չնայած ծանր կորուստներին՝ համատեղ այդ ջանքերը տվեցին ցանկալի արդյունքներ: Ճիշտ է, մելիքներին և Գանձասարի կաթողիկոսներին 19-րդ դարի սկզբներին չհաջողվեց վերակերտել պետականությունը, այնուամենայնիվ, երկրամասը, հայտնվելով ռուսական կայսրության կազմում, Արցախի զարգացման և ազգային միատարրության պահպանման հեռանկարներ ուրվագծեց:

Վերջաբան

1. 17-րդ դարի վերջերին, հայ իրականության մեջ համատարած կորուստների և հուսահատության պայմաններում, Արցախի մելիքական տների ներկայացուցիչները և Գանձասարի կաթողիկոսները, որպես հայկական կորուսյալ պետականության լավագույն ավանդույթների կրողներ, նոր էջ բացեցին հայ ազատագրական շարժումների պատմության մեջ: Արցախի մելիքները և Գանձասարի կաթողիկոսները, նախանձախնդիր իրենց իրավունքների ու ազատությունների վերահաստատմանը, 17-րդ դարի վերջերին և 18-րդ դարի սկզբներին մշակեցին հայ ժողովրդի ազատագրության ռազմավարությունը, որը ենթադրում էր, սեփական ներուժին ապավինելով, Ռուսաստանի աջակցությամբ, վերականգնել հայկական թագավորությունը: Գանձասարի Պետրոս կաթողիկոսը հայ իրականության մեջ առաջինն ուրվագծեց ռուսական կողմնորոշման նախաշավիղը, որին նոր քաղաքական ընթացք հաղորդեցին Իսրայել Օրին և Արցախի մելիքները:

Զինված պայքարի միջոցով ոչ միայն հայության ինքնության փրկման, այլև ազատության նվաճման և պետականության վերակերտման գաղափարի հայտնաբերումը հայության համար նոր արժեհամակարգի ստեղծման ելակետ դարձավ: Արցախի գործիչների համար անընդունելի էր միայն աղերսագրերի միջոցով, «բարեկամ» երկրների աջակցությամբ հայրենիքի ազատագրման՝ մինչ այդ բյուրեղացած կարծրատիպը:

Երկրի ներքին կյանքում Եսայի կաթողիկոսի եռանդուն կազմակերպական ձեռնարկները, արտաքին ճակատում ակտիվ դիվանագիտական փնտրտուքները, հոգևոր դասի, մելիքների և ժողովրդի համախումբ ներդաշնակ գործողությունները համայն հայության համար, Հայոց արևելից նահանգները տվյալ ժամանակահատվածում դարձրին հավատի և հույսի կերոններ: Ազատագրական պայքարի գործիչների համար Արցախը դարձավ յուրօրինակ հավաքատեղի:

Արցախի ռազմաքաղաքական անվտանգության պահպանումը, ինքնիշխանության վերականգնման անհրաժեշտությունը երկրամասի հոգևոր ու աշխարհիկ տերերի մեջ ձևավորեց այն գիտակցությունը, թե հնարավոր չէ ապահովել հայկական տարանջատ գոյությունն ու զարգացումը, եթե իրենք չմիավորվեն և չգործեն որպես մեկ ամբողջություն: Արցախահայ իրականության մեջ օրեցօր գերիշխող էր դառնում ողջ Հայաստանի քաղաքական ինքնորոշման՝ Հայոց թագավորության վերականգնման ձգտումը: Այդ առանցքի շուրջն էլ ծավալվեցին 18-րդ դարի և 19-րդ դարի սկզբների հայ իրականության կարևոր պատմական իրադարձությունները:

2. Հայ հասարակական-քաղաքական կյանքի աշխուժացման գործին և նոր զարգացումներին իր ուղղորդիչ դերակատարումով, 1720-ական թվականներից սկսած, առանձնապես կարևորվում է Արցախի մելիքների և, մասնավորապես Գանձասարի կաթողիկոսության ազդեցությունը: Եթե համաժողովրդական շարժում կազմակերպելու նպատակով նախորդ ժամանակահատվածում նրանք հիմնականում բավարարվում էին ազգային ազատագրական գաղափարների տարածումով և կազմակերպական բնույթի հարցերի լուծումով, ապա 1720-ական թվականների սկզբներից այդ նույն ուժերը գործնականորեն ձեռնամուխ եղան զինված պայքարի միջոցով Արցախում հայոց պետականության վերականգնմանը: Իրագործվեց Եսայի Հասան-Ջալալյանի «Նոր նորոգման» տեսլականը: Արցախահայությունն, առանց դրսի օգնության ոչ միայն դիմակայեց լեզգիական և թուրքական արշավանքներին, այլև թոթափեց պարսկական լու-

ծը: Այդ պայքարի ընթացքում Արցախի գործիչները հայոց պետականության վերականգնման հեռանկարն սկսեցին կապել տարածաշրջանով հետաքրքրված Ռուսաստանի հետ: Ցարական արքունիքը հմտորեն օգտագործեց մահմեդականների լծից հայ ժողովրդի ազատագրվելու ձգտումը: Բնականաբար, կայսերական ծավալապաշտ նկրտումներ ունեցող ցարական արքունիքի արտաքին քաղաքական հայեցակետում չէր մտնում Հայաստանի անկախության վերականգնման խնդիրը: Ռուսաստանը, հանդես գալով որպես քրիստոնյաների հովանավոր, ընդամենը փորձում էր Այսրկովկասի հաշվին ընդարձակել իր սահմանները՝ այդ հարցում ապավինելով Վրաստանի և Արցախի մելիքությունների օժանդակությանը:

3. 1730-ական թվականների սկզբներին ցարական արքունիքը, համաձայնության գալով շահի հետ, մի առ ժամանակ հետաձգելով տարածաշրջանային ծրագրերի իրագործումը, Այսրկովկասը թողեց Պարսկաստանի տիրապետության տակ: Արցախի մելիքները, հակաթուրքական ճակատ հարդարելու նպատակով, ստիպված սկսեցին համագործակցել Իրանի նոր տիրակալ Նադիրի հետ՝ ծնունդ տալով հայկական մի նոր ինքնավար միավորի՝ Խամսայի մելիքություններին: Արցախում տնախների հիմքերի վրա ծնված վարչաքաղաքական նոր միավորը, որպես հայոց պետականության արտահայտության ձև, գոտեպնդելով լեռնաշխարհի զինավառ հայությանը, մոտակա տասնամյակներում դարձան հայ ազգային ազատագրական շարժման նոր օջախներ՝ ամրացնելով հավատը միասնության և հաղթանակի համար:

4. 18-րդ դարի երկրորդ կեսին Արցախում տեղի ունեցած քաղաքական նոր վերադասավորությունները՝ Ղարաբաղի խանության ասպարեզ գալը և դրա հետևանքով ստեղծված

հայ հանրության ծանր, անտանելի վիճակն ու մելիքների իրավունքների սահմանափակումը պատճառ են դառնում ազգային ազատագրական պայքարի աննախադեպ վերելքին և հայկական թագավորության վերակերտման գաղափարի վերակենդանացմանը: Տարբեր երկրներում ապրող հայ հասարակական-քաղաքական գործիչները, ուշի ուշով հետևելով տարածաշրջանային զարգացումներին, Արցախը համարելով հայկական պետականության վերակերտման հնարավոր օջախ, փորձում էին ի մի բերել մելիքական ուժերը՝ նրանց մղելով գործնական քայլերի:

Պարսկական իշխանություններն ու Իբրահիմ խանը, հանձին Արցախի մելիքների և Գանձասարի կաթողիկոսի, տեսնում էին դեպի Այսրկովկաս ռուսների մուտքն ապահովող ուժի, ուստի ամենադաժան և հետևողական ձևով փորձում էին վերացնել հայկական պետականության վերջին բեկորները:

Ցարական արքունիքը, Արցախի մելիքությունների մեջ տեսնելով կազմակերպված իրական կառույցների և հավատարիմ դաշնակիցների, նրանց հետ մշտական կապեր էր պահպանում՝ վերջիններիս առաքելով նամակներ, հրովարտակներ, երկրամաս ուղարկելով բանագնացներ: Երկիրն ազատագրելու և հայկական պետականությունը վերականգնելու խոստումներով՝ ռուսական կառավարությունն Արցախի մելիքներին մշտապես պահում էր իր ազդեցության ուղեծրում:

Ցարական արքունիքը, հմտորեն օգտագործելով հայության ակնկալիքները, իր արտաքին քաղաքական ծրագրերի իրագործման համար, առավելագույնս նպատակաուղղելով մելիքների զինական ուժը, 19-րդ դարի սկզբներին տարածաշրջանում ապահովեց գերիշխող դիրք:

5. Հայ ժողովրդի ջանադիր մասնակցությամբ՝ ռուսական զենքի հաղթանակներն ամբողջականացվեցին 1813թ հոկտեմբերի 12-ին Գյուլիստանի հաշտության պայմանագրով: Անկախ նրանից, թե ցարական իշխանություններն Այսրկովկասում ինչ նպատակներ էին հետապնդում, դրանք, այնուամենայնիվ, համապատասխանում էին Ղարաբաղի հայության ազատագրական ձգտումներին:

Գյուլիստանի պայմանագիրը մեր ժողովրդի համար պատմական անանցանելի իրողություն է: Այն մի ավելորդ անգամ վկայում է, որ Ղարաբաղն առանձին ազգային-պետական միավորի կարգավիճակով է անցել Ռուսաստանի տիրապետության տակ: Հետևաբար, ինչպես ներկայիս Ադրբեջանը կազմող տարածքները, այնպես էլ ԼՂՀ մաս հանդիսացող շրջանները Ռուսաստանին են անցել հավասար իրավասուբյեկտային կարգավիճակով: Ուրեմն, եթե խորհրդային կայսրության փլուզումից հետո վերոհիշյալ երկիրը իրեն իրավունք է վերապահում ստեղծել ազգային պետականություն, այդ նույնից օգտվում է նաև Ղարաբաղը: Գյուլիստանի պայմանագիրը կարող է քաղաքական ուղենիշ հանդիսանալ ԼՂՀ արտաքին քաղաքականության և դիվանագիտության սկզբունքների մշակման համար: Այն, բացի քաղաքական պատճառաբանություններից, ունի նաև իրավական ամբողջացված դաշտ՝ մեր օրերի թելադրած տեսակետի առումով: ԼՂՀ ճանաչման իրավական կողմի առաջնային քայլն անպայման պետք է կապել Գյուլիստանի պայմանագրի հետ:

Այստեղ Ադրբեջանը հանդես է գալիս որպես երկրորդական դեմք: Հիմնական կնճիռը Ղարաբաղ-Ռուսաստան կապի վրա է, որովհետև, կամա թե ակամա, Ռուսաստանն ինքը եթե հիմա կանգնած է իր պետականության կայացման ճանապարհին և այն փորձում է իրականացնել քաղաքակիրթ չափանիշներով, չի կարող խուսափել իր պատմության իրավա-պայմանագրային հիմունքներից: Այսինքն՝ հաշվի նստելով այդպիսի հիմունքներից մեկի՝ Գյուլիստանի պայմանագրի հետ, Ռուսաստանը պիտի կողմնորոշվի ստացած ժառանգության նկատմամբ: Իսկ պետա-իրավական ժառանգությունը ոչ թե հպանցիկ երևույթ է, այլ տվյալ տերության գոյության ընթացքում մշակված պետական շահերի ամբողջություն: Հետևաբար, եթե Գյուլիստանի պայմանագրով Ղարաբաղն ինչ-որ չափով ինքնուրույնացված միավոր է Հայաստանի համար, ապա Ադրբեջանի մասին խոսք անգամ լինել չի կարող:

Գյուլիստանի պայմանագրի քաղաքական-իրավական ուժի արտահայտություններից մեկն էլ այն է, որ այդ պայմանագիրը պաշտպանության կարիք չունի: Խուսափումը նրանից՝ նրան առնչվող ցանկացած պետության կողմից ուղղված է հենց իր դեմ: Որովհետև կիսատ-պռատ ուժեղ-մշտական պետություն չի լինում, այլ լինում է հզոր երկիր, որի կառուցման հիմքում դրվում են քաղաքակրթության կողմից մշակված պետական-քաղաքական սկզբունքներն ամբողջությամբ:

Ճիշտ է, մելիքներին և Գանձասարի կաթողիկոսներին 19-րդ դարի սկզբներին չհաջողվեց վերակերտել պետականությունը, բայց, միևնույն ժամանակ, երկրամասը, հայտնվելով ռուսական կայսրության կազմում, Արցախի զարգացման և ազգային միատարրության պահպանման հեռանկարներ ուրվագծեց:

Վահրամ Բալայան

ԱՐՑԱԽԱՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ 17-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՑ ՄԻՆՉԵՎ 1813Թ.

Տեխ. խմբագիր՝ Լիլյա Գրիգորյան

Հանձնված է շարվածքի 15.06.2013 թ.:
Ստորագրված է տպագրության 5.09.2013 թ.:
Տառատեսակ Arial LatArm: Թուղթ՝ օֆսեթ:
Տպագրական 7.75 տպ. մամուլ: Տպաքանակ՝ 150:

ԱրՊՀ հրատարակչություն